

13-14(371-372)

12.05.2014

Հրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինասարություն եւ գլխավոր, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՄԻԱՍԻՆ ԿԵՐՏԵՆՔ ՄԵՐ ԷՆՏԱԳԱԿ ԶԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԲԱՐՁՐ ԱՃՏԱՐԱԿԸ

Սայիս՝ հաղթանակների ամիս. սա չպիտի ընդունել որպես միայն նշանաբան կամ բարոզական պատառ, թեպետ հենց այս ամսվա հետ են կապված մեր ամենակարևոր հաղթանակները՝ Ավարայրից մինչև Շուշի: Հայ ժողովրդի հազարամյա պատմությունը ցույց է տվել, որ մենք հաղթել ենք այն ժամանակ, երբ միաբան ենք եղել, ուս ուսի և իրար նեցուկ: Այս իմաստով, մայիսը տարվա մյուս ամիսների շարքում կարելի է առանձնացնել, առաջին հերթին, միասնության ու միաբանության անտրոհելի խորհրդով, առանց որի հազիվ թե կարողանայինք հաղթանակներ նվաճել Ավարայրում, Սարգսրապատում կամ թե Շուշիում:

Մեծ փիլիսոփայի հայտնի դրույթը, ըստ որի՝ հաղթանակի համար պետք է երեք բան՝ ոգի, հաց և զենք, հնարավոր է դարձյալ միակամության դեպքում: Հատկապես ոգին, որը փիլիսոփան առաջնային էր համարում, միաբանության համաձուլյ դրսևորումն է և կարող է զորեղ լինել բացառապես մեր հավաքական կերպարի մեջ, որին մենք կոչում ենք ֆիդայի, ազատամարտիկ, հայ զինվոր...:

Ճակատագիրը հայի համար այսպիսի ուղի է կանխանշել, նաև ուսուցանելով մշտագոյության ծանր դասը: Բայց մենք ոչ թե պիտի անցյալին նայենք ցավի և անխոսանքի միջով, այլ դարերում թողած մեր հպարտության ծվենները համբերատար հավաքենք ու անբողջացնենք՝ մեզ հետագա հաղթանակների նախապատրաստելով:

Պատմությունը մեզ մի ուրիշ դաս էլ է տվել՝ հաղթանակը պահելն ավելի դժվար է, քան այն նվաճելը: Այս համատեքստում ավելի է շեշտվում ազգի միասնության հրամայականը, որովհետև ամենարժեք է տևական հարբած մնալ հաղթության բերկրանքով: Հիշենք ու չնոռանանք, որ՝ «քնում են գետերն ու քամին, սակայն չի քնում երբեք թշնամին», իսկ մեր աշխարհագրական դիրքն այնպիսին է, որ պարտավորված ենք միշտ զգոն լինել, թույլ չտալ, որ իրար ապավեն մեր ուսերը թեկուզ անձնա չափով հեռանան իրարից: Մի փոքրիկ ճեղքն անգամ բավական է, որպեսզի օձակերպ ոսխի սողոսկի մեր մեջ, և այդժամ ստիպված կլինենք նոր ավարայրներ մղել: Իսկ եթե, այնուամենայնիվ, Ավարայրի \$ ապա միայն՝ Մասիսի փեշերին, Սասունում և Իզմիրում, Վանում ու Մուշում: Համեմատությունն այս դեպքում, կարծում ենք, շատ տեղին է. հրեաները մեկուկես հազարամյակ անց իրենց պետությունն են հիմնել նախնայաց հողում՝ բազմամիլիոն արաբական աշխարհի աչքի առաջ...:

Շուշին վերջին նվաճումը չէ, այն նոր սկիզբ է, փառքի մի հարթակ, որի վրա պետք է աստիճան առ աստիճան կերտվի մեր հետագա հաղթանակների բարձր աշտարակը: Այդ աստիճաններով բարձրանանք միասին՝ սերնդեսերունդ փոխանցելով ազգի միասնության դրոշմը: Ի՝ հեծուկս ուրուլիքների և իլիամների, բոլոր նրանց, ովքեր փորձում են անտեսել արցախցու ազատ կամարտահայտության իրավունքը, ձևացնում, թե չեն ճանաչում ու չեն ընդունում Արցախի Հանրապետության հպարտ գոյությունը աշխարհի մյուս պետությունների շարքում: Հանուն Ազատամարտում նահատակված հայ քաջորդիների, որոնց անունները մի-մի հուշածան են մեր հուշերի պանթեոնում:

Մայիս՝ հաղթանակի և միասնության ամիս. այս երկուսի հզոր խորհրդով հենվենք անցյալի վրա, կառուցենք ներկան ու ապահովագրենք մեր լուսավոր ապագան:

Շնորհավոր բոլորիս եռատոնը:

«ԼՍԱՐԱՐ»

ԵՌԱՏՈՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ



Եռատոն... Երանելի տառա-կապակցում, նոր բառաբարդում հայոց լեզվի բառապաշարում, նոր տարբերություն արցախյան երիտասարդ պետականության կերտման ճանապարհին, նոր միտք, պանծալի տոն, որ միախմբում է մեր հոգիները, որ հպարտությամբ է լցնում մեր սրտերը: Խորանում են ժողովրդիս պատմության ակունքներում, փորձում գտնել միասնական ու հաղթական այս տոնի խորհուրդը:

Եռատոնը հայացք են հառում դեպի Արցախյան գոյամարտի փառավոր անցյալը, դեպի անառիկ բերդաքաղաքի՝ արծվամիտ Շուշիի ազատագրումը և պատմության ամենանշանակալից ու հերոսական էջերում հպարտանում Մեծ Հայրենականի ցնծալի հաղթանակով:

Խորհուրդը մեծ է ու խորին, քանզի այս հաղթանակները հարյուրների համար էին, նրա ներկայի ու գալիքի համար էին, այսօրվա համար էին, որ բուրաստան հորձնենք մեր կոնկրետական հողը, որ տրակտորը հերկի խոնջացած հողը, որ շինարարը քարը քարին դնի, որ ազգային դպրոցում գրեզա ոսկեղենիկ հայերենը, որ այս մի բուռ հողում հայը ապրի ու աղոթի միմիայն հայերեն: Դրա համար են իրենց ծաղիկ կյանքը գոհել մեր քաջարի մարտիկները, և որ ունենանք ազատ ու անկախ

Արցախ, տոկուն ու կայացած բանակ:

Այստեղից էլ ծնվել է եռատոնը: Զգիտեմ, նախախնամության մատը խա՞ռն էր այս տոնի հյուսման ճանապարհին, թե՛ դա մեր հմուտ ու բանիմաց հրամանատարների ծրագրած, նախորդ պլանավորած գործողության արդյունքն էր, որ Շուշիի ազատագրումը հանրակամ Մեծ Հայրենականի հաղթանակի օրվա հետ: Երևի Աստված է այդպես կամեցել, երկի օգնել է այն խորհրդավոր աղոթքը, որ կատարել են մեր ազատամարտիկները նախքան օպերացիան սկսելը: Օգնել է, որպեսզի համալրվեր հերոսների շարքը, որպեսզի ավելանար բազմաթիվ այն շքանշանների ու պարգևների թիվը, որոնք զարդարում են մեր պապերի կուրծքը, որ հպարտանալու շատ ու շատ առիթներ բացվեին, և ինչու էլ, խոնարհումն ու հիշատակի պահերը կրկնապատկվեին: Դեռ սրա մեջ է եռատոնի խորհուրդը, ինչը մեզ՝ արցախցիներին համար դարակազմիկ ու պատմական նշանակություն ունեցավ:

Իմ հիշողության մեջ դեռևս թարմ է այն գիշերը, երբ մեր հերոսներն ազատագրում էին Շուշին: Լուսադեմին, երբ մարտն ավարտվեց, ես դուրս եկա մեր տան դիմացի բլուրը և այնտեղից նայեցի դեպի այն կողմը, որտեղ

գտնվում է բերդաքաղաքը: Այսօրվա պես հիշում եմ, լռել էին թնդանոթները, այս ու այն կողմից օդ էին բարձրանում լուսավոր համազարկեր, և այդ ամենի վկան պարզկա լիալուսինն էր, որ լուսավորում էր երկնակամարը ու օգնում, որ հաղթության փառքով հարբած արծիվները Շուշիի բարձունքներում պարեն հաղթական «Քոչարին»:

Հպարտ եմ, որ այդ տարիների սերունդ են... Թող նախանձեն ինձ այսօրվա ութերորդիները, քանզի ես էի մատներս վրա հաշվում իմ ժողովրդի հաղթանակները, և բերկրում էր սիրտս, երբ մեկը մյուսի հետևից ազատագրվում էին մեր պապենական հողերը: Ես եմ տեսել այն իրական հերոս տղաներին, ովքեր այսօր չկան, որոնց այսօրվա սերունդը տեսնում է զրբերի էջերին կամ հուշատախտակների վրա:

Ինձ համար խորհումս է դառնում եռատոնը. մեծ ոգևորությամբ են իմ սաներին տանում դեպի գյուղի կենտրոնում վեր խոյացող հուշակոթողը և պատմում այն քաջերի մասին, ովքեր կռվի դաշտում կյանք չեն խնայել, և համոզված եմ՝ այսօրվա երիտասարդներն ընկածների սուրբ հիշատակը վառ կպահեն:

Այսօր երկնքից մեզ են նայում մեր տղաները, հետևում իրենց ազատագրած հայրենիքի բարգավաճմանը, ու կարծես նրանք սպասում են այն ժամին, որ երբ վտանգվի հայրենիքը, նորից գան ու միանան մեզ:

Հպարտ եմ իմ ժողովրդի անցյալով, քանզի նրա զավակները կռվեցին Կերչում, Լեմին-գրադում, Ուրալում, մարտնչեցին Բեռլինի մատույցներում և սովետական հայրենիքի ազատության հույսով վառված՝ հաղթության դրոշմ կանգնեցրին Ռայխստագի վրա: Հայ ժողովուրդը աշխարհի առաջադեմ մարդկության հետ ուս ուսի պայքարեց ֆաշիզմի դեմ և իր ներդրումն ունեցավ նրա ջախջախման գործում: Կռվելով հայրենիքից հեռու՝ հայը կռվում էր իր հայրենիքի անկախության,

իր ժողովրդի անվտանգության ապահովման համար: Հայը գիտեր, թե պարտության դեպքում ինչ ճակատագիր էր սպասվում Հայաստանին:

Անչափ մեծ է հայ զորավարների ավանդը թշնամուն ոչնչացնելու գործում: Դրա համար էլ մենք ունեցանք մարշալներ, կրկնակի հերոսներ և բազմաթիվ շքանշանակիրներ, որոնց շարքերը, ցավոք, նստանում են: Նրանց երակներում ամեն վայրկյան հոսում էր Հայկ Նահապետի, Քաջ Վարդան Մամիկոնյանի, Դավիթ Բեկի, Զորավար Անդրանիկի ու Նժդեհի արյունը...

Հիրավի, Արցախյան գոյամարտի ակունքներում կանգնած էին նոր ծիլեր տվող կանոնավոր զինված ուժերը, որոնք հետագայում պետք է համալրեին Պաշտպանության բանակի շարքերը: Եռատոնի մի թևն այսօր համարում ենք հենց այս բանակի կազմավորումը, որը տեղի ունեցավ սհեղ մարտերին զուգընթաց:

Նրա ձևավորումը բխեց իր բնորոշումն արցախցու ապրելու իրավունքը պաշտպանելու անհրաժեշտությունից և կենսական նշանակություն ունեցավ Արցախի համար: Սա մեծ հաջողություն էր, քանզի ինքնապաշտպանական կամավոր ջոկատների միավորումից ու սահմանափակ զինամթերք ունենալու պայմաններում մենք վերջապես ունեցանք մարտունակ, խրոխտ ու կայացած Պաշտպանության բանակ:

Ինքնին հասկանալի է դառնում եռատոնի խորհուրդը, որը մեծ է, անծիր... Հաղթանակի օր, Շուշիի ազատագրում և Պաշտպանության բանակի կազմավորման օր: Այս ցնծալի եռատոնին միմյանց շնորհավորելու պահը հասունացել է: Շնորհավորենք մեր ժողովրդին և ցանկանանք բարգավաճ կյանք, հաղթանակ օրեր ու պայծառ ապագա:

Քննություն ՍԱՀԱԿՅԱՆ Տոմոս միջև. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ԶԱՂԹՈՒԻ ԳՎԱԿԸՆՆԵՐԻ ՆՈՐԻՅՆ ԱՐՃՄԱՍԻՆ

Մայիսի 5-8-ը երևանի Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում կայացավ դպրոցակների առարկայական օլիմպիադայի հանրապետական եզրափակիչ փուլը «Նախնական զինվորական պատրաստություն»-ից: Սասնակցում էին ՀՀ մարզերի թիմերը, այդ թվում՝ Արցախից. 12 թիմ: Դպրոցական այս օլիմպիադան Հայաստանում անցկացվում է երրորդ տարին, Արցախում՝ երկրորդ: ԼՂՀ թիմը ձևավորվել է Ստեփանակերտում կայացած օլիմպիադայի հանրապետական փուլում տարբեր մրցածների գծով մրցանակակիր դպրոցականներից: Յոթ հոգուց բաղկացած թիմում ընդգրկված էին 5 տղա, երկու աղջիկ: Ալբերտ Աղաջանյան (հ. 10 հ/դ), Սամվել Պողոսյան (հ. 5 հ/դ), Սևակ Մովսիսյան և Գուրգեն Դանիելյան (Ք. Իվանյանի անվան ՈՄՎ), Մարատ Մուսայեյան (Մարտունու շրջ. Թաղավարդի մ/դ), Լիանա Իսախանյան (Մարտակերտի շրջ. Թալիշի մ/դ), Զվարթ Կարապետյան (Շահումյանի շրջ. Զարեքտարի մ/դ):

Թիմը պատրաստել և ղեկավարում էին զինղեկներ, պահեստագործ մայրը Արսեն Հարությունյանը (հ. 5 դպրոց) և պահեստագործ ավագ լեյտենանտ Վարուժան Աղաջանյանը (հ. 10 դպրոց): Օլիմպիադայի բացումը կատարեց ՀՀ

պաշտպանության նախարարությունից գեներալ-լեյտենանտ Մուրադ Սարգսյանը:

Մրցապայքարն ընթացավ ինը վարժությունների գծով՝ շարային պատրաստություն,

ներ: Վարժասարքի հրաձգությանը անձամբ ներկա էր ՀՀ պաշտպանության նախարարը՝ համոզվելու արցախցիների պատրաստվածությունը:

Եվ այսպես, երկրորդ տարին անընդմեջ, ՆՁՊ օլիմպիադայում հաղթող է ճանաչվում Արցախի թիմը: Մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությանը ներկա էր ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, որն էլ կատարեց պարգևատրումը: Նա շնորհակալություն հայտնեց Արցախի թիմին՝ բարձր պատրաստակամության և հաղթանակի համար՝ նրան պարգևատրելով գավաթով, իսկ անդամներին՝ առաջին կարգի դիպլոմներով, մեդալներով, ձեռքի ժամացույցներով, սպորտային պայուսակներով:

Նշենք, որ Արցախի թիմը նաև անհատական մրցածներում գրավել է 12 մրցանակային տեղեր:

Երկրորդ տեղում Տավուշի թիմն էր, երրորդ տեղում՝ Լոռու:

Արցախցի պատանի ռազմիկների փայլուն հաղթանակը գեղեցիկ նվեր է Մայիսյան եռատոնին:

Սեփ. լրատվություն

ԵՌԱՏՈՆ

ՓԻՏԱԺՈՂՈՎԸ ԱՌԻԹ՝ ՎԵՐԱՐԺԵՎՈՐԵԼՈՒ ԱՆՅՅԱԸ, ԱՐՏԱԶԱՅՏԵԼՈՒ ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏՄԱՆ ՄԵՐ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետական տարածաշրջանային համալսարանը և Շուշիի «Կաճառ» գիտական կենտրոնը մայիսի 5-ին համալսարանի նորաբաց պոեզիայի և գիտական նիստերի դահլիճում համատեղ անցկացրին գիտաժողով՝ «Եռատոնի խորհուրդը» խորագրով: Մասնակիցները նախ շնորհավորեցին դահլիճի բացման առթիվ: Ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Չակոբյանը, բացելով գիտաժողովը, նաև պարզաբանում տվեց, թե ինչու են տվել «Պոեզիայի և գիտական նիստերի դահլիճ» անվանումը, այդ կապակցությամբ բերելով Շուշիի համալսարանի իմաստախոսությունը՝ փոքր-ինչ ձևափոխած: Ընդհանրապես, արվեստը, փիլիսոփայությունը գնում են դեպի գիտություն, գիտությունն իր հերթին գնում է դեպի արվեստն ու փիլիսոփայությունը: Եվ արվեստ-գիտություն հարաբերության դաշտում ձևավորվում է ժամանակի, պատմության, տիեզերքի խորհուրդը:



Վարդան Չակոբյանը և Մարգարիտ Գրիգորյանը խորհուրդում: Մեծ սրահում իրականացվեց «Պոեզիայի և գիտական նիստերի դահլիճ» անվանումը, այդ կապակցությամբ բերելով Շուշիի համալսարանի իմաստախոսությունը՝ փոքր-ինչ ձևափոխած: Ընդհանրապես, արվեստը, փիլիսոփայությունը գնում են դեպի գիտություն, գիտությունն իր հերթին գնում է դեպի արվեստն ու փիլիսոփայությունը: Եվ արվեստ-գիտություն հարաբերության դաշտում ձևավորվում է ժամանակի, պատմության, տիեզերքի խորհուրդը:

Ի՞նչ խորհուրդ ունի մեզ համար եռատոնը: Բնականաբար, գրվում են գրքեր, ստեղծվում արվեստի գործեր, և այդ ամենը յուրովի անդրադարձ է մեր ընդհանուր խնդիրներին: Գիտաժողովը հրավիրելով՝ կազմակերպիչները նպատակ են հետապնդել, որ գիտական միտքը կարողանա կատարել այն պարբերացումը, ինչի կարիքը զգացվում է և համակարգի այն ծավալում նյութը, որն այսօր գոյություն ունի հրապարակի վրա: Իսկ համակարգման այդ գործընթացում զխակվող դերակատարություն ունի մեր գիտական միտքը, որովհետև այդ իրադարձություններից յուրաքանչյուրն իր խորհուրդն ունի՝ թե՛ Հայրենական մեծ պատերազմում մեր ժողովրդի տարած հաղթանակը, թե՛ Շուշիի ազատագրումը, թե՛ մեր բանակի ստեղծումը: Ասում են, որ հաղթելն ավելի հեշտ է, քան ձեռք բերածը պահելը և զարգացնելը: Այսօր ինչ խնդիրներ են կանգնած մեր ժողովրդի առաջ, ինչ պատգամներ ունի եռատոնը. այս հարցերի շուրջ քաղաքական, մանկավարժական, բանասիրական վերլուծություն կատարեցին և որոշակի հետևություններ արին գիտաժողովի մասնակիցները շուրջ տասը զեկուցումներում:

Արցախի մանկավարժական հանրությանը, կարծում ենք, հետաքրքիր կլինի բանախոսների զեկուցումներին ծանոթանալը՝ այն բանի հաշվառումով, որ դրանք կօգտագործվեն դասավանդման ընթացքում:

ՂԱՐԱԲԱՐՅԱՆ ԿԱՐԳՎՈՐՈՒՄ. ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴՅՈՒՆԱԿԱՆՆԵՐ

Վահրամ ԱՌԱՆՆՅԱՆ, ԼՂԳ Աժ պատգամավոր, արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ

Քաղաքական որոշ շրջանակներ համարում են, որ 1994թ. մայիսի 5-ի Բիշքեկի արձանագրությունը և դրան հաջորդած մայիսի 12-ի հրադարձի մասին համաձայնությունը սխալ էր, անհրաժեշտություն կար պատերազմը հաղթականորեն շարունակել մինչև վերջ: Բայց պատմությունը արձանագրում է այն, ինչ եղել է, և նշում ենք, որ քսան տարի առաջ մայիսի 5-ին Բիշքեկի արձանագրությունն է ստորագրվել, որին լիիրավ մասնակցություն է ունեցել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Սակայն դարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացը սկսվել է ավելի վաղ: 1992թ. մարտին ստեղծվել է Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Մինսկի խումբը, որը կոչված էր կարգավորելու Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտությունը: Այս բանակցություններն ընթացել են բավականին բարդ պայմաններում: 1992թ. ամռանը բանակցությունները սկսվել են Հոնոլուլուի, որին մասնակցել է նաև ԼՂԳ պաշտոնական պատվիրակությունը, բայց պաշտոնական պատվիրակության կարգավիճակը մինչև վերջ չձգարեցին հանգանակներով պայմանավորված՝ ԼՂԳ Գերագույն խորհրդի պատվիրակությունը ստիպված է եղել թողնել Հոնոլուլուի բանակցությունները: Այնուհետև տարբեր ձևաչափերով բանակցություններն ընթացել են մինչև 1997 թվականը, որից հետո ձևավորվել է Մինսկի խումբը, որը հակամարտության բոլոր երեք կողմերին է ներկայացրել երկու առաջարկություն. առաջինը փաթեթային տարբերակ է, որը նախատեսում էր ԼՂ կարգավիճակի որոշում Ադրբեյջանի կազմում՝ որպես ինքնավար կազմավորում: Երկրորդ՝ փուլային տարբերակում խոսք չկար ԼՂ կարգավիճակի մասին, այլ խոսվում էր հետագա բանակցությունների մասին: Փաթեթային տարբերակը մերժվել է Ադրբեյջանի կողմից, մերժվել է ՀՀ-ի և բնականաբար՝ ԼՂԳ-ի կողմից: Փուլային տարբերակը մերժվել է Ադրբեյջանի և Հայաստանի կողմից, ԼՂԳ-ի կողմից, ինչը հանգեցրել է 1997թ. աշնանը ՀՀ ներքաղաքական ճգնաժամին և 1998թ. ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականին: Այնուհետև բանակցություններն ընթացել են ուղղակի Ադրբեյջանի և Հայաստանի նախագահների միջև: Բանակցությունների այդ փուլը հայտնի է «Փարիզյան սկզբունքների շուրջ բանակցություններ» անվամբ, նախատեսում էր 2001թ. գարնանը Միացյալ Նահանգների հովանու ներքո Քի Ուեստում, ստորագրել համաձայնագիր: Այն տապալվել է Ադրբեյջանի նախագահի ոչ հետևողական դիրքորոշման պատճառով: Բանակցությունների այս փուլը հայտնի է նաև որպես տարածքների փոխանակության սկզբունք, որը միջանցքների փոխանակման մասին է: Փարիզյան և Քի Ուեստյան սկզբունքները,

սակայն, ենթադրում են ԼՂԻՄ-ի տարածքի միացում Հայաստանին՝ ունենալով համարժեք միջանցքներ Լաչինում և Մեղրիում: Այս տարբերակը նույնպես հաջողություն չի ունեցել: Դրանից առաջ, 1995թ. Մինսկի խումբը ներկայացրել էր ընդհանուր պետության առաջարկություն, որն Ադրբեյջանի կողմից մերժվել է և հետագա բանակցություններում այլևս չի քննարկվել: 2004-2007 թվականների բանակցություններն ավարտվել են 2007թ. Մինսկի խմբի կողմից ներկայացված Մադրիդյան սկզբունքներով: Այդ փուլի էական հանգրվաններից մեկը 2008թ. ՌԴ նախագահի անձնական նախաձեռնությամբ եռակողմ հանդիպումների կազմակերպումն է, որ սկզբնավորվել է, այսպես կոչված, Մայնդորֆյան հռչակագրով, ինչպես նաև 2011թ. Կազանի հանդիպումը, երբ հույս ունեին, որ կողմերը կարող են համաձայնություն ստորագրել Մադրիդյան սկզբունքների շուրջ, բայց Ադրբեյջանը հերթական անգամ տապալեց այս գործընթացը և այսօր բանակցային գործընթացը որպես այդպիսին, գոյություն չունի: Իհարկե, Մինսկի խմբի համաձայնագրի ներքին փորձում են տպավորություն ստեղծել, թե բանակցությունները շարունակում են, բայց դա ավելի շուտ խաղաղության պահպանմանն ուղղված գործողություններ են, քան խնդրի կարգավորմանը կերպարներ են ստեղծում: Բնականաբար, հայտնի է, թե խոսքն ինչի մասին է. Մադրիդյան սկզբունքները հրապարակվել են մասնակիորեն, միջազգային տերմինոլոգիայով՝ տարածքներ՝ կարգավիճակի փոխարեն բանաձևով, որի դեպքում խոսք է գնում ԼՂ որոշ տարածքներ Ադրբեյջանին վերադարձնելու, իսկ ԼՂ կարգավիճակը հանրաքվեով որոշարկելու մասին, բայց քանի որ Ադրբեյջանը չի ընդունում հանրաքվեի գաղափարը, այդ բանաձևը չի գործում:

ԼՂԳ-ն իր վերաբերմունքը 2008թ. պաշտոնական արտահայտել է Մադրիդյան սկզբունքների վերաբերյալ՝ Ազգային ժողովի քաղաքական ուժերի ընդունած հայտարարությամբ: Այսօր ԼՂԳ-ն բանակցություններին մասնակցում է միջնորդավորված կերպով, Մինսկի խմբի միջնորդներն այցելում են Ստեփանակերտ, հանդիպումներ են ունենում ԼՂԳ նախագահի հետ: 2007թ. նախագահական ընտրություններից հետո ԼՂԳ իշխանությունների տեսակետն ավելի հստակ է դրսևորվել ԼՂ կարգավորման հարցում: Այն հետևյալն է՝ ԼՂ փաստացի անկախությունը միջազգայնորեն պետք է ճանաչեն, և վերադարձ չկա նախկին սահմանները: Սա պաշտոնական ձևակերպում է, որով ԼՂԳ-ն պատրաստակամություն է հայտնում մաս կազմելու բանակցային գործընթացին:

Միևնույն ժամանակ ԼՂԳ-ն պաշտոնապես հայտարարել է, որ առանց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լիարժեք ու իրավահավասար մասնակցության չի կարող լինել ԼՂ խնդրի կարգավորման արդյունավետ բանակցային գործընթաց:

Ի՞նչ հեռանկարներ կան: Այսօր աշխարհաքաղաքական շատ բարդ իրավիճակ է, և բնականաբար, հույս ունենալ, թե Մինսկի խումբը ներկայացնող՝ Միացյալ Նահանգները, Ֆրանսիան և Ռուսաստանը գործելու են կոնսենսու-

սային համաձայնեցված մոտեցմամբ՝ ես անձամբ, որպես փորձագետ, այդ հույսերը չեմ կիսում, կարծում եմ, որ Մինսկի խմբի ձևաչափը ներքին ճգնաժամ է ունենալու՝ կապված Ուկրաինայում Ղրիմի դեպքերի և այսօր Ուկրաինայի հրաձեռված ծավալվող իրադարձությունների հետ, որը հանգեցրել է Արևմուտքի և Ռուսաստանի դիմակայությանը: Այս իրավիճակում ավելի հավանական է թվում ԼՂԳ փաստացի անկախության ճանաչումը որևէ պետության կամ պետությունների խմբավորման կամ միջազգային իրավունքի որևէ այլ սուբյեկտի կողմից կամ կոնսենսուսային մոտեցումը այդ հարցում: Վերջին երեք տարվա իրադարձությունները խոսում են այն մասին, որ միջազգային հանրությունը, այդ թվում նաև եվրոպական հանրությունը, ավելի շատ համոզում է փաստացի իրավիճակի օրինականացմանը, որը ԼՂԳ-ի փաստացի անկախության միջազգային ճանաչումն է, քան իրավիճակի փոփոխությանը: քանզի իրավիճակի ցանկացած փոփոխություն կարող է անկանխատեսելի հետևանքներ առաջացնել մեր բավական բարդ տարածաշրջանում: Եվ ավելի փոփոխություններ են ընդգծել, որ ԼՂԳ նախագահի կողմից բազմիցս արված հայտարարությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կարգավիճակի, սահմանների հարցում և նրա ներկայումս կազմակերպման տեսակետ է, որը մենք պարտավոր ենք պաշտպանել մեր բոլոր ձեռնարկումներում՝ անկախ այն բանից՝ գիտական, քաղաքական, թե՛ այլ բնույթի ձեռնարկումներ են: Մենք՝ որպես խաղաղության կողմնակից, մեր կամքը դրսևորել ենք 1994թ. մայիսյան հրադարձի տարվա մեր համաձայնությունը: Բայց ստորագրելով հրադարձի մասին համաձայնագիրը՝ ԼՂԳ-ն լիիրավ պատասխանատվություն է կրում մեր տարածաշրջանի համար: Լեռնային Ղարաբաղի Լանդայթությունը Հարավային Կովկասում կայացած ռազմաքաղաքական և պետական սուբյեկտ է, որի շահերը պաշտպանում է ոչ միայն ինքը՝ ԼՂԳ-ն, այլև ՀՀ-ն՝ որպես միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտ, որպես ՄԱԿ-ի անդամ պետություն: Այնպես որ, կարծում եմ, ԼՂԳ-ի փաստացի անկախության ճանաչումը այսօր դրսևորվող այն միակ հեռանկարն է, որի շուրջ աշխատում է մեր ամբողջ հայությունը՝ աջակից ունենալով իր այն գործընկերներին, ովքեր պատկասնում են արդարությունը և ժողովրդավարությունը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՆ ԱՐՑԱՔԱՆՔԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶՏԱՍԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԸ

Վահրամ ԲԱՆՆՅԱՆ, ԼՂԳ Աժ պատգամավոր, ԱրԴԳ դասախոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

- Այսպիսի մի ճշմարտություն կա՝ ազատությունը, անկախությունը և առավել ևս, պետականությունը ոչ մի ժողովրդի չեն նվիրվում: Սա օրինակաբանություն է, որ մենք պետք է ընկալենք: Այդ ամենը ձեռք է բերվում պայքարի, արյան միջոցով: Մեր ժողովուրդը դա պարզ գիտակցեց,

երբ հասկացավ, որ իր արդար պահանջը ժողովրդավարական ճանապարհով լուծում չի ստանա: Եվ ուղիք ելավ ու ոչ միայն ձեռք բերեց իր ազատությունը, այլև կերտեց իր պետականությունը: Մեր պայքարը նախընթաց ժամանակ է ունեցել, և պետք է նկատենք, որ Արցախի պայքարը նախապատասխանաբար պայքարի այս վերջին փուլը կարելի է որպես սկզբնափուլ համարել 1813թ. Գյուլիստանի հաշտության պայմանագիրը և դրանից հետո ընկած ժամանակահատվածի պատմական իրողությունները: 1813-1918 թվականները, կարելի է ասել, ազատագրական պայքարի նախապատասխանական փուլն էր: Դա այն ժամանակահատվածն էր, երբ ցարական կառավարությունն ամեն կերպ փորձում էր վերջ տալ արցախյան ինքնավարությանը, արգելակել մեկիքական կարգի գոյությանը և ընդհանրապես, պայքար էր մղում մտավորականության դեմ, ամեն կերպ ձգտում էր Ղարաբաղը բնակեցնել ռուսներով: Եվ 1817-1917 թթ., այսինքն՝ մեկ հարյուրամյակի ընթացքում պատմական Արցախի տարածքում ստեղծեցին 29 ռուսական բնակավայրեր, և պատահական չէ, որ Դենիկինը երբեմն այդ ամենը ներկայացնում էր այսպես. «Ռուսկի մուզան»: Նպատակն այս էր՝ քայլ առ քայլ տիրել այն տարածքներին, որտեղ հայ մարդը դարերի ընթացքում ապրել է, ստեղծել բարձրարժեք մշակութային արժեքներ: Ի պատիվ արցախահայության՝ պիտի ասել, որ ինչպես ասում են, նա լուռ ու մունջ և ձեռքերը ծակած չնստեց, ժողովուրդը պայքարում էր իր անկախության և ազատության համար: Նույնիսկ պետական մի խորհրդակցության ժամանակ Գոլիցինը ներկայացնում է Նիկոլայ 2-րդին Արցախում ստեղծված իրավիճակի մասին և խորհուրդ է տալիս ցարին, որ լավ կլինի Ղարաբաղի, մասնավորապես՝ Շուշիի բնակչությանը ամբողջապես արտաքսել Սիբիր, որովհետև հեղափոխական խմբումներն օրեօր ավելի են մեծանում: Բայց գեներալ Կուրոպատսկինը (պաշտպանությանը նախարարն էր) դա անխոհեմ քայլ համարեց՝ ասելով, որ միայն հեղափոխականներին տեղափոխել և հարցը դրանով լուծել: Օրեօր, տարի առ տարի հեղափոխականությունը նոր լիցք էր ստանում, և դրա արդյունքում 1917թ. Արցախում ունեցանք պետականություն՝ մինչև Անդրկովկասում երեք հանրապետությունների ծնունդը: Երբեմն մենք ասում ենք, որ այդ երեք հանրապետությունները՝ Ադրբեյջանը, Հայաստանը և Վրաստանը պարտադրված էին անկախություն ձեռք բերել, ինչը չի կարելի ասել Ղարաբաղի մասին, որովհետև 1917թ. արդեն այդպիսին ունեինք, ու այդ ամենը պահպանվեց մինչև խորհրդային կարգերի ստեղծումը: Եվ չնայած Ղարաբաղը վերցրին ու տվին Ադրբեյջանին, բայց խորհրդային բոլշևիկյան գաղափարախոսությունը և նրա ներկայումս չէին կարող հաշվի չառնել պատմական այն ժամանակահատվածը, որ ապրել է արցախահայությունը, և մենք ձեռք բերինք ինքնավարություն: Սա նույնպես պետականության մի ձև է, որը մեր պատմագիտության մեջ դեռևս լավ չի ուսումնասիրված. պետք է դա էլ ասել, քանի որ ինչպես Ադրբեյջան էր խորհրդային պետության մի մաս, այդ նույն ձևով էլ Ղարաբաղն էր խորհրդային պետության մաս: Սեկի կարգավիճակը մի քիչ բարձր էր, մյուսինը՝ ցածր: Խորհրդային ժամանակահատվածում հայ մարդու մեջ ապրեց ազատության գաղափարը, միտքը, որը նորից մարմին ստացավ Արցախյան շարժման ժամանակահատվածում: Ճիշտ է, մենք այդ շարժումը սկսեցինք մայր Հայաստանին միանալու կարծիքով, բայց սա միջանկյալ մի փուլ է, երբ մենք ձեռք ենք բերում անկախ պետականություն: Ամրապնդվելուց հետո, համոզված եմ, կունենանք տարածաշրջանում հայկական մի հզոր պետություն, որը ժամանակի ընթացքում կինտեգրվի աշխարհին, և Աշխարհը այդ ամենը կընկալի:

ԵՌԱՏՈՆԻ ԽՈՐՀՈՐԴԸ ԵՎ ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՐՏԱԳՐԱՎԵՐՆԵՐԸ

Միեր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «Կաճառ» գիտական կենտրոնի ղեկավար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մայիսի 9-ը մեծ խորհուրդ ունի մեր ժողովրդի համար: Նախ, որ Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի օրն ենք նշում, որը մեծ նշանակություն ունեցավ մեր ժողովրդի համար: Եթե Մեծ Հայրենականում հայ մարտիկները չնարտեցին դարչնագույն ֆաշիզմի դեմ, ապա կանաչ ժանտախոսը և սպառնում էր Հայաստանին. Թուրքիան սպասում էր Ստալինգրա-

ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ

Ա Յ Ս Տ Ե Ղ Գ Ո Ր Ծ ՈՒ Մ Է

Մայիսյան եռատոնի կապակցությամբ Արցախի ուսումնական հաստատություններում անցկացվեցին արիության դասեր, կազմակերպվեցին տարաբնույթ միջոցառումներ՝ պատի թերթերի լույսընծայում, շարադրությունների մրցույթներ, ռազմամարզական խաղեր, հանդիպումներ Հայրենական մեծ և Արցախյան պատերազմների վետերանների հետ, այցելություններ գործնասեր և այլն:

Ստեփանակերտի մի քանի դպրոցների օրինակով ներկայացնենք դրանք:

ՀԻՇՈՒՄ ԵՆ, ՄԵԾԱՐՈՒՄ, ԵՐԴՎՈՒՄ, ԴԱՍԵՐ ԲԱՂՈՒՄ

Ավ. Իսահակյանի անվան հ. 10 հիմնական դպրոցում Մայիսյան եռատոնին նվիրված միջոցառումների սկիզբը ազդարարեց մի հետաքրքիր և առանձնահատուկ հանդիպում: Դպրոցի տնօրեն Սերգեյ Շահրամանյանի մտահղացմամբ՝ փոխտնօրեն Անահիտ Սարգսյանը կազմակերպել էր մեծարժան ցերեկույթ՝ նվիրված Արցախյան պատերազմի մասնակից իրենց դպրոցի աշխատողներին: Մենք միշտ ասում ենք, որ Արցախյան զոյանարտի տարիներին տղամարդ ուսուցիչները դասարանը փոխարինեցին ռազմադաշտով, գրիչը՝ զենքով, նրանց դասը խրամատներում էր, որտեղ կողք կողքի մարտնչում էին ուսուցիչ և աշակերտ: Մեծարժան ցերեկույթի հյուրերը տանտերերն էին՝ դպրոցի աշխատողները: Աշակերտները ծափերով դիմավորեցին ֆիզկուլտուրայի ուսուցիչներ Լեոնիդ Ավանեսյանին, Յուրի Ավագյանին, որոնց սովոր էին տեսնել մարզական հագուստով և առաջին անգամ տեսան նրանց զինվորական տոնական համազգեստով՝ կուրծքները զարդարված մարտական մեդալներով: Պատվավոր հյուրերի շարքում էին նաև զինղեկ Վարուժան Աղաջանյանը և վարպետ Գավրուշա Ասրյանը:

1992-ի սեպտեմբերից մինչև 2001թ. փետրվարը ծառայել է Կենտրոնական պաշտպանական շրջանում: Մասնակցել է Մարտակերտի, Աղդամի, Ֆիզուլիի, Ջաբրայիլի և Կուբաթլուի ուղղություններում մղված մարտերին:

2001թ. փետրվարից մինչև 2001-ի հունիս ծառայել է ՊԲ ինժեներական ծառայությունում՝ որպես բաժանմունքի պետ: 2001թ. հունիսից մինչև 2011-ի փետրվար Քրիստափոր Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանի պետն էր:

Յուրի Ավագյանը մարտական ուղին սկսել է «Շուշվա Վաչոյի» խմբում՝ 1990

պատերազմ էր և վերադարձավ հայրենին պաշտպանելու: Անուղղակիորեն խաչվել են ուսուցիչ-աշակերտ մարտական ուղիները: Բոլորն էլ (վարպետ Գավրուշան պատերազմն ավարտվելուց հետո է միացել հ. 10 դպրոցի կուլեկտիվին՝ դառնալով նրա «շտապ օգնությունը») մարտական փառավոր ուղի են անցել, մասնակցել բազմաթիվ մարտերի, վիրավորվել մի քանի անգամ, արժանացել մեդալների: Այդ բոլորի մասին տեղեկանում ենք աշակերտների և ուսուցիչների կողմից տրված հարցերին օրվա հերոսների ժխտ պատմածներից, որովհետև համեստորեն էին ներկայացնում իրենց կատարածը:

Երեկ աշակերտ և ուսուցիչ, պատերազմի ժամանակ՝ մարտընկերներ, այսօր՝ գործընկերներ. կարճ այսպես կարելի է գծել նրանց անցած ուղին:

Ի՞նչ զենքերով ազատագրեցին Շուշին և առհասարակ, ի՞նչ զենքեր կային այն ժամանակ, ինչպիսի՞ն է այսօր մեր բանակի պաշտպանունակությունը՝ աշակերտներին այսպիսի շատ հարցեր էին հետաքրքրում: Շուշին ազատագրողները ասացին, որ ունեին քիչ տեսակի զենքեր, և մեր բանակի պաշտպանունակությունը չի կարելի համեմատել նույնիսկ տասը տարի առաջվա ունեցածի հետ, հիմա մենք անհամեմատ ուժեղ ենք, և թշնամին չի համարձակվի ոսնձգություն անել մեր սահմանների նկատմամբ, իսկ անելու դեպքում ստանում է արժանի հակահարված: Դրանում իրենք համոզվել են՝ լինելով առաջին գծում: Վերջերս երկու օր անցկացրին առաջնային գծում, խորհուրդներ տվեցին, իրենց փորձը հաղորդեցին զինվորներին և այնտեղից թարմ նորություններ բերեցին աշակերտներին:

Այսօրվա 15-16 տարեկանները պատրաստ են կրկնելու Արցախյան պատերազմի իրենց հասակակիցների սխրանքը: Հարցի առնչությամբ զինղեկ Վ. Աղաջանյանը վստահեցրեց՝ պատրաստ են, որովհետև նրանք դպրոցից արդեն պատրաստ անցնում են բանակ՝ թե՛ ֆիզիկապես և թե՛ մարտական-հոգեբանական առումով: Որպես տարիքով ամենամեծը՝ իրեն ուղղված՝ ի՞նչ կմաղթի նոր սերունդին հարցին վարպետ Գավրուշայի պատասխանն այս էր՝ անշուշտ՝ խաղաղություն: Բայց, Աստված չարացե, եթե մորից պատերազմ սկսվի, իրենք առաջինը նրա դեմ կկանգնեն, վստահեցրեց վետերանը:

Դպրոցի տաղանդաշատ աշակերտ Անդրանիկի երգերը, շնորհաշատ աղջկաների պարերը, կրտսեր սերժանտ Գարիկ Կելեյչյանի՝ ապագա հայրենյաց պաշտպաններին ուղղված խոսքն ավելի մեծացրին դասի լիճումն քնածող հայրենասիրական ոգին:

Արցախյան պատերազմն արդեն պատմություն է դառնում, այն կերտողներից շատերն անմահացել են իրենց սխրագործություններով, և նրանց անունները սերունդների շուրթերին են, ապրողներս պարտավոր ենք միշտ հարգել, անմար պահել նրանց հիշատակը: Բայց քիչ չեն նաև նրանք, որոնց սխրանքների մասին քիչ գիտենք, բայց որոնցով ամբողջանում է մեր պատմությունը:

Նրանք անհատականություններ են, որոնց ապրած կյանքն ու պայքարը դարձել է դաս և ուղղորդում է սերունդներին՝ ազգափրկության և պետականակերտման վեհ գործուն: Այդ անձանց շարքերում նաև մեր ուսուցիչներն են, ովքեր անցնելով Արցախյան պայքարի դժվարին ճանապարհով, այսօր մեզ հետ են ու շարունակում են յուրովի ծառայել Արցախին:

Նրանց «հայտնաբերելը» բոլորիս գործն է:



թվականից: 1992թ. մայիսին ստեղծվում է Պաշտպանության բանակ, և խումբը վերանվանվում է Շուշիի զուև (իրամանատար՝ Վաչագան Իշխանյան), որտեղ ծառայել է մինչև 1996-ի ապրիլ ամիսը: 1996թ. ՊԲ հրամանատար Սամվել Բաբայանի հրամանով տեղափոխվում է 71-րդ զուևարտակ և նշանակվում հատուկ նշանակության ջոկատի ֆիզիկական պատրաստության պետ: 1998-ից 4-րդ պաշտպանական շրջանում է՝ Ասկերանի գնդում՝ որպես վաշտի անձնակազմի գծով տեղակալ: 2000-ին ծառայությունը շարունակել է Մատաղիսում՝ 6-րդ պաշտպանական շրջանում և Տոնաշենում: 2001-ին տեղափոխվել է Ջաբրայիլ՝ որպես հակատանկային դիվիզիոնի անձնակազմի գծով տեղակալ, որտեղ ծառայել է մինչև 2004 թվականը: Ջորաքրվելուց հետո աշխատանքի է անցել հ. 10 հիմնական դպրոցում՝ որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ:

Վարուժան Աղաջանյանը մարտական ուղին սկսել է 1992թ., Սարիբաբայից (Լաչին), մասնակցել է Աղդամի, Մարտակերտի, Քարվաճառի մարտական գործողություններին:

Գավրուշա Ասրյանի մարտական ուղին սկսվել է 1988-ից՝ ազատագրական պայքարի առաջին իսկ օրից: Ընդունվել է Շուշիի հատուկ ջոկատ, մասնակցել Շուշիի ազատագրմանը, Շուշիի գործնատուն ծառայել է մինչև զինադադարը: Հետո տեղափոխվել է ուսումնական գործնաս, և այսօր աշխատում է դպրոցում՝ որպես վարպետ:

Մինչև պատերազմը Լեոնիդ Ավանեսյանը և Յուրի Ավագյանը աշխատում էին այս դպրոցում, մեկը՝ զինղեկ, մյուսը՝ ֆուտբոլի մարզիչ: Իսկ Վարուժան Աղաջանյանն այն ժամանակ սովորում էր դպրոցում և նրանց աշակերտն էր: Վերջինս գնացել է իր ուսուցչի ճանապարհով, դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի Բաբաջանյանի անվան ռազմամարզական վարժարան, ավարտելուց հետո խորհրդային այլ քաղաքներում չի շարունակել ուսումը, որովհետև Արցախում



Հանդիպմանը ներկա էին աշակերտներ. օրվա հյուրերի գործընկերները, շեֆ գործնասի զինվորներ: Ասել է թե՛ կողք կողքի նստած էին հաղթանակած Արցախի երեք սերունդի ներկայացուցիչները: Առաջին սերունդը ներկայացնում են Արցախյան պատերազմի թոհուրեհով անցած մարդիկ՝ օրվա հերոսները և նրանց տարեկիցները: Երկրորդ սերունդն այսօրվա հայրենյաց պաշտպաններն են, որոնք կանգնած են մեր սահմաններում և պահպանում են մեր անդրորդ: Նրանք զինվորներն են: Երրորդ սերունդը աշակերտներն են, որ վաղը պետք է պաշտպանեն այն նվաճումները, որ ձեռք են բերվել հերոսների այրյան գնով:

Փոխտնօրեն Անահիտ Սարգսյանը հակիրճ ներկայացրեց օրվա հերոսների անցած մարտական ուղին, որն ավելի ամբողջացավ տնօրեն Ս. Շահրամանյանի՝ իր աշխատողների մասին տված հետաքրքիր տեղեկություններով, աշակերտների և նրանց միջև ծավալված հարցուպատասխանով:

Փոխգնդապետ Լեոնիդ (Լյոնյա) Ավանեսյանը իր մարտական ուղին սկսել է պարտիզանական ջոկատներից՝ 1991թ. նոյեմբերից: Մինչև 1992թ. մարտը ծառայել է 6-րդ վաշտում, որի կազմում մասնակցել է Կրկնամի, Մալիբայլուի, Խոջալուի ազատագրմանը, Աղբուլաղ և Դահրազ գյուղերի պաշտպանությանը: 1992-ի մարտից մինչև 1992թ. սեպտեմբեր ծառայել է Բաղաբայի վաշտում և նրա կազմում մասնակցել Շուշիի ազատագրմանը (Կարագյալի ուղղությամբ), Դահրազի և Քարազլիի պաշտպանության մարտերին:

ՄՐԱԶԱՆ ՈՒՄՏ

«Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ և մեռնում դրա պակասից» Գ. Նժդեհ



Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցը ավանդույթներ շատ ունի: Քանի՞ տարի է, ավանդույթ դարձած՝ հայկազունների երդման արարողությունը տեղի է ունենում հանդիսավոր պայմաններում, հերոսների հուշարձանի մոտ: Առհավատյան մայիսի 3-ին ԽՍՀՄ կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի արձանի մոտ դպրոցի 9-րդ, «ա», «բ», «գ», «դ», «ե» դասարանների աշակերտների մասնակցությամբ տեղի ունեցած՝ հայկազունների երդման արարողությունն էր:

Ներկա էին դպրոցի տնօրենը, փոխտնօրենը, դասղեկներ, ուսուցիչներ, ծնողներ, հյուրեր:

Միջոցառումը սկսվեց համակարգող խորհրդի ղեկավար Մ. Դանիելյանի հանդիսավոր զեկույցով: Նա մասնավորապես ասաց, որ հայկազունները պատրաստ են հայրենիքի խիզախ պաշտպաններ կոչվելու:

Բացման խոսքով հանդես եկավ դպրոցի ՄԿԱԳՏՏ ժ. Գրիգորյանը: Նա ուրախությամբ փաստեց, որ որպես արծվիկներ՝ աշակերտները մեծավ մասամբ կատարել են իրենց տված երդումը, նշեց նաև Մոնթե Մելքոնյանի անվան «Ձաթոնք» մանկապատանեկան կազմակերպության խմբի որոշումը՝ 9-րդ դասարանցիներին ընդունել հայկազունների շարքերը: Ավագ դասարանի աշակերտները հանդիսավոր պայմաններում երդվեցին լինել հայրենիքի խիզախ պաշտպաններ, բարձր պահել կազմակերպության անունն ու պատիվը, հետևել նրա կանոնադրությանը, ակտիվորեն մասնակցել ընդունվող որոշումներին, համագործակցել այլ մանկապատանեկան կազմակերպությունների հետ:

Փոխտնօրեն ժ. Գրիգորյանի հրահանգով հնչեց հայկազունների նշանբանը. «Հայկի հետնորդն ենք և կրողը հայկյան ոգու»:

Իրոք, հայկյան արիական ցեղի և նրա մարտիրոսված դյուցազունների ոգով պետք է դաստիարակվի այսօրվա սերունդը: «Ցեղը՝ դա աստվածանման Հայկն է, որն իր եռացող զայրույթը եռթևան աղեղի մեջ դրած՝ թշնամուն կուղղե», - ասում է Գ. Նժդեհը:

Հայկազուններին բարեմաղթանքի խոսքեր ուղղեց դպրոցի տնօրեն Ա. Պողոսյանը: Նա կոչ արեց լինել պատասխանատու, կարգապահ ու աշխուրջ, դառնալ մեր շենշող Արցախի պիտանի մարդիկ:

Տիկին Պողոսյանը տղաներին, որպես ապագա զինվորների, պատգամեց իրենց ամուր բազուկներով պաշտպանել մայր հողը, դառնալ նրա կենդանի սուրն ու վահանը՝ Արցախում հար խաղաղություն լինելու համար:

Լավագույն ցանկություններով ու բարի մաղթանքներով հանդես եկավ դասղեկ Լ. Բաբայանը: Նա խորհուրդ տվեց երեք չղթել տված երդումը, լինել հայրենիքի արթուն պահակներ:

Միջոցառման վերջում 9-րդ դասարանցիները համակարգող խորհրդի օգնությամբ արծվիկների տարբերանշանները փոխեցին հայկազունների կործանաչաններով:

Իրոք օրը տոնական էր, պատասխանատու, պարտավորեցնող:

Կարինե ՄԿՐՏՅԱՆ ԱրՊՀ լրագրություն, 4-րդ կուրս

ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ

Ա Ս Ե Ն Ա Շ Ջ Ո Ր Զ Ե Ն Ք Ը ՝ Ո Գ Ի Ն

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՆ ԱՊՐՈՒՄ ԵՆ ԱՅՆՏԵՂ ՈՐՏԵՂ ԼԱՎ ՍԻՐՏ ԿԱ

ՓԱՌՔԻ ԵՌԱՏՈՆ

- Ջոկ, հավասար, զգաստ...
- Հարգարժան տնօրեն ընկեր Պողոսյան, Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի Մոնթե Սելթոնյանի անվան դպրոցական կազմակերպության Համլետ Արզումանյանի և Համլետ Պողոսյանի անվան 3-րդ «գ» դասարանի աստղիկների խումբը պատրաստ է Մայիսյան եռատոնին նվիրված միջոցառմանը...

կայացրեց հերոսների կենսագրությունը. երկուսն էլ զոհվել են շատ երիտասարդ՝ չհասցնելով ընտանիք կազմել: Այսօր նրանց մեծ ընտանիքը դարձել է իրենց դպրոցը, աշակերտները, որոնք երդում են տալիս նրանց անունով: Ասել է թե՛ նրանց կյանքը շարունակվում է այս փոքրիկների



մեջ ու այդպես կշարունակվի: Ուրեմն՝ նրանք անմահ են:

Եվ նրանց մասին անցյալ ժամանակով չեն խոսում ո՛չ առաջին ուսուցչուհին՝ դպրոցի փոխտնօրեն ժաննա Գրիգորյանը, ո՛չ համադասարանցիները, ո՛չ էլ հարազատներն ու մարտընկերները: Քանզի նրանք շարունակում են ապրել բոլորիս հոգում, ներկա են դպրոցի բոլոր միջոցառումներին, նրանց հայրենասիրական ոգին թևածում է դպրոցի կամարների ներքո, երեխաները կոփվում են նրանց հայրենասիրությամբ: Եվ նրանք են լինելու թշնամուն հաջորդ զարկ տվողները՝ եթե նա փորձի ոտնձգություն անել մեր սահմանների նկատմամբ:

Իսկ 4-րդ «ա» դասարանի (դասղեկ՝ Ս. Մկրտչյան) ներկայացրած գրական-երաժշտական համադրությամբ հանդգեց, որ փոքրիկների հոգում ամուր հունդեր է նետել հայրենասիրության զգացումը, և իրենց մեջ կրում են հայրենիքի կերպարը: Հայրենիքի մասին պատկերացում ունեն ոչ միայն զրբերից, պատմություններից, այլև իրենց աչքով տեսած տեսարժան վայրերից, որտեղ և հանուն որի մարտնչել են հայ քաջորդիները: «Ես սերունդն եմ հաղթողի», - հայարտ ասում են նրանք, և հավատում են, որ հաղթողի փոխանցումներում հաջորդը նրանք են:

Այս խորագիրն էր կրում Ստեփանակերտի Շ. Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում մայրաքաղաքի Խ. Աբովյանի անվան հ. 1 հիմնական դպրոցի 4-րդ «գ» դասարանի աշակերտների ներկայացրած միջոցառումը: Նրա էությունը հակիրճ նախ ներկայացրեց դասվար - Միրզոյանը, այնուհետև փոխնիփոխ շարունակեցին աշակերտները:

Երեխաները լավ են սերտել Եռատոնի խորհուրդը՝ Հայրենական մեծ պատերազմում մեր պապերի տարած հաղթանակ, նրանց արժանավոր սերնդի կողմից ազատագրված Շուշի և ԼՂՀ մարտունակ պաշտպանության բանակի ստեղծում: Իսկ դրանց նախորդել են հայ ժողովրդի բազմաթիվ մայիսյան հաղթանակներ: Եռատոնի էությունն արտահայտեցին ասմունքի, երգի ու պարի զեղեցիկ ներկայացմամբ: Փոքրիկ-

մայրը զենքը տալիս որդու ձեռքը և ուղարկում ռազմի դաշտ: Այդպես են եղել միշտ հայոց մայրերը, այդպիսիք նստած էին և դահլիճում. բոլորի հայացքներում հուզմունքի արտահայտության հետ հպարտության զգացումն էր տիրում՝ այդ, արժանավոր, հայրենասեր սերունդ է մեծանում, որը պատրաստ է ամուր ձեռքերում պահել մեր հաղթանակները, բազմապատկել և հզորացնել ու շենացնել




նրանց հարազատների հետ, կատարում փոխայցելություններ:
Հուշ-ցերեկույթին ներկա էին նախադասարանների հարազատները, համադասարանցիներ, որոնցից մի մասն այսօր ՊԲ ներկայացուցիչներ են: Նախորդ օրը դասվար Կարինե Եզանյանը և դասարանի ծնողական կոմիտեի անդամները եղել են նախադասարանների ընտանիքներում, հարազատների հետ այցելել շիրիմներին: Ստեղծել են նրանց նվիրված դասարանական անկյուն և հուշալրամ: Ցերեկույթին դասվարը ներ-



հայրենիքը:
Դպրոցի տնօրեն Ռոմելա Դադայանը, նախկին տնօրեն Սվետլանա Դավթյանը և մյուսները շնորհակալություն հայտնեցին աշակերտներին՝ վաղվա օրվա հանդեպ վստահության ներշնչելու, մանկավարժական կոլեկտիվին՝ հայրենասերների սերունդ դաստիարակելու համար:
Հարթակն ու տոնական միջոցառումն ամբողջացավ աշակերտների կողմից ներկայացրած երգերի և վարդերի զեղեցիկ փնջերի մատուցմամբ: Բացիկները բովանդակում էին նաև երդման խոսքեր. «խոստանում ենք տեր կանգնել մեզ ժառանգվող երկրին՝ մեր հայրենիքին և կանցնեք ամեն հնարավորը, որ այն բարգավաճի ու ավելի զորանա»:

ՄԵՆՔ ՍԵՐՈՒՆՈՆ ԵՆՔ ՀԱՂԹՈՂԻ

Ս. Մաշտոցի անվան հ. 4 հիմնական դպրոցի նախաեռատոնյան օրերը հազեցած էին ուշագրավ միջոցառումներով. շաբաթօրյակ եղբայրական զերեգմանոցի շրջակայքում, ծանրոցներով այցելություն շեֆ-զորամաս, ուժի և ռազմական գիտելիքների կիրառման մրցահանդես դպրոցի բակում, գրական-զեղարվեստական ցերեկույթ Շուշիի ազատագրման ժամանակ առաջինը քաղաք մտած՝



իրենց իսկ ձեռքերով ստեղծած հ. 442 «Տանկ-հուշարձանի» մոտ: Դա փառաբանություն էր վասն Ազատ Արցախի նահատակվածների, ազատամարտիկների, 1941-1945թթ. հաղթանակը կռած հայ քաջորդիների, հայոց մայրերի, այսօր մեր սահմաններն անառիկ պահող զինվորների, մեր հայրենին շենացնող ժողովրդի:
Դպրոցի տնօրեն Ա. Սիմաայանը շնորհավորեց դպրոցականներին, շեֆ-զորամասի ներկայացուցիչներին, դիրքապահ զինվորներին և ողջ հայ ժողովրդին՝ Մայիսյան ցնծակի հաղթանակների առթիվ:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍՏՈՒՓԱՏԵՍ

Երևանի ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղը Եռատոնյան միջոցառմանը ներկայացել էր ամբողջ կազմով: Տոնականորեն զարդարված դահլիճում, ՀՀ և Արցախի դրոշմներ ձեռքներին՝ հաղթանակը փառաբանող պաստառներով նստած էին աշակերտները և ուսուցիչները: Հերթով բեմահարթակ են դուրս գալիս բոլոր 11 դասարանները ներկայացնող աշակերտական խմբերը: Նրանց երգը, պարը, բեմանախանգումը խորհրդանշուն էին Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակը, Շուշիի ազատագրումն ու ԼՂՀ պաշտպանության բանակի ստեղծումը:
Դա Հայրենական մեծ պատերազմի տարիների և այսօրվա հայրենասիրական երգերի յուրատեսակ ստուգատես էր: Դահլիճում ցնծության հրավառություն էր:
Հանդեսը վարում էր փոխտնօրեն Ս. Մկրտչյանը: Դպրոցի տնօրեն Ա. Ներսիսյանի խոսքը պարունա-

կում էր շնորհավորանքներ, մաղթանքներ և պատգամ՝ մեր հավատարմությունը զոհվածների հիշատակին կլինի նրանց արյունով ազատագրված հողը, երկիրը շենացնելն ու հզորացնելը:



Արիության դասերն, անշուշտ, իրենց պտուղները կտան:
Նման պահերին մտորում են՝ եթե ԵԱՀԿ Մինսկի խմբի ներկայացուցիչներն առաքելություն իրականացնեին Արցախի դպրոցներում, և եթե հնար լիներ մի հրաշքով միավորել հանրապետության բոլոր դպրոցների երգչախմբերի այս օրերին հնչած ձայները, աշխարհը կհանդգներ, որ փոքրիկ այս հողակտորում՝ աշխարհի կողմից դեռևս չճանաչված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կա մի բանակ, որի դեմ թույլ են մարդկության հնարած բոլոր զենքերը, քանզի այստեղ գործում է ամենահզոր զենքը՝ ոգին, որը ծնվում է յուրաքանչյուր մանուկի մեջ՝ դեռ մինչև նրա լույս աշխարհ գալը:

Սեփ. լրատվություն

ԷՔՍՏՈՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«7» մայիսի 2014թ.

N 99-Մ

ք. Ստեփանակերտ

2014 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ԶԵՎՈՎ (ԷՔՍՏՈՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 23.10.2012 թվականի N 181-Ն հրամանով հաստատված՝ «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի» 20-րդ կետի և 23-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝

ՀՐԱՍԱՅՈՒՄ ԵՍ.

1. Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննություններ անցկացնելու իրավունքը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Ստեփանակերտի Ա.Սախարովի անվան հ.8 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին:
2. Քննություններն անցկացնել մայիսի 26-ից հունիսի 26-ն ընկած ժամանակահատվածում՝ ըստ կից աշխատակարգի և ժամանակացույցի (Հավելված 1, Հավելված 2):
3. Սույն հրամանի կատարման ապահովումը հանձնարարել նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը (պետ՝ Ռ. Մուսայելյան)
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում են ինձ:

Ա. ԱՍՐԱՆ

Հավելված 1
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2014 թվականի մայիսի 7-ի
N 99-Մ հրամանի

Հավելված 2
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2014 թվականի մայիսի 7-ի
N 99-Մ հրամանի

2014 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ԶԵՎՈՎ (ԷՔՍՏՈՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

1. Հիմնական կրթության վկայական ստանալու համար դրսեկները՝ «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, այլ օտար լեզու՝ դրսեկի ընտրությամբ), «Համաշխարհային պատմություն», բնագիտական՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Հայաստանի աշխարհագրություն» (դրսեկի ընտրությամբ) և «Ռուսաց լեզու, գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

1) Քննական թեստերը կազմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնը (այսուհետ՝ ԳԹԿ)՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Աշխարհագրություն», «Ինֆորմատիկա», «Տեխնոլոգիա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն» առարկաների քննությունները հանձնում են բանավոր: Քննական հարցատոմսերը կազմում են էքստեռն քննություններ ընդունող դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից, գնահատման 10 բալային համակարգով:

2. Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար դրսեկները՝ «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ այլ օտար լեզու՝ դրսեկի ընտրությամբ), «Համաշխարհային պատմություն», բնագիտական՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» (դրսեկի ընտրությամբ), «Ռուսաց լեզու, գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

1) Քննական թեստերը կազմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնը՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն» առարկաների քննությունները հանձնում են բանավոր: Քննական հարցատոմսերը կազմում են Դպրոցի համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 10 բալային համակարգով:

3. Դրսեկության ձևով (ավարտական՝ ուսումնական պլաններով նախատեսված առարկաներից) քննությունները դրսեկները հանձնում են համաձայն Հավելված 2-ի և Հավելված 3-ի:

4. Հարցատոմսերով կազմակերպվող բանավոր քննությունների անցկացման ժամանակ յուրաքանչյուր դրսեկ վիճակահանությամբ ստանում է առանձին առաջադրանք (հարցատոմս): Դրսեկը բանավոր քննություններին նախապատրաստվելիս կարող է կատարել գրավոր համառոտագրում:

1) Դրսեկության ձևով քննությունների արձանագրությունները և գրավոր աշխատանքները պահպանվում են Դպրոցում, ավարտական փաստաթղթերը ստանալուց հետո՝ մեկ տարի:

5. Հիմնական կրթության վկայականում և միջնակարգ կրթության ատեստատում ավարտական և պետական ավարտական քննական առարկաները գնահատվում են 20 բալային համակարգով, իսկ տարեկան գնահատականները նշանակվում են՝ 20 բալային համակարգից գնահատականները վերածելով 10 բալային համակարգի:

1) Բանավոր քննությունները գնահատվում են 10 բալային համակարգով և համարվում են տարեկան գնահատականներ:

6. Գնահատականները գրանցելիս գնահատման 20 բալային համակարգից 10 բալային համակարգին անցման համապատասխանությունը կատարվում է համաձայն հետևյալ սանդղակի՝

8-9 միավոր-4	16-17 միավոր-8
10-11 միավոր-5	18-19 միավոր-9
12-13 միավոր-6	20 միավոր-10
14-15 միավոր-7	

7. Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպելու և անցկացնելու գործընթացը վերահսկվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից:

Շանդորություն: Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպվում են «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգի և սույն աշխատակարգի պահանջների համաձայն:

Հիմնական կրթության վկայական ստանալու համար քննությունների կազմակերպման ժամանակացույց

Առարկա	քննության անցկացման եղանակը	քննությունների անցկացման օրերը
1. Ֆիզիկա		26.05.2014թ.
2. ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	բանավոր	29.05.2014թ.
3. Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	31.05.2014թ.
4. Հայոց լ. և գրակ.	գրավոր	02.06.2014թ.
5. Բնագիտություն	գրավոր	05.06.2014թ.
6. Տեխնոլոգիա	բանավոր	06.06.2014թ.
7. Հասարակագիտություն	բանավոր	07.06.2014թ.
8. Մաթեմատիկա	գրավոր	11.06.2014թ.
9. Ինֆորմատիկա	բանավոր	13.06.2014թ.
10. Համաշխարհային պատմություն	գրավոր	14.06.2014թ.
11. Օտար լեզու	գրավոր	16.06.2014թ.
12. Աշխարհագրություն	բանավոր	17.06.2014թ.
13. Հայոց պատմություն	գրավոր	19.06.2014թ.
14. Օտար լեզու- անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ ռուսերեն	գրավոր	20.06.2014թ.
15. Ռուսաց լեզու, գրականություն /ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար/	գրավոր	24.06.2014թ.
16. Բնագիտություն- Հայաստանի աշխարհագրություն Ֆիզիկա Քիմիա Կենսաբանություն	գրավոր	21.06.2014թ. 23.06.2014թ. 25.06.2014թ. 26.06.2014թ.

Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար քննությունների կազմակերպման ժամանակացույց

Առարկա	քննության անցկացման եղանակը	քննությունների անցկացման օրերը
1. Ֆիզիկա		26.05.2014թ.
2. ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	բանավոր	29.05.2014թ.
3. Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	31.05.2014թ.
4. Հայոց լ. և գրակ.	գրավոր	04.06.2014թ.
5. Հասարակագիտություն	բանավոր	07.06.2014թ.
6. Բնագիտություն	գրավոր	09.06.2014թ.
7. Մաթեմատիկա	գրավոր	12.06.2014թ.
8. Ինֆորմատիկա	բանավոր	13.06.2014թ.
9. Համաշխարհային պատմություն	գրավոր	14.06.2014թ.
10. Օտար լեզու	գրավոր	18.06.2014թ.
11. Օտար լեզու- անգլերեն, ֆրանսերեն, գերմ. ռուսերեն	գրավոր	20.06.2014թ.
12. Ռուսաց լեզու, գրականություն /ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար/	գրավոր	22.06.2014թ.
13. Հայոց պատմություն	գրավոր	24.06.2014թ.
14. Բնագիտություն - աշխարհագրություն Ֆիզիկա Քիմիա Կենսաբանություն	գրավոր	21.06.2014թ. 23.06.2014թ. 25.06.2014թ. 26.06.2014թ.

Քննությունների սկիզբը՝ ժամը 10:30-ին:

ԿԱՐԳ

Գրանցված է՝
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2014 թվականի մայիսի 6-ին
Պետական գրանցման համարը 1051443
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
Ա. Դանիելյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

« 30 » ապրիլի 2014 թ.

N 82 - Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 90-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի և «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի, 30-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետին համապատասխան՝

ՀՐԱՄԱՆՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 25-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման և ավարտման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մայիսի 4-ի N 74-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 90-Ն հրամանով հաստատված հավելվածում լրացնել նոր՝ 19.1 կետ՝

«19.1 Սույն կարգի 19-րդ կետով նախատեսված քննությունները չհանձնելու դեպքում 12-րդ դասարանի, ինչպես նաև 16 տարին լրացած 9-րդ դասարանի այն սովորողները, որոնց տարեկան գնահատականներն ամփոփվել են, ավարտական կամ պետական ավարտական քննություններից գնահատվել են 1-3 և (կամ) 1-7 միավոր կամ չեն մասնակցել ավարտական կամ պետական ավարտական քննություններին՝ կարող են հաջորդ տարի իրենց Հաստատությունում հանձնել քննություններ, ստանալ միջնակարգ կրթության ատեստատ կամ հիմնական կրթության վկայական:»:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության պետ Ռ. Մուսայելյանին և լիցենզավորման և իրավաբանական բաժնի վարիչ Ա. Ապրեսյանին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա. ԱՍՐՅԱՆ

Կ Ա Ր Գ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՅՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՅՄԱՆ, ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒՎՄԱՆ ԿԱՄ ԱՏԵՍԱԿՎՈՐՄԱՆ
ԱՆՅԿԱՅՄԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ԱՎԱՐՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություն) սովորողի փոխադրման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման կազմակերպման, ինչպես նաև մեդալի հավակնորդ շրջանավարտին մեդալով պարգևատրման և ուսումնական տարվա ընթացքում 180-240 ժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման գործընթացի կազմակերպման հետ կապված իրավահարաբերությունները՝ անկախ Հաստատության կազմակերպարարական ձևից և ենթակայությունից:

II. ՍՈՎՈՐՈՂԻ ԴԱՍԱՐԱՆԻՑ ԴԱՍԱՐԱՆ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԱՎԱՐՏՈՒՄԸ

2. 1-ին դասարանում սովորողը, փոխադրվում է հաջորդ դասարան՝ գիտելիքների անհրաժեշտ նվազագույնի յուրացման պայմանով՝ բնութագրման միջոցով:

Առանձին դեպքերում սովորողը կարող է կրկնել տվյալ ուսումնական տարվա դասընթացը՝

1) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) գրավոր դիմումի և Հաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ,

2) դասվարի հիմնավորված առաջարկության հիման վրա՝ Հաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ և ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) գրավոր համաձայնությամբ:

3. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարանների ուսումնական բոլոր առարկաներից տարեկան 4-10 միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան:

4. 4-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 1-ին աստիճանի) ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան և գիտելիքների ստուգումից 4-10 միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան:

5. 9-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 2-րդ աստիճանի) ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան՝ 4-10 միավոր և ավարտական քննություններից՝ 8-20 միավոր գնահատված սովորողը ստանում է հիմնական կրթության վկայական:

6. 12-րդ դասարանում (հանրակրթական հիմնական ծրագրերի 3-րդ աստիճանի

ավարտական դասարան) ուսումնական բոլոր առարկաներից տարեկան՝ 4-10 և պետական ավարտական քննություններից՝ 8-20 միավոր, ինչպես նաև «Ֆիզկուլտուրա» և ռուսերենով ուսուցմամբ դասարաններում «Ռուս գրականություն» առարկաների պետական ավարտական քննություններից 4-10 միավոր գնահատված շրջանավարտը ստանում է միջնակարգ կրթության ատեստատ:

7. Հաստատությունում որևէ առարկա չդասավանդվելու պատճառով տվյալ առարկայից գնահատական չունեցող սովորողը իր ցանկությամբ այդ առարկայից կարող է քննություն հանձնել էքստեռն կարգով: Այդ քննության արդյունքը հիմք է միջնակարգ կրթության ատեստատում տարեկան, իսկ քննական առարկայի դեպքում՝ քննական և տարեկան գնահատականներ նշանակելու համար:

8. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում մինչև երկու առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողի փոխադրման կամ ավարտման հարցը որոշվում է օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում, նրա հանձնած վերաքննությունների արդյունքներով: Վերաքննությունների առաջադրանքները նշակվում են Հաստատության համապատասխան մեթոդավորման կողմից:

9. 9-րդ դասարանի սովորողը, որի տարեկան՝ 1-3 և (կամ) ավարտական քննություններից՝ 1-7 միավորների ընդհանուր թիվը չի գերազանցում երկուսը, վերաքննությունները հանձնում է օգոստոսի 20-30-ը:

10. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ և 10-րդ դասարաններում վերաքննության արդյունքում մեկ կամ երկու առարկայից 1-3 միավոր գնահատված սովորողը՝

1) չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է դասընթացը կամ՝

2) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա փոխադրվում է հաջորդ դասարան՝ պայմանով, որ մինչև հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ավարտը պետք է հանձնի 1-3 միավոր գնահատված առնվազն մեկ առարկայի քննությունը, իսկ երկրորդը՝ մինչև 2-րդ կիսամյակի ավարտը: Սույն կետում նշված վերաքննությունները չհանձնելու դեպքում սովորողը կրկնում է սույն կարգի 10-րդ կետում նշված պայմանով փոխադրված դասարանի դասընթացը՝ անկախ տվյալ դասարանում ստացած գնահատականներից:

11. 11-րդ դասարանում վերաքննության արդյունքում մեկ կամ երկու առարկայից 1-3 միավոր գնահատված սովորողը՝

1) չի փոխադրվում հաջորդ դասարան և

կրկնում է դասընթացը կամ՝

2) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա փոխադրվում է հաջորդ դասարան՝ պայմանով, որ մինչև հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ավարտը պետք է հանձնի երկու առարկաների վերաքննությունները:

Սույն կետով նշված վերաքննությունները չհանձնելու դեպքում սովորողը կրկնում է սույն կետում նշված պայմանով փոխադրված դասարանի դասընթացը՝ անկախ տվյալ դասարանում ստացած գնահատականներից:

12. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարանների ուսումնական երեք և ավելի առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողները կրկնում են տվյալ ուսումնական տարվա դասընթացը:

13. 4-րդ դասարանի երեք և ավելի ուսումնական առարկաներից տարեկան և գիտելիքների ստուգումից 1-3 միավոր գնահատված սովորողը կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը:

14. 16 տարին չլրացած 9-րդ դասարանի և 19 տարին չլրացած 12-րդ դասարանի սովորողը կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, եթե՝

1) երեք և ավելի ուսումնական առարկաներից տարեկան 1-3 միավոր է գնահատվել,

2) ավարտական քննությունների ընթացքում 1-7 և տարեկան 1-3 միավորների ընդհանուր թիվը կազմում է երեք և ավելի,

3) վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ ուսումնական առարկայից ստացել է 1-7 միավոր:

15. Սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետի, 11-րդ կետի 1-ին ենթակետի, 12-րդ, 13-րդ, և 14-րդ կետերի համաձայն՝ հանրակրթական ծրագիրը կրկնող սովորողի համար ուսուցում կազմակերպելու նպատակով Հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագիտական խումբ:

Հիմք ընդունելով մասնագիտական խմբի կարծիքը և առաջարկությունները սովորողի փաստացի առարկայական գիտելիքների մասին՝ Հաստատության տնօրենը հաստատում է ուսումնական պլանով նախատեսված առարկաներից անհատական ուսուցման ծրագրեր և լրացուցիչ պարապմունքների ժամանակացույց:

16. Սովորողին ամառային առաջադրանք տալու կամ դասընթացը կրկնելու վերաբերյալ Հաստատության մանկավարժական խորհրդի որոշման մասին, տնօրենի հանձնարարությամբ, սովորողի ծնողին (օրինական ներկայացուցչին) տեղյակ է պահում դասընթացի մանկավարժական խորհրդի նիստից հե-

տո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր ծանուցմամբ:

17. 16-19 տարեկան 9-րդ դասարանի սովորողը ծնողի (կամ օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա կարող է թողնել Հաստատությունը, եթե՝

1) երեք և ավելի ուսումնական առարկաներից տարեկան 1-3 միավոր է գնահատվել,

2) ավարտական քննությունների արդյունքում 1-7 և տարեկան 1-3 միավորների ընդհանուր թիվը կազմում է երեք և ավելի ուսումնական առարկաներից,

3) վերաքննությունների արդյունքում առնվազն մեկ առարկայից ստացել է 1-7 միավոր:

18. 19 տարին լրացած՝ երեք և ավելի ուսումնական առարկաներից տարեկան 1-3 և (կամ) քննական 1-7 միավոր գնահատված 9-րդ և 12-րդ դասարանների սովորողը դուրս է մնում Հաստատությունից:

19. Մինչև 19 տարեկան 12-րդ դասարանի սովորողը, տարեկան 1-3 և (կամ) ավարտական քննություններից 1-7 միավոր գնահատված լինելու դեպքում (եթե ընդհանուր թիվը չի գերազանցում երկուսը), վերաքննություն է հանձնում՝ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Օտար լեզու», «Մաթեմատիկա», «Բնագիտություն» և «Հայոց պատմություն» առարկաներից՝ հուլիսի 2-8-ը և (կամ) օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում՝ իր Հաստատությունում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գնահատման և թեստավորման կենտրոն պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ԳԹԿ) քննական առաջադրանքներով, իսկ ուսումնական պլանով նախատեսված մյուս առարկաներից՝ իրենց Հաստատության մեթոդավորումների կողմից մշակված քննական առաջադրանքներով՝ օգոստոսի 20-30-ը:

19.1 Սույն կարգի 19-րդ կետով նախատեսված քննությունները չհանձնելու դեպքում 12-րդ դասարանի, ինչպես նաև 16 տարին լրացած 9-րդ դասարանի այն սովորողները, որոնց տարեկան գնահատականներն ամփոփվել են, ավարտական կամ պետական ավարտական քննություններից գնահատվել են 1-3 և (կամ) 1-7 միավոր կամ չեն մասնակցել ավարտական կամ պետական ավարտական քննություններին՝ կարող են հաջորդ տարի իրենց Հաստատությունում հանձնել քննություններ, ստանալ միջնակարգ կրթության ատեստատ կամ հիմնական կրթության վկայական:

(19.1 կետը լրացված է ըստ ԿԳ նախարարի 2014թ. ապրիլի 30-ի 82-Ն հրամանի)



ԿԱՐԳ

7 20. 19 տարին լրացած 9-րդ և 12-րդ դասարանների արական սեռի սովորողները քննաշրջանի ավարտից հետո տարեկան 1-3 և (կամ) քննական 1-7 միավոր գնահատված լինելու դեպքում դուրս են մնում Հաստատությունից: Այդ սովորողները իրավունք ունեն քննություն(ներ) հանձնել և հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ ստանալ:

1) զորացրվելուց անմիջապես հետո իրենց ուսումնառած Հաստատությունում՝ ավարտական, պետական ավարտական քննությունների և (կամ) վերաքննությունների համար սահմանված ժամկետներում,

2) ընթացիկ տարվա գարնանային զորակոչին զինվորական ծառայության մեկնածուները՝ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում՝ զորամասի հրամանատարության համաձայնությամբ՝ իրենց Հաստատությունում,

3) ծառայության ընթացքում՝ զորամասի հրամանատարության համաձայնությամբ՝ իրենց Հաստատությունում, ավարտական, պետական ավարտական քննությունների և (կամ) վերաքննությունների համար սահմանված ժամկետներում:

21. 19 տարին լրացած 9-րդ և 12-րդ դասարանների իգական սեռի, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության չզորակոչված քաղաքացիներին իրավունք է վերապահվում հաջորդ տարին նույն Հաստատությունում հանձնել քննություններ այդ առարկաներից, իսկ նոր բնակավայր տեղափոխվելու դեպքում՝ այդ բնակավայրում գտնվող Հաստատություններից մեկում:

22. 9-րդ և 12-րդ դասարանների քննական առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողների վերաքննությունների արդյունքները հիմք են հիմնական կրթության վկայականում և միջնակարգ կրթության ատեստատում տարեկան և քննական գնահատականներ նշանակելու համար:

«Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ գրականություն», «Հանրահաշիվ», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» և «Երկրաչափություն» առարկաներից տարեկան գնահատականները նշանակվում են «Հայոց լեզու, գրականություն», «Հայոց լեզու, հայ գրականություն» և «Մաթեմատիկա» քննական առարկաների գնահատականների հիման վրա:

23. 12-րդ դասարանի սովորողի կողմից, բնագիտական կամ օտար լեզուների առարկայախմբից, որպես միասնական քննություն (այսուհետ՝ Միասնական քննություն) երկու առարկա ընտրելու դեպքում միջնակարգ կրթության ատեստատում լրացվում է սովորողի կողմից նախընտրած առարկայի Միասնական քննության ավարտական մասի գնահատականը:

24. Բնագիտական կամ օտար լեզուների առարկայախմբի 2 առարկաներից վերաքննություններ հանձնելու դեպքում միջնակարգ կրթության ատեստատում քննական գնահատականը լրացվում է սովորողի ընտրությամբ:

25. Սույն կարգի 17-րդ կետի, 18-րդ, 19-րդ, 20-րդ կետերի 1-ին ենթակետով և 23-րդ կետի պահանջներին համապատասխան՝ քննություն չհանձնած սովորողներին հետագայում իրավունք է վերապահվում ընդհանուր հիմունքներով հանձնել էքստեն ավարտական քննություններ և ստանալ Հաստատության ավարտական փաստաթուղթ (վկայական կամ ատեստատ):

26. 2-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում տարեկան 9-10 միավոր գնահատված սովորողը պարզևատրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գովասանագրով:

27. 8-րդ և 9-րդ դասարանների ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից տարեկան 9-10 և քննական 18-20 միավոր գնահատված սովորողը ստանում է «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական: Որևէ առարկայից (բացի առողջության պատճառով «Ֆիզիկուտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկաներից ազատված լինելու դեպքերը)

չգնահատված՝ հիմնական դպրոցի սովորողը «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական չի ստանում:

28. 12-րդ դասարանում տարեկան 9-10 միավոր գնահատված սովորողը Հաստատության կողմից ներկայացվում է որպես գերազանցության մեդալի (այսուհետ՝ Մեդալ) հավակնորդ՝ պահպանելով սույն կարգի 47 և 48 կետերի պահանջները:

29. Ուսումնական առարկաներից տարեկան գնահատականներ նշանակում են դասավանդող ուսուցիչներն ուսումնական պարամունքների վերջին շաբաթվա ընթացքում՝ հաշվի առնելով սովորողի կիսամյակային գնահատականները:

30. «Ֆիզիկուտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկաների պարամունքներից առողջական վիճակի պատճառով սովորողի ազատված լինելը, ինչպես նաև չդասավանդելու պատճառով որևէ առարկայից տարեկան գնահատական չունենալը չի ազդում նրա՝ հաջորդ դասարան փոխադրվելու կամ Հաստատությունն ավարտելու վրա:

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ 180-240 ԺԱՄ ԲԱՑԱԿԱՅԱՑ ԵՎ ՍՈՎՈՐՈՂԻ ՀԱՋՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ ԿԱՄ ՀԱՆՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՐԴ ԱՍՏԻԳՆԱ ԳՐԱԴԱՐԱՆԻՄԸ

31. Ուսումնական տարվա ընթացքում, մինչև սույն կարգի 32-րդ կետով սահմանված ժամկետում 180-240 ժամ դասերից բացակայած 2-12-րդ դասարանների սովորողի՝ հաջորդ դասարան փոխադրվելու կամ Հաստատությունից դուրս մնալու հարցը քննարկվում է Հաստատության մանկավարժական խորհրդում, մինչև մայիսի 15-ը:

32. Սովորողի բացակայությունների հաշվառումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում և ամփոփվում է ուսումնական պարամունքների ավարտից 15 օր առաջ:

33. Հաստատության տնօրենը հաստատում է 5 քննական առարկաների ցանկը, ժամանակացույցը և տեղեկացում է Նախարարությանն ու լիազոր մարմնին: Քննություններին կարող են մասնակցել Նախարարության և (կամ) լիազոր մարմնի ներկայացուցիչները:

34. Հաստատության մանկավարժական խորհուրդը կազմում և տնօրենի հաստատման է ներկայացնում տեղեկանք՝ 2-12-րդ դասարանների սովորողի բացակայությունների քանակի, դրանց բնույթի վերաբերյալ:

1) 240 ժամից ավելի հարգելի պատճառով բացակայած սովորողներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի (այսուհետ՝ Նախարար) կողմից բացառության կարգով կարող է թույլատրվել հանձնել քննություններ 5 առարկաներից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմերի կրթության բաժինների (այսուհետ՝ Կրթության բաժիններ) վարիչների պատճառաբանված ներկայացման հիման վրա:

2) Նախարարությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է որոշում և տեղեկացնում է Հաստատության տնօրենին:

35. Բոլոր դասարանների քննական առաջադրանքները մշակվում են Հաստատության մեթոդմիավորումների կողմից՝ առնվազն 3 տարբերակով:

36. Քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների հիման վրա նշանակվում են սովորողի տարեկան գնահատականները:

37. Որևէ կիսամյակում 180-240 ժամ բացակայության դեպքում սովորողի կիսամյակային գնահատականները չեն նշանակվում՝ անկախ ընթացիկ գնահատականների առկայությունից:

1) Տվյալ կիսամյակի կիսամյակային և տարեկան գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով՝ մանկավարժական խորհրդի կողմից սահմանված

ժամանակացույցի՝ սույն կարգի համաձայն: 2) Ուսումնական տարվա ընթացքում 180-240 ժամ բացակայության դեպքում բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով՝ մանկավարժական խորհրդի կողմից սահմանված ժամանակացույցի՝ սույն կարգի համաձայն:

38. 240 ժամից ավելի բացակայելու կամ սույն կարգի 33-րդ և 36-րդ կետերով նախատեսված քննություններից և ամփոփիչ ստուգողական աշխատանքներից (10 միավորային համակարգում) 1-3 միավոր գնահատված լինելու դեպքում սովորողը կրկնում է դասընթացը, իսկ 9-րդ և 12-րդ դասարանների՝ 19 տարին լրացած սովորողը դուրս է մնում ուսումնական հաստատությունից:

VI. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

39. Հաստատությունների 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարանների սովորողների գիտելիքների ստուգումը, ավարտական և պետական ավարտական, այդ թվում՝ ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Մեդալի հավակնորդների քննությունների կազմակերպումն ու անցկացումն իրականացվում է սույն կարգի և Նախարարի՝ տվյալ ուսումնական տարվա համար հաստատած սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցի և աշխատակարգի համաձայն:

40. 9-րդ և 12-րդ դասարանների սովորողները «Հանրահաշիվ», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» և (կամ) «Երկրաչափություն» առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված լինելու դեպքում չեն մասնակցում «Մաթեմատիկայի» ավարտական, 12-րդ դասարանում՝ պետական ավարտական քննություններին:

41. 9-րդ և 12-րդ դասարանների սովորողների համար «Մաթեմատիկա» առարկայի վերաքննության արդյունքը հիմք է հանդիսանում հիմնական կրթության վկայականում՝ «Երկրաչափություն» և «Հանրահաշիվ», միջնակարգ կրթության ատեստատում՝ «Երկրաչափություն» ու «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաներից տարեկան «Մաթեմատիկա» առարկայից քննական գնահատական նշանակելու համար:

42. 9-րդ և 12-րդ դասարանների սովորողները, «Հայոց լեզու» կամ «Գրականություն» («Հայ գրականություն») առարկաներից կամ երկուսից միաժամանակ տարեկան 1-3 միավոր ունենալու դեպքում չեն մասնակցում 9-րդ դասարանում «Հայոց լեզու, գրականություն» առարկայի ավարտական, 12-րդ դասարանում՝ «Հայոց լեզու և հայ գրականություն» պետական ավարտական քննություններին և հանձնում են վերաքննություն սույն կարգի 19-րդ կետում նշված ժամանակահատվածներում: Վերաքննությունների արդյունքները հիմք են հանդիսանում հիմնական կրթության վկայականում «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաներից տարեկան և «Հայոց լեզու, գրականություն» առարկայից քննական և միջնակարգ կրթության ատեստատում «Հայոց լեզու», «Հայ գրականություն» առարկաներից տարեկան և «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից քննական գնահատականներ նշանակելու համար:

43. Եթե 9-րդ կամ 12-րդ դասարաններ սովորողը «Հայոց լեզու» առարկան ուսումնասիրել է վերջին երկու ուսումնական տարիներին, ապա հիմնական կրթության վկայականում կամ միջնակարգ կրթության ատեստատում այդ առարկայի համապատասխան ղում սովորողի ցանկությամբ կարող է գրվել՝ «չի ուսումնասիրել»: Սովորողն իր ցանկությամբ կարող է ազատվել 9-րդ դասարանում «Հայոց լեզու, գրականություն» առարկայի ավարտական և 12-րդ դասարանում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի պետական ավարտական քննություններից: Այդ դեպքում ավարտական փաստաթղթի համապատասխան տողում գրվում է՝ «ազատված

է»:

Սույն կետում նշված գրառումների բացակայության դեպքում սովորողը մասնակցում է «Հայոց լեզու, գրականություն» առարկայի ավարտական և 12-րդ դասարանում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի պետական ավարտական քննություններին:

44. Հաստատությունների պետական ավարտական քննությունները կազմակերպելու և վերահսկելու նպատակով Նախարարի հրամանով ստեղծվում է հանրապետական հանձնաժողով:

45. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողներն ազատվում են գիտելիքների ստուգումից (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12-րդ դասարան) քննություններից: Նրանց տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների:

V. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵՋ ԳԵՐԱԶՆԱՑ ԱՌԱՋԱՐԻՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ ՄԵՂԱԽ ԳՐԱԿԱՆՈՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

46. Մեդալի ներկայացվում է 9-րդ դասարանը հիմնական կրթության գերազանցության վկայականով ավարտած և 10-12-րդ դասարաններում բոլոր առարկաներից տարեկան 9 կամ 10 միավոր գնահատված սովորողը:

47. Ուսումնական պլանով նախատեսված որևէ առարկայից չգնահատված սովորողը, որպես Մեդալի հավակնորդ, չի ներկայացվում բացառությամբ հետևյալ դեպքերի.

1) առողջության պատճառով «Տեխնոլոգիա», «Ֆիզիկուտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկաներից ազատված լինելը,

2) առանձին գործող ավագ դպրոցների բնագիտամաթեմատիկական և արհեստագործական հոսքերում ուսումնառության երեք տարիների ընթացքում «Հայոց եկեղեցու պատմություն», «Համաշխարհային պատմություն» առարկաների՝ ուսումնական պլաններով չնախատեսված լինելը,

3) միջազգային պայմանագրի համաձայն՝ ուսումնառության ընթացքում մեկ անգամ, մեկ տարի արտերկրում ուսում ստացած և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն վերադարձած սովորողի կողմից առանձին առարկաներ չուսումնասիրելը,

4) դպրոցում համապատասխան մասնագետի բացակայության պատճառով որևէ առարկա չուսումնասիրելը:

48. Մեդալի հավակնորդ սովորողների նախնական ցուցակները մինչև տվյալ ուսումնական տարվա մարտի 21-ը Հաստատությունները ներկայացնում են Կրթության բաժիններ, իսկ Նախարարության ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների նախնական ցուցակները՝ Նախարարություն:

49. Մինչև մայիսի 10-ը Կրթության բաժինները և Նախարարությունը Հաստատություններում ստուգում են ներկայացված փաստաթղթերի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Մինչև մայիսի 10-ը կրթության բաժինները նախնական ցուցակները ներկայացնում են Նախարարություն: Ներկայացված Մեդալի հավակնորդների փաստաթղթերը Նախարարությունում կարող են կրկնակի ուսումնասիրվել:

50. Նախարարությունը մինչև մայիսի 25-ը Կրթության բաժիններ է ներկայացնում Մեդալի հավակնորդների վերջնական ցուցակները:

VI. ՄԵՂԱԽ ԳՐԱԿԱՆՈՐՈՒՄՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԴՐԱԳԵՎԱՏՐՈՒՄԸ

51. Մեդալի հավակնորդ բոլոր սովորողները (անկախ ուսումնական հաստատության

ԿԱՐԳ

ԼԵՆԻՆՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ն Ր Ա Մ Ա Ն

« 7 » մայիսի 2014թ.

ք. Ստեփանակերտ

N 100-U

2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ ենթակետին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել 2013-2014 ուսումնական տարվա գիտելիքների ստուգման, ավարտական, պետական ավարտական քննությունների կազմակերպման, անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության և գիտության վարչության պետ Ռ. Մուսայելյանին՝ հաստատված աշխատակարգը և ժամանակացույցը ներկայացնել «Լուսարար» թերթի խմբագրությանը՝ առաջիկա համարում տպագրելու համար:
3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

Ա. ԱՄՐԱՆ

Հավելված՝
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2014 թվականի մայիսի 7-ի N 100-U հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություն)՝ անկախ դրանց կազմակերպչական կազմակերպչական ձևից, ենթակայությունից և ուսուցման լեզվից, 2013-2014 ուստարվա ուսումնական պարամունքներն ավարտվում են 2014 թվականի մայիսի 23-ին՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ 1-ին դասարանների, առնվազն 32 ուսումնական շաբաթ՝ 2-րդ դասարանների և առնվազն 34 ուսումնական շաբաթ՝ 3-12-րդ դասարանների համար:
2. Հունիսի 2-24-ը Հաստատությունների 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում անցկացվում են համապատասխանաբար՝ գիտելիքների ստուգում, ավարտական և պետական ավարտական քննություններ: Քննություններն սկսվում են առավոտյան ժամը 11:00-ին: Սովորողները Հաստատություն են ներկայանում ժամը 10:00-ին:
3. Մինչև մայիսի 21-ը Հաստատության տնօրինությունը ուսուցիչներին, համապատասխան դասարանների սովորողներին և նրանց ծնողներին ծանոթացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի (այսուհետ՝ Նախարար) 2013 թվականի ապրիլի 25-ի N 90-Ն հրամանով հաստատված «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման և ավարտման կարգին» և սույն աշխատակարգին:
4. Ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գերազանցության մեդալի (այսուհետ՝ Մեդալ) հավակնորդ սովորողները թույլատրվում են քննության՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) ներկայացված վերջնական ցուցակի:
5. Քննությունների միջև ընկած օրերին դասավանդող ուսուցիչները սովորողների համար քննական առարկաներից կազմակերպում են կոնսուլտացիաներ՝ Հաստատության տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցով:
6. 4-րդ դասարանում գիտելիքների ստուգումն անցկացվում է.
«Մայրենի» առարկայից՝ հունիսի 3-ին (թեստ) և «Մաթեմատիկա» առարկայից՝ հունիսի 6-ին (գրավոր):
Ռուսերենով ուսուցմամբ դասարաններում՝ «Ռուսաց լեզու» առարկայից (թեստ)՝ հունիսի 8-10-ն ընկած ժամանակահատվածում:
1) 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման առաջադրանքները կազմվում են Նախարարության գնահատման և թեստավորման կենտրոնում (այսուհետ՝ ԳԹԿ): Առաջադրանքների նյութը ընտրվում է Նախարարության կողմից երաշխավորված և Հաստատությունում գործածվող դասագրքերից:
Ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար սահմանվող քննություններն անց են կացվում քննաշրջանի ընթացքում, քննական առաջադրանքները կազմվում են Հաստատության մեթոդիկավորումները, և տնօրենի հրամանով ստեղծվում է քննական հանձնաժողով՝ մեթոդական միավորումների անդամներից:
2) Քննական առաջադրանքների ծրարը բացվում է գիտելիքների ստուգման օրը քննասենյակում՝ սովորողների ներկայությամբ:
3) Գրավոր աշխատանքի կատարման համար տրվում է 90 րոպե, գնահատումը՝ 10 միավորային համակարգով:
4) Գիտելիքների ստուգումն իրականացնում են դասավանդող ուսուցիչները և տնօրենի կողմից նշանակված ներկայացուցիչը:
5) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար լրացուցիչ տրվում է 30 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:
7. 9-րդ դասարանի ավարտական քննություններն անցկացվում են.
1) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից՝ հունիսի 2-ին (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:
2) «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն») առարկայից՝ աշակերտի ընտրությամբ, հունիսի 5-ին (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:
3) «Մաթեմատիկա» առարկայից՝ հունիսի 11-ին (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:
4) «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ) առարկայից՝ աշակերտի ընտրությամբ, հունիսի 16-ին (գրավոր), քննությանը տրվում է 90 րոպե:
5) «Հայոց պատմություն» առարկայից՝ հունիսի 19-ին (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:
6) «Ռուսաց լեզու» առարկայից՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար՝ հունիսի 24-ին (գրավոր), քննությանը տրվում է 90 րոպե:
8. 12-րդ դասարանում պետական ավարտական քննություններն անցկացվում են .
1) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից՝ հունիսի 4-ին (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:
2) «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն») առարկայից՝ աշակերտի ընտրությամբ, հունիսի 9-ին (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:
3) «Մաթեմատիկա» առարկայից՝ հունիսի 12-ին (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:
4) «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ) առարկայից՝ հունիսի 18-ին (գրավոր), քննությանը տրվում է 90 րոպե:
5) «Հայոց պատմություն» առարկայից հունիսի 24-ին (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:
6) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար սահմանվում է քննություն «Ռուս գրականություն» առարկայից (բանավոր): Քննությունն անցկացվում է քննաշրջանի ընթացքում, քննության անցկացման օրը որոշում է մանկավարժական խորհուրդը: Քննական հանձնաժողովը ստեղծվում է Հաստատության տնօրենի հրամանով՝ առարկայական մեթոդական միավորումների անդամներից:
9. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար լրացուցիչ տրվում է 30-40 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:
10. 9-րդ և 12-րդ դասարաններում քննություններն անցկացվում են ԳԹԿ-ի կազմած թեստերով, գնահատումը՝ 20 միավորային համակարգով:
11. Քննության սկիզբը հայտարարվելուց հետո ուշացած սովորողների մուտքը քննասենյակ արգելվում է:
12. Սովորողը քննություններին ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով՝ անձնագրով կամ ծննդյան վկայականով:

ենթակայությունից և հաստատությունում ուսուցման լեզվից), այդ թվում՝ սույն կարգի 47-րդ կետի 1-4 ենթակետերի հիմքով քննություններին մասնակցող սովորողները, «Հայոց լեզու և հայ գրականություն» և (կամ) «Մաթեմատիկա» առարկաների պետական ավարտական քննությունները հանձնում են կենտրոնացված կարգով:

1) Մեդալի հավակնորդ այն սովորողները, որոնց համար «Հայոց լեզու և հայ գրականություն» և (կամ) «Մաթեմատիկա» առարկաները համարվում են բուհական ընդունելության մրցութային քննություն, քննություն են հանձնում միասնական համակարգով (պետական ավարտական քննության միավորները հաշվարկվում են միասնական քննության ավարտական մասի գնահատականի հիման վրա):

52. «Հայոց լեզու և հայ գրականություն» և (կամ) «Մաթեմատիկա» առարկաները ոչ մրցութային լինելու դեպքում Մեդալի հավակնորդի համար հիմք է կենտրոնացված համակարգով հանձնված պետական քննական առարկայի գնահատականը:

53. Կենտրոնացված համակարգով հանձնվող «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից պետական ավարտական քննություններն անցկացվում են Նախարարության կողմից նախապես որոշված՝ Ստեփանակերտ քաղաքի որևէ Հաստատությունում՝ տվյալ քննությունների համար սահմանված օրերին:

Պետական ավարտական քննությունների նախապատրաստման համար պատասխանատու է Հաստատության տնօրենը: Քննությունների ընթացքը և աշխատանքների ստուգումը վերահսկում են Նախարարության ներկայացուցիչները:

54. «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների քննական աշխատանքները ստուգվում են Նախարարի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից քննության հաջորդ օրը՝ ժամը 11:00-ից՝ ԳԹԿ համակարգային կայքում տեղադրված թեստերի ճիշտ պատասխանների հիման վրա: Ստուգող հանձնաժողովի նախագահը ի պաշտոնե Նախարարության ներկայացուցիչն է: Հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ: Քննական գրավոր աշխատանքները մինչև դրանց ստուգման ավարտը պահվում են քննական հանձնաժողովի նախագահի մոտ:

«Հայոց պատմություն», «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» կամ «Աշխարհագրություն») առարկաներից՝ Մեդալի հավակնորդի ընտրությամբ), «Օտար լեզու» (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներ՝ Մեդալի հավակնորդի ընտրությամբ), «Ֆիզիկոլոգիա» ավարտական պետական քննությունները Մեդալի հավակնորդը հանձնում է իր Հաստատությունում՝ նույն կարգով, ինչ կարգով մյուս շրջանավարտները: Նշված առարկաների քննությունների անցկացումը վերահսկվում է Նախարարության կողմից:

55. Մեդալի հավակնորդ սովորողի, ինչպես նաև Հաստատության մյուս սովորողների համար քննական առաջադրանքները բովանդակությամբ ու կառուցվածքով նույնն են:

56. Մինչև հունիսի 25-ը Հաստատությունը կրթության բաժին է ներկայացնում տեղեկանք՝ Հաստատությունում մյուս չորս առարկաներից մեդալի հավակնորդ շրջանավարտի հանձնած պետական քննությունների արդյունքների մասին: Ստացված արդյունքներն ընդհանրացվում են կրթության բաժիններում և մինչև հունիսի 28-ը ներկայացվում Նախարարության: Նախարարության ենթակայության Հաստատությունները սույն կետով նախատեսված տեղեկանքը նույն ժամկետում ներկայացնում են Նախարարություն:

57. Ավարտական քննություններից 20 միավորային համակարգում՝ 18, 19, 20 կամ 10 միավորային՝ 9, 10 միավոր ստացած Մեդալի հավակնորդները պարգևատրվում են Մեդալով:

ԿԱՐԳ

9 13. Հանրակրթական Հաստատությունների մտավոր հետամնացություն ունեցող սովորողների գիտելիքների ստուգումը և ամփոփումը կատարվում է՝ համաձայն անհատական ուսուցման պլանների (ԱՈՒ)։

14. «Ֆիզկուլտուրա» առարկայի քննությունները կազմակերպվում են հանրակրթական մյուս առարկաների քննություններն սկսելուց առնվազն 5 օր առաջ։ «Ֆիզկուլտուրա» առարկայի ավարտական և պետական ավարտական քննություններն ընդունում է Հաստատության տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովը՝ հետևյալ կազմված է հանձնաժողովի նախագահից, դասավանդող ուսուցիչից և երկու անդամներից։

Քննություններն անցկացվում են՝ համաձայն Նախարարության կողմից հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների 9-րդ և 12-րդ ավարտական դասարանների «Ֆիզկուլտուրա» առարկայի քննությունների նորմատիվային պահանջների, գնահատումը՝ 10 միավորային համակարգով։

Երեկոյան և հատուկ հանրակրթական դպրոցներում (բացառությամբ՝ օժանդակ դպրոցների) նույնպես գործում է սույն աշխատակարգը՝ պահպանելով ավարտական դասարանների համապատասխանությունը։

15. Քննական գրավոր աշխատանքները, մինչև դրանց ստուգման ավարտը, պահպանվում են քննական հանձնաժողովի նախագահի մոտ, ապա սահմանված կարգով արխիվացվում։

16. Քննությունից բացակայած կամ ուշացած Մեղալի հավակնորդ սովորողը գրկվում է Մեղալ ստանալու իրավունքից։

17. Մեղալի հավակնորդները քննություններին ներկայանում են անձը հաստատող փաստաթղթով՝ անձնագրով, ծննդյան վկայականով կամ Հաստատության տնօրենի կողմից տրված տեղեկանքով (լուսանկարի առկայությամբ)։

18. Ավարտական և պետական ավարտական քննությունները կազմակերպվում են ավարտական քննական կենտրոնում։

19. 9-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների ավարտական քննությունները կազմակերպվում են կենտրոնացված կարգով՝ Նախարարի հրամանով հաստատված քննական կենտրոններում։

20. Քննական կենտրոն է դառնում յուրաքանչյուր Հաստատություն։ Հաստատության տնօրենը կամ նրան փոխարինող անձն ի պաշտոնե տվյալ ավարտական քննական կենտրոնի ղեկավարն է։

21. Քննական կենտրոնում քննության ընթացքը կազմակերպելու համար քննական կենտրոնի ղեկավարը կարող է նշանակել օգնական, հերթապահներ։

22. Քննական կենտրոնի ղեկավարը մինչև քննության օրը ԳԹԿ ներկայացուցիչ կամ ԳԹԿ համացանցային կայքի միջոցով ստանում է տվյալ քննական կենտրոնում քննության կազմակերպման համար անհրաժեշտ պարագաներ (բացի թեստերից)։

23. Քննասենյակներում քննության ընթացքը կազմակերպելու համար քննական կենտրոնի ղեկավարը նշանակում է քննության ընթացքի կազմակերպիչներ, ովքեր չեն կարող լինել տվյալ քննական առարկայի մասնագետներ։

24. Մինչև 30 սովորող ունեցող քննասենյակում աշխատանքները համակարգում են 2 կազմակերպիչ։ 30-ից ավելի սովորող ունեցող քննասենյակում առաջին 30 սովորողների համար՝ 2 կազմակերպիչ, մեկական կազմակերպիչ՝ յուրաքանչյուր հաջորդ 30-ի համար, ևս մեկ կազմակերպիչ՝ վերջին 20 և ավելի սովորողների համար։

25. Քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի կազմակերպիչներից մեկին նշանակում է պատասխանատու կազմակեր-

պիչ, որը համակարգում է քննասենյակի կազմակերպիչների աշխատանքը։

26. Քննական կենտրոնի ղեկավարը կամ օգնականը քննությունը սկսվելուց մեկ ժամ առաջ կատարում է կազմակերպիչների գրանցում և վիճակահանությամբ բաշխում կազմակերպիչներին՝ ըստ քննասենյակների։

27. Սովորողների մուտքը քննասենյակ սկսվում է քննական կենտրոնի ղեկավարի հրահանգով։

28. Սովորողը մտնելու է վիճակահանության սեղանին և վիճակահանության թերթիկի միջոցով որոշում իր նստարանի համարը։ Կազմակերպիչը սովորողների տվյալ խմբի ցուցակում գրում է սովորողի ազգանունը, անունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, վիճակահանված նստարանի համարը։ Սովորողը ցուցակում ստորագրում է իր տվյալների տողում՝ «Նստարանի համարը» սյունակում։

29. Քննասենյակում կայացած վիճակահանության արդյունքի համապատասխան՝ երկրորդ կազմակերպիչն օգնում է սովորողին՝ գտնելու իր տեղը, և չի թույլատրում տեղափոխություններ կատարել։

30. Քննությունը սկսվելուց առնվազն երկու ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը ԳԹԿ ներկայացուցիչից ստանում է քննական թեստերի փաթեթները։

31. Քննությունը սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի պատասխանատուին տալիս է յուրաքանչյուր խմբի համար նախատեսված փաստաթղթերի փաթեթը՝ բացի թեստերից։

32. Ավարտական քննություններին սովորողներին չի թույլատրվում քննասենյակ բերել բջջային հեռախոսներ կամ կապի այլ միջոցներ, տետրեր, դասագրքեր, ուսումնական և այլ ուղեցույց-ձեռնարկներ։

33. Սահմանված ժամկետում գրավոր աշխատանքը չավարտած սովորողներն այն հանձնում են անավարտ վիճակում։

34. Սովորողի՝ քննասենյակում տեղավորվելուց հետո քննական կենտրոնի ղեկավարը կամ օգնականը քննասենյակ է բերում քննական թեստերի ծրարները։ Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը ծրարները ցուցադրում է սովորողներին և ներկա այլ անձանց (ծնողներ, հավատարմագրված դիտորդներ)՝ նրանց ուշադրությունը հրավիրելով ծրարների փակ և ամբողջական լինելու հանգամանքի վրա։ Ծրար(ներ)-ը բացելու համար պատասխանատուն հրավիրում է առաջին նստարանին(ներին) նստած սովորողներից մեկին։ Առաջին շարքում սովորողների բացակայության դեպքում հրավիրվում է սովորող այլ շարքից։ Ծրարների բացման մասին նշվում է արձանագրության մեջ։

35. Քննասենյակի պատասխանատուն (կազմակերպիչը) սովորողներին տեղեկացնում է քննասենյակում վարքի կանոնների պահպանման, ինչպես նաև բողոքարկման տեսակների մասին։ Քննասենյակում քննության անցկացման կարգն ընթերցելուց և սովորողներին ցուցումներ տալուց հետո կազմակերպիչները բաժանում են թեստերը։ Սովորողը թեստը ստանալուն պես թեստի շապիկի համապատասխան մասում գրում է քննասենյակի և իր նստարանի համարը։ Թեստերի վերջնական բաշխումից հետո պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, տևողությունը և գրատախտակին նշում է քննության սկզբը և ավարտը։

36. Քննասենյակից սովորողը կարող է դուրս գալ միայն խիստ անհրաժեշտության դեպքում՝ քննասենյակի պատասխանատուի թույլտվությամբ և միջանցքի հերթապահի ուղեկցությամբ։

37. Խմբի կազմակերպիչը ավելորդ (չօգտագործված, խտանակված) քննական նյութերը հաշվարկում, արձանագրում է, իսկ քննության ավարտից հետո փաթեթավորում և հանձնում է քննասենյակի պատասխանատու

կազմակերպիչին։

38. Թեստի բովանդակության վերաբերյալ սովորողի հարցերը չեն քննարկվում։

39. Քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող թեստերը փոխարինվում են նորով։

40. Քննության ընթացքում սովորողների կողմից առաջադրանքների կատարման ժամանակ քննասենյակներում, բացի կենտրոնի ղեկավարից և կազմակերպիչներից, կարող են ներկա գտնվել Նախարարության, շրջվարչակազմների, Ստեփանակերտի քաղաքապետարանի և ԳԹԿ-ի ներկայացուցիչները։

41. Քննության ավարտից 30 րոպե առաջ քննասենյակի պատասխանատուն սովորողների ուշադրությունը հրավիրում է ժամանակի վրա և հիշեցնում առաջադրանքների պատասխանները համապատասխան ձևաթղթերի վրա անցկացնելու մասին։

42. Սովորողի կողմից սույն ընթացակարգի պահանջները խախտելու կամ դրանց չենթարկվելու դեպքում քննասենյակի պատասխանատուին իրավունք է վերապահվում մեկ անգամ նախագուշակել սովորողին, քննական կենտրոնի ղեկավարի հետ համաձայնեցնելով, հեռացնել քննասենյակից։

43. Հեռացվող սովորողից վերցվում են քննական նյութերը, պատասխանների ձևաթղթի էջի վրա գրվում է՝ «Հեռացված է քննությունից»։ Քննասենյակի և խմբի արձանագրությունների մեջ գրանցվում է այդ փաստը, հեռացվող սովորողի համարը, հեռացման պատճառը։

44. Քննության օրը չներկայացած սովորողը քննություն է հանձնում։

1) Հիմնական դպրոցի (մինչև 19 տարեկան) սովորողը՝ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում,

2) Միջնակարգ դպրոցի (մինչև 19 տարեկան) սովորողը՝ հուլիսի 2-8-ը և (կամ) օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում։

45. Քննության համար նախատեսված ժամանակի ավարտին սովորողը հանձնում է իր թեստը և ստորագրում իր անվան դիմաց։ Եթե սովորողն ավարտել է աշխատանքը սահմանված ժամանակից շուտ, ապա կարող է այն հանձնել և, ստորագրելով իր անվան դիմաց, դուրս գալ քննասենյակից։ Քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակերպիչները սեղաններից հավաքում են քննական թեստերը։

46. Պատասխանատուն թեստերը քննության արձանագրության հետ հանձնում է քննական կենտրոնի ղեկավարին։ Քննական կենտրոնի ղեկավարը, ներկայացված թեստերը վերահաշվարկելով, լրացնում է քննական կենտրոնում անցկացված քննության վերջնական արձանագրությունը, որտեղ նշվում է քննության մասնակիցների, բացակաների, քննությունից հեռացվածների, որևէ պատճառով քննությունն ընդհատածների թիվը (առկայության դեպքում)։

47. Քննության ավարտից հետո սովորողների ցուցակները պահվում են քննական կենտրոնի ղեկավարի մոտ՝ մեկ տարի։

48. Քննական աշխատանքները, բացի 9-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից, ստուգվում են քննական կենտրոնի ղեկավարի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից, քննության հաջորդ օրը՝ ժամը 12:00-ին, ԳԹԿ համակարգչային կայքում տեղադրված թեստերի ճիշտ պատասխանների հիման վրա։ Ստուգող հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե Հաստատության տնօրենն է։ 9-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» քննական աշխատանքները ստուգվում են ԳԹԿ-ում։

49. 9-րդ դասարանում ստուգող հանձնաժողովի անդամների 50%-ը տվյալ առարկայի մասնագետներ են։

50. 12-րդ դասարանում ստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ։

51. Քննական արդյունքները գնահատելիս, քննական հանձնաժողովի անդամների միջև տարաձայնություն առաջանալու դեպքում հարցը լուծվում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ։

Հավասար ձայների դեպքում վճռորոշ է՝

1) 4-րդ դասարանում՝ դասավանդող ուսուցչի առաջարկած գնահատականը,

2) 12-րդ դասարանի ռուսերենով ուսուցմամբ դասարաններում՝ «Ռուս գրականություն» առարկայի քննական հանձնաժողովի նախագահի առաջարկած գնահատականը։

3) Նշանակված գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամ(ներ)ը արձանագրության մեջ կարող է(են) կատարել հատուկ նշում։

52. Գրավոր աշխատանքները գնահատելիս սևագրությունը չի գնահատվում։

53. Քննական աշխատանքների, բացի 9-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից, արդյունքները հրապարակվում են տվյալ քննության հաջորդ օրը՝ ժամը 18:00-ից ոչ ուշ։ Քննական կենտրոնի ղեկավարը ցուցակների կրկնօրինակը փակցնում է քննական կենտրոնի մուտքի մոտ։ 9-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների քննական աշխատանքների արդյունքները հրապարակվում են ԳԹԿ-ի կողմից՝ քննության անցկացումից հետո 5 օրվա ընթացքում։

54. Քննական կենտրոնում քննությունների արդյունքների ցուցակներն առանձնացվում են ըստ դասարանների, ցուցակները վավերացվում են ստուգող հանձնաժողովի նախագահի կողմից։

55. Արդյունքների հրապարակումից հետո քննական կենտրոնի ղեկավարը էլեկտրոնային տվյալները, ինչպես նաև սույն կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված թեստերի բովանդակությանը վերաբերող սովորողի կամ նրա ծնողի (օրինական ներկայացուցչի) կողմից ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ արձանագրությունները համապատասխան լիազոր մարմնի կրթության բաժնի միջոցով ուղարկում է ԳԹԿ։

56. Բողոքը կարող է լինել՝

1) Քննության անցկացման կարգի խախտման մասին,

2) Քննության արդյունքների հետ անհամաձայնության մասին,

3) Թեստերի բովանդակության մասին։

57. Սույն կարգի 56-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում սովորողը կարող է բողոքարկել քննության պահին կամ ավարտից հետո՝ մինչև քննասենյակից դուրս գալով՝ բողոքը ներկայացնելով քննասենյակի պատասխանատուին, ով փոխանցում է այն կենտրոնի ղեկավարին։ Կենտրոնի ղեկավարը մեկ ժամվա ընթացքում քննարկում և պատասխանում է բողոքը ներկայացնողին։

58. Սույն կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում բողոքները ներկայացվում են ստուգող հանձնաժողովի նախագահին՝ քննության արդյունքները հրապարակելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում։

Բողոքի քննարկման արդյունքները ոչ ուշ, քան դիմումն ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում, գրավոր ներկայացվում են դիմողին։

59. Դիմումի քննարկումից հետո կարող է որոշում ընդունվել քննության գնահատականի պահպանման կամ բարձրացման, ինչպես նաև իջեցման մասին, որը հրապարակվում է և ուղարկվում ԳԹԿ։

60. Բողոքարկման արդյունքների հետ անհամաձայնության դեպքում դիմումի հեղինակը կարող է բողոքարկել վերադատության կարգով՝ Նախարարություն և (կամ) դատարան։

ԱՆՂՐԱՂԱՐԸ

ՀԱՄԱԿՈՂՄԱՆ ՄՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Վերջերս ԼՂՀ ԿԳ նախարարության պետական տեսչության կողմից Քաշա-թաղի շրջկենտրոն Բերձորի Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցում անցկացվեցին համակողմանի ստուգումներ և մեթոդական օգնություն: Համընթացի ղեկավար, պետական տեսչության պետ Սոս Արզումանյանը տեղեկացրեց, որ մի քանի տարիների ընթացքում տեսչության աշխատակիցները եղել են շրջանի բոլոր դպրոցներում, անցկացրել համակողմանի ստուգումներ, տվել մեթոդական օգնություն և Բերձորի հ. 1 միջնակարգ դպրոցում են շրջանի դպրոցների համակողմանի ստուգումները՝ բացառությամբ վերջին 2-3 տարիներին բացված դպրոցների՝ Կերեմի, Ծղբաձորի, Յերիկի, Բագմատուսի: Ստուգումներին ներգրավված էին 11 տեսուչներ՝ տարբեր առարկաների գծով և ԿԳ նախարարության ռազմահայրենասիրական բաժնի գլխավոր մասնագետ Արթուր Աթանեսյանը: Ս. Արզումանյանը տեղեկացրեց, որ Վ. Թեքեյանի անվան դպրոցում տեսչության կողմից 2012թ. մարտին կատարվել են փաստաթղթային ստուգումներ, և համեմատած այն ժամանակի հետ, այժմ դրական մեծ փոփոխություններ կան: Ստուգումների

ընթացքում դասախոսներ են կատարվել բոլոր դասարաններում, տեսչական գրավոր աշխատանքներ են տրվել մաթեմատիկա, հայոց և օտար լեզուներից: Ս. Արզումանյանի հետ շրջեցինք դասարաններում: 9-րդ դասարանում պատմության դաս էր. ավագ պետական տեսուչ Մանվել Մխիթարյանը գոհ էր աշա-

ծգարան, որը դպրոցն ունի ՀՀ Պաշտպանության նախարարի խորհրդակցական, գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանի ջանքերի շնորհիվ: Տեսչության պետը կարևորեց ՆԶՊ կաբինետի կառավարվածությունը՝ գնահատելով գեներալ-լեյտենանտ Սարգսյանի նվիրվածությունը կրթօջախներին: Ստուգումների վերջին օրը անցկացվեց մանկխորհի նիստ: Յուրաքանչյուր տեսուչ ներկայացրեց կատարվածի մասին, ամփոփվեցին աշխատանքները: Մանկխորհի նիստին մասնակցում էին նաև շրջվարչակազմի աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանը, կրթության բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը, ովքեր ելույթ ունեցան՝ շնորհակալություն հայտնելով տեսչությանը՝ դպրոցին մեթոդական օգնություն ցուցաբերելու համար: Կատարված աշխատանքների մասին խոսեցին դպրոցի տնօրեն Անահիտ Քոսակյանը, կրթության բաժնի առաջատար մասնագետ Ալվարո Առաքայանը: Վերջում ԿԳ պետական տեսչության պետը խոսք ասաց արվածի, թերթությունների, կատարվելիքի մասին, տվեց համընթացառականներ, դպրոցում կատարված աշխատանքները գնահատեց բավարար: Տեսչության աշխատակիցներն այցելեցին Բերձորի արվեստի և սպորտի դպրոց, ծանոթացան կատարված աշխատանքներին:



կերտներից: Կենսաբանության կաբինետում, որը հիմնել է ձևավորել է ուսուցչուհի Վարդուհի Հովհաննիսյանը, ծանոթացանք կատարված աշխատանքներին: Ս. Արզումանյանը ասաց, որ մեծ աշխատանք է կատարվել, և այս կաբինետը կարող է համարվել օրինակելի: Այս կրթօջախը եզակիներից է, որտեղ ռազմագիտության կաբինետը հագեցված է համապատասխան դիդակտիկ նյութերով, և ամենակարևորը՝ կա համակարգչային հրա-

զետ Ալվարո Առաքայանը: Վերջում ԿԳ պետական տեսչության պետը խոսք ասաց արվածի, թերթությունների, կատարվելիքի մասին, տվեց համընթացառականներ, դպրոցում կատարված աշխատանքները գնահատեց բավարար: Տեսչության աշխատակիցներն այցելեցին Բերձորի արվեստի և սպորտի դպրոց, ծանոթացան կատարված աշխատանքներին:

Ջոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ԳՅՈՒԴԻ ԵՐԵՒԱՆՆԵՐԸ ՆՈՒՅՆՊԵՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋ ՀԱՃԱՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆ ՈՒՆԵՆ

Օրերս այցելեցինք Կարմիր Շուկայի մանկապարտեզ, որը տեղակայված է Կարմիր Շուկա և Թաղավար գյուղերի սահմանագծում: Ինչպես կես կատակ կես լուրջ տնօրեն Առլետա Սարգսյանն ասաց՝ մանկապարտեզի շենքը մի գյուղին է պատկանում, տարածքը, որի վրա շենքն է կառուցված՝ մյուս գյուղին, ասել է թե՛ մանկապարտեզը ընդհանուր է: Այստեղ գործում է 3 խումբ՝ կրտսեր, միջին և ավագ, հաճախում՝ մոտ 70 երեխա, աշխատում՝ 19 հոգի, որից՝ 6 դաստիարակ, 1 երաժշտավար:

վեց, որ մոտ ապագայում դա հնարավոր կլինի իրագործել: Մանկապարտեզը չունի երաժշտական դահլիճ, նորմալ խաղահրապարակ: Մեր այցի ընթացքում ճաշից հետո երեխաները դաստիարակչուհու հետ

ցառումներ: Նկատելի է երեխաների ակտիվությունը: Նրանք շատ շուտ են հարմարվում մանկապարտեզի կյանքին:



Շենքը երկհարկանի է, տիպային, որի մի մասը նորոգվել է 2008թ.: Բայց ունի վերանորոգման խիստ կարիք:

Մանկապարտեզը զեղեցիկ կահավորված է, երեխաների մնջարաններն ու խաղասենյակները հարմարավետ են, ապահով:

մենք ներկա եղանք ճաշին: Սնունդը տրամադրվում է ըստ ճաշացուցակի, մաքուր պայմաններում: Երեխաները կուշտ էին և ուրախ:

Տիկին Սարգսյանը նշեց, որ ջեռուցումն իրականացվում է փայտով՝ վառարաններով, բայց պետության կողմից հատկացվող գումարը չի հերիքում: Ստիպված օգտագործում են նաև էլեկտրական ջեռուցիչներ:

Կարմիր Շուկայի մանկապարտեզ հաճախում են ինչպես վերոնշյալ գյուղերի, այնպես էլ Յերիկի, Ծովատեղի երեխաները, որոնք այստեղ են հասնում ծնողների միջոցներով: Երեխաներին մանկապարտեզ բերելու համար շատ ծնողներ են դիմել, բայց, ցավոք, նոր երեխաներ ընդունել չեն կարող, քանի որ խմբերի քանակը սահմանափակ է: Տնօրենը նշեց նաև, որ մանկապարտեզն ունի մասնաշենք, որը վերանորոգման ենթարկելով՝ կարելի կլինի նոր խումբ ավելացնել: Հույս հայտն-

միասին դուրս եկան մանկապարտեզի բակ և իրենց խաղը սկսեցին կանաչ խոտերի մեջ: Հաճելի էր հետևել. մի պահ ինքը էլ էր ընկրմվում նրանց աշխարհը, ուրախանում և իրենց երեխաների անմեղ ոգևորությամբ:

Ա. Սարգսյանը մանկապարտեզում աշխատում է 1986-ից, նա գիտակցում է իր պատասխանատվության չափը: Նա նշեց, որ աշխատողները հնարավորն ամուսն են, որպեսզի իրականացվող աշխատանքն ունենա պատշաճ որակ. «Ցավով, գյուղի երեխան այնքան էլ մեծ հնարավորություն չունի զարգանալու: Այստեղ մանկապարտեզը մեծ դեր է խաղում: Նրանք սովորում են դրևորվել իրենց հասակակիցների շրջանում, նախապատրաստվում դպրոցին: Ուշադրություն է դարձվում ինչպես սկզբնական գիտելիքների ձեռքբերմանը, այնպես է երեխաների ճիշտ դաստիարակությանը», - ասաց նա: Ժամանակին անց են կացվում դաս-պարապմունքներ, հաճախակի կազմակերպվում միջո-

Տնօրենը նշեց մի վտանգավոր իրողություն. մանկապարտեզի տարածքում է գտնվում կոյուղաբերի հավաքատեղին, որը լցվել ու փլման ենթակա է: Սեփական միջոցներով նոր փոս փորելու հնարավորություն չունեն: Կողքերից հողը փլվում է: Երեխաներին հեռու պահելու և դժբախտ պատահարներից խուսափելու համար այն ցանկապատել են: Բայց սա հարցի լուծում չէ, քանի որ շուտով ամառային շրջան է սկսվում, ու գարշահոտությունը կտարածվի շրջակայքում, ինչը հակասանիտարական վիճակ կստեղծի: Հույս ու-

նեն, որ հարցը կկարողանան լուծել (գուցե համայնքների, բարերարների կամ պետության միջոցներով):

Մանկապարտեզից դուրս գալով, սկսեցի խորհել. երանի մեր բոլոր գյուղական բնակավայրերի երեխաները հնարավորություն ունենային մանկապարտեզ հաճախելու: Ու հիշեցի մի գյուղացի տատիկի պատմությունը, թե ինչպես էր նա թոռնիկին պատմում քաղաքում գործող մանկապարտեզի, այնտեղ հաճախող երեխաների առօրյայի մասին, և ինչպիսի երագրվում ու նախանձով լեցուն հայացքով էր փոքրիկն ունկնդրում տատի պատմածները, որոնք իր ընկալմամբ պարզապես հեքիաթ էին թվում:

Այսօր խոսում ենք մեր գյուղերի շենացման, գյուղական կյանքի ակտիվացման մասին: Հիշե՛ք՝ հինքը մեր բալիկներն են:

Կարինե ԴԱՂԱՍՅԱՆ

Հուշ ԴԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԻՍԿԱՎԱՆ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ



Առաջին անգամ ես տեսա նրան, երբ նոր էի եկել Ստեփանակերտ, նա իմ գալու առթիվ կազմակերպած ճաշկերույթի բաժնիդարն էր:

Խոսում էր շատ բարձր, բայց շատ գրագետ: Հարցիս, թե ով է այդ մարդը՝ պատասխանեցին:

- Քնդարդյան Վլադիմիրն է, երկար տարիների ուսուցիչ, կերպարիչ էլ հորեղբոր տղան է: Այդպես ծանոթացա ես այդ հետաքրքիր մարդու հետ: Աշխատում էր 9-րդ դպրոցում: Մենք մույն թաղում էինք ապրում ու շատ հարազատ էինք ընտանիքներով: Ես սիրում էի ձմեռելա երկար երեկոները անցկացնել նրանց տանը: Կեսրարիս հետ գնում էինք, ու ես անհա-գորեն լսում էի նրա ու Վոլոդյայի հիշողությունները տարբեր դեպքերի մասին, լսում էի ինձ համար դեռ խորին Դարաբաղի բարբառը, մի քանի ծանոթ բառ էի քաղում ամբողջից և մոտավորապես հասկանում, թե խոսքը ինչի մասին է: Պատմությունը հետևում էր կերպարիս անգուսպ ծիծաղը ու Վոլոդյայի զարմանքից երեխայացած դեմքը:

Անցավ որոշ ժամանակ: Ինձ համար այդ մարդը ամուսնուս հորեղբայր էր գալիս, այսինքն՝ երկրորդ կերպար էր, և ես աշխատում էի ամեն կերպ ցույց տալ հարազալից վերաբերմունք: Մի օր էլ ինձ պատմեցին մի պատմություն, որից քար կտրեցի: Պարզվեց, որ Վոլոդյան ոչ մի բարեկամ էլ չէր մեզ: Պատմեց այդ պատմությունը լսեք: Մանուկ հասակում մահացանք և Վոլոդյայի հայրը: Հորեղբայրը ապրում էր չարքաշ կյանքով և ավելորդ «ուստող բերան» չպահելու համար մարդու է տալիս եղբոր կնոջը՝ Մաշին կային, որը հետագայում ինձ համար դարձավ սրբություն, այսինքն՝ Մաշինկան ամուսնանում է կեսրարիս հորեղբոր հետ: Վոլոդյան մնում է հորեղբոր մոտ նրա կամքով: Ամեն անգամ իր մանկությունը հիշելիս անստակաշատ մանկավարժի աչքերը թրջվում էին, և նա թաքցնում էր արցունքները: Իսկ իմ աչքի առջև հառնում էր այն օրերի Գիբորը: Սոված, կիսամերկ Վոլոդյան չարքաշ ցերեկների գիշերներում լամպի լույսի տակ սովորում էր դասերը և դառնում դասարանի գերագանցիկը: Ուշին որբի ընդունակությունները գրավում են հորեղբոր ուշադրությունը, և նա թույլ է տալիս սովորել: Այնուհետև սկսվում է Հայրենական պատերազմը: Վոլոդյան գնում է ռազմաճակատ: Այնտեղ ևս աչքի ընկնելով՝ ստանում է սպայի ուսադիրներ և ամեն ամիս աշխատավարձը ուղարկում հորեղբորը:

դայու՝ մի իմաստուն, հոգատար ու բարի մարդու հետ, բայց արի ու տես, տարիներն անցնում էին, իսկ Աստված նրանց չէր տալիս զավակ: Խեղճ կինը գիշերները անուսուց գաղտնի մորմոքվում էր, արտասվում՝ հիշելով իր որբին, բայց նահապետական սովորույթներն ու կանոնները թույլ չէին տալիս պահանջել իր զավակին: Մայր ու որդի այսպես ապրեցին իրարից հեռու երկար տարիներ:

Պատերազմը վերջացել էր, Վոլոդյան տուն էր վերադարձել կուրծքը ծանրացած մեղավերով և անմիջապես աշխատանքի անցել դպրոցում՝ որպես ուսուցիչ:

Եղիշա դային ու Մաշինկա բաբուն արդեն հալկոր էին, երբ եղիշան մի օր համարձակվեց գնալ Վոլոդյայի հորեղբոր մոտ և խնդրել թույլ տալ տղային տանել իր տուն: Եվ այսպես, Վոլոդյան հասուն տարիքում գտավ իր մորը, որպես հայր ընդունեց եղիշա դայուն և դարձավ կեսրարիս հորեղբոր տղան:

Պատմությունը ապշեցրել ու հուզել էր ինձ: Չկար արդեն եղիշա դային, բայց Մաշինկա բաբուն ու Վոլոդյան առաջվա մնաց և էլ ավելի հարազատ էին մեզ ու անբաժան մեր ընտանիքից: Հետո կեսրարս էլ կնքեց իր մահկանացուն: Մեր ընտանիքի խորհրդատուս ու սեղանի նահապետը նորից Վոլոդյան էր: Ամեն մայիսի 9-ին մենք նվերներով շնորհավորում էինք նրան ու լսում սրտաբեր, հուսմորոտ պատմությունները, հաճախ էլ թախիծը պատում էր նրան, երբ կարդում էր իր գրած բանաստեղծությունները անցած կյանքի մասին: Բոլորս էինք տխրում: Իմ աչքի առջև մի մարդ էր՝ ճաշակած կյանքի բոլոր դառնությունները՝ որբություն, սով, պատերազմ, հարազատ որդու մահ: Աչքիս առջև մի համառ ծառ էր, արմատները խորը մխրձոց՝ Դարաբաղյան հողի մեջ, ճյուղերը փռած երեխաների ու թոռների վրա: Այդ ծառի շվաքից հաճախ օգտվում էինք նաև մենք: Ես մտքումս օրհնում էի այդ ծառի գոյությունը և Աստուծոց խնդրում երկար-երկար կյանք: Հոր համ էի առնում ես Վոլոդյայից, հոր կարոտ էի առնում նա խրատներից: Հիմա չկա այդ ծառը:

Այս անգամ մայիսի 9-ին ավելի էին նոսրացել Հայրենական պատերազմի վետերանների շարքերը: Դիտում էի հեռուստացույց՝ քաղաքի ղեկավարությունը շնորհավորում էր նրանց, դիտում էի ու փնտրում Վոլոդյային:

Բայց դու չկայիր, սիրելի մանկավարժ ու իմաստուն նահապետ կյանքի փորձությունների: Ու հիմա ես գրում եմ այս տողերը քո մասին և զգում եմ, որ սրանք քոնք չեն ու շատ անգույն են ներկայացնում քեզ: Քոնք... քոնք ոսկետառ պետք է լինի, ոսկետառ մարդ, ոսկետառ ընկեր, ոսկետառ ուսուցիչ, ու ոսկետառ տողեր պետք է շարվեն, շարվեն քո անվան տակ ու ու քո նկարի տակ:

Բայց ինչ արած, ընդունված կարգ է, և ես քեզանից ներողություն խնդրելով, իմ անգույն տողերի տակ դնում եմ անգույն ստորագրությունը:

Շնորհավոր տոնը:

Ընդունված կարգ է, և ես քեզանից ներողություն խնդրելով, իմ անգույն տողերի տակ դնում եմ անգույն ստորագրությունը:

Շնորհավոր տոնը:

Քեզ միշտ հարգող, սիրող ու մեծարող Աննա ԱՅՎԱԶՅԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

2013թ. մայիսի 20-ին Ասկերանի շրջանի Պատարա գյուղում կայացավ Արցախյան գոյամարտում մարտիրոսված հերոսներին նվիրված հուշակոթողի բացումը, որին ներկա էին ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը, ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ Պարզև Սրբազանը, պաշտոնատար այլ անձինք: Հուշարձանի կառուցման գործում մեծ էր Քաշաթաղի շրջվարչակազմի ղեկավար Սուրեն Խաչատրյանի դերը, ով ծնունդով Պատարայից է և իր ներդրումն ունեցավ մարտական ընկերներին նվիրված հուշակոթողի կառուցմանը: Այդ օրերին որոշվեց իրականացնել համագործակցություն Պատարայի միջնակարգ դպրոցի և Քաշաթաղի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության, ինչպես նաև մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնիների միջև:



Մայիսի 4-ին Քաշաթաղի շրջանի պատվիրակությունը՝ վարչակազմի ղեկավար Սուրեն Խաչատրյանի գլխավորությամբ, այցելեց Պատարա: Միջոցառմանը ներկա էին ՀՀ և ԼՂՀ կրթության և գիտության նախարարներ Արմեն Աշոտյանն ու Սլավա Ասրյանը, Ասկերանի շրջվարչակազմի ղեկավար Սերգեյ Գրիգորյանը, կրթության բաժնի վարիչ Շահեն Աղաբաբյանը, հարևան համայնքների ղեկավարներ, դպրոցների տնօրեններ, հյուրեր: Համայնքի ղեկավար Կարեն Արզումանյանը ներկայացրեց հուշահամալիրի պատմությունը, խոսեց նահատակ տղաների մասին, ովքեր եղել են իր մարտական ընկերները, մարտնչել իր հրամանատարությամբ գործող ջոկատում: Ասաց, որ Պատարայում մարտական գործողություններ չեն եղել, սակայն գյուղից բազում տղաներ են մասնակցել ազատագրական մարտերին, և 20-ից ավելին ընկել ռազմի ճամփաներին: Ծաղիկներ խոնարհելուց հետո դպրոցում տեղի ունեցավ հանդիսավոր միսս: Ներկաներին ողջունեց դպրոցի տնօրեն Արթուր Ջահանգիրյանը՝ ներ-

կայացնելով գյուղի անցյալը, պատարացիների մասնակցությունը Մեծ Հայրենականին և Արցախյան գոյամարտին: Երկրորդ աշխարհամարտին Պատարայից մասնակցել է շուրջ 400 հայրորդներ, որոնցից 174-ը տուն չվերադարձավ: Ա. Ջահանգիրյանը կարևորեց Քաշաթաղի և Ասկերանի շրջանների համագործակցությունը կրթական, մշակութային և այլ բնա-

գավառներում, մեր երկու հանրապետությունների կրթության և գիտության նախարարների, վարչակազմերի ղեկավարների ներկայությունը այս հանդիպմանը: Ներկաներին իրենց ելույթներով՝ ասմունք, երգ, պար, ողջունեցին դպրոցի աշակերտները՝ փառաբանելով նահատակ-մարտիրոսներին, Ազատամարտի բոլոր մասնակիցներին, և մեկ անգամ հավաստելով, որ մեր երկրի ապագան հուսալի ձեռքերում է, որ այս երեխաներն են վաղվա մեր զինվորն ու ուսուցիչը, հողի մշակն ու շինարարը: Ասմունքում հատկապես աչքի ընկավ 5-րդ դասարանի Նարա Խաչատրյանը: Աշակերտների ելույթից հետո կայացավ հուշամեմորիալի փոխադարձ հանձնում. դպրոցի կազմակերպիչ Լենորա Դանիելյանը Քաշաթաղի շրջանի կրթության բաժ-

նին հանձնեց մեծադիր նկար: Իսկ Քաշաթաղի շրջանի կրթության բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը դպրոցին նվիրեց Ծիծեռնականքի լուսանկարը, շնորհավորեց Մայիսյան տոների առթիվ՝ աշակերտներին մաղթելով բարի, որ երբեք պատերազմ չտեսնեն: Բերծորի արվեստի և սպորտի դպրոցի տնօրեն Կարինե Մովսեսյանը նվիրեց իրենց սաների գեղանկարներից:

ԼՂՀ ԿԳ նախարար Սլավա Ասրյանը կարևորեց կրթական բարեփոխումներում ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի դերը՝ նշելով, որ մեր երկու հանրապետություններում կրթական գործը նույն հարթության վրա է: Դիմելով դպրոցականներին՝ նա կոչ արեց լավ սովորել: Ս. Ասրյանը երկու շրջանների կրթական համակարգի աշխատողների հանդիպումը որակեց որպես կարևոր գործ՝ ասելով, որ Քաշաթաղի շրջանով է Արցախը միավորվում Մայր հայրենիքին. այսինքն՝ կայացել է 1988-ի մեր երազանքը՝ ՄԻԱՑՈՒՄ: «Այս կայան իր դրական արդյունքը կտա, ցանկալի է, որ լինի շարունակական», - ասաց Ս. Ասրյանը՝ շնորհակալություն հայտնելով կազմակերպիչներին: Նիստից հետո նախարարները, շրջվարչակազմերի ղեկավարները գրուցեցին աշակերտների հետ, լուսանկարվեցին:

Զրուցում են համայնքի ղեկավարի և դպրոցի տնօրենի հետ: Պատարա գյուղն ունի 217 ընտանիք՝ 860 բնակիչ: Համայնքի ղեկավարն ասաց, որ իրենց բնակավայրում և մոտակայքում կան շատ պատմական հուշարձաններ, և դրանցով հնարավոր է եղել որոշել, որ գյուղը գոյություն է ունեցել 15-րդ դարից էլ առաջ: Արցախյան գոյամարտի մասնակիցներից 5 հոգի, որից երկուսը՝ հետմահու, արժանացել են «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի: Գյուղում բացի անասնապա-

հույությունից, մեղվաբուծությունից և հողագործությունից զբաղվում են գորգագործությամբ: Պատարայի գորգերը վաղուց են հայտնի, ասաց համայնքապետը:

Դպրոցը գործում է 1871 թվականից, այժմ սովորում է 118 աշակերտ, աշխատում՝ 24 ուսուցիչ: Դպրոցի տնօրենն ասաց, որ այս ուստարում դպրոցականների առարկայական օլիմպիադայի շրջանային փուլին իրենց դպրոցից մասնակցել է 17 աշակերտ: 10-րդ դասարանի աշակերտ Արեն Ավագյանը հայ գրականություն առարկայից (ուսուցիչ՝ Ծովինար Արզումանյան) հանրապետական փուլում գրավել է 1-ին տեղ: Երևանում արժանացել է 3-րդ կարգի դիպլոմի: Անցած ուստարվա 7 շրջանավարտներից 6 հոգի ընդունվել են Արցախի պետական համալսարան և ՀՀ ազգային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղը:

Աստղաշենի դպրոցի տնօրեն Սլավա Գրիգորյանն ասաց, որ համագործակցում են հարևան Պատարայի դպրոցի հետ, և ուրախ է այս կարևոր հանդիպման համար: Զրուցում են 2-րդ դասարանիցիների հետ: Աշխույժ և համարձակ երեխաներ են: Ալբերտ Դավթյանը որոշել է զինվորական դառնալ, իսկ Հովիկ Իսրայելյանը՝ ոստիկան: Արտյոն Խաչատրյանը ցանկանում է բժիշկ դառնալ, իսկ Էլինան, որ ավելի լավ է սովորում, ըստ դասընկերների, ընտրելու է ուսուցչի մասնագիտությունը: Միշա Խաչատրյանը չի որոշել հետագա անելիքը, բայց շատ է սիրում իրենց գյուղը: 4-րդ դասարանիցի Լյուդմիլա Խաչատրյանը երազում է դիզայներ դառնալ, իսկ Նրա համարասարանի Արև Գաբրիելյանը՝ մաթեմատիկոս:

Հրաժեշտ են տալիս Պատարային, մեր բարի, աշխարհի ամենազգնիվ ու լավ երեխաներին՝ հավատով, որ կիրականանան նրանց երազանքներն ու նպատակները: Եվ ամենակարևորը՝ պատերազմ չտեսնեն:

Ջոհար ԸՈՔՈՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՅՐ ԲՈՒՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹՅՆԵՐԸ ԵՂԵՂՈՒՄԻՆ

Օրերս ԼՂՀ Շահումյանի շրջանի եղեգնուտ համայնք էին այցելել Երևանի պետական համալսարանի շուրջ հարյուր երիտասարդներ, որոնք եռօրյա այցով եկել էին Արցախ՝ կազմակերպելու միջոցառումներ շրջաններում: Համալսարանականներին գլխավորում էր պրոֆեսորադասախոսական կազմը: Այցի նպատակը Արցախի և Հա-

անցկացրեց դասախոսություն Համո Սահյանի կյանքի ու գործունեության մասին: Ապա հայրենասիրական խոսքով հանդես եկավ համալսարանի «Վարդանանք» ռազմահայրենասիրական ակումբի նախագահ Սաթենիկ Աբրահամյանը: Ներկա էր նաև նույն ակումբի փոխնախագահ՝ Ռուզաննա Կրպեյանը: Դրսում լսվող ազգային երգ ու պարի ակորդներին արձագանքեցին համալսարանականները՝ հանդես գալով համերգային ծրագրով:



Դպրոցի բակում իսկական տոն էր, աշակերտներն էլ էին խառնվել նրանց, ու շրջապատի բնությունն անգամ ոգևորվել էր հայոց ազատատենչ մարտապարերի դրվիումներից: Ավարտելով իրենց ծրագիրը՝ նրանք հեռացան դպրոցից՝ նվիրելով համակարգիչ և տպիչ սարք: Իսկ դպրոցի տնօրենությունը, հայտնելով իր երախտագիտությունը և ի հիշատակ այս այցելության, համալսարանի թանգարանին նվիրեց Արցախը խորհրդանշող «Մենք ենք ու լեռները մեր» փոքրիկ հուշակոթողը և Արցախի փառքը հանդիսացող Գանձասարի հոյակերտ վանքի կտավը: Հուսանք, որ նմանօրինակ այցելությունները կլինեն շարունակական և մեր սաներին ուղի կբացեն դեպի համալսարանական բարձունքներ:

Մարիամ ՓԻՆԱՅՅԱՆ

Գնահատանք

«ՄԱՐԴ ԱՊՐՈՒՄ Է, ՈՐ ԱՆԽԱՏԻ...»

Կյանքի իններորդ տասնամյակը ուղք դրած, վաղուց վաստակած հանգստի անցած թռչակառու մանկավարժ, լրագրող Միքայել Բայանի ստեղծագործական ավյունին կնիսանձեր ցանկացած երիտասարդ լրագրող: Սովորաբար, մարդ այդ տարիքում ավելի շատ անցած ճանապարհին է հայացքն ուղղում, արած-թողածն ի մի բերում, մինչդեռ վաստակաշատ մանկավարժը միշտ առաջ է նայում՝ հավատարիմ մնալով իր դավանանքին՝ «Մարդ ապրում է, որ աշխատի»... Եվ աշխատում է՝ ստեղծագործելով արձակ ու չափածո ժանրերում՝ բանաստեղծություններ, պատմվածքներ, ակնարկներ, դիմանկարներ: Վերջին տարիների նրա գրական հունձքն ամփոփվել է երկու գրքերում, որոնք հրատարակվել են 2013 թվականին («Ամնուռաց անուններ, խոհեր, մտորումներ» և «Միշտ մեզ հետ են, մեր կողքին»):

Նրա մանկավարժական կեսդարյա հարուստ փորձն ու գիտելիքները միշտ էլ արժանվույց են գնահատվել. 1971-ին արժանացել է «Ավագ ուսուցիչ» պատվավոր կոչմանը, իսկ 2001-ին ճանաչվել է 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ. բազմիցս պարգևատրվել է պատվոգրերով, գովասանագրերով ու մեդալներով: Իսկ վերջերս դրանց ավելացավ ևս մեկը, այս անգամ արդեն գնահատվեց նրա լրագրողական վաստակը: Շուրջ վեց տարի է՝ թղթակցում է ՀՀ «Հայ զինվոր» շաբաթաթերթին և Արցախում լույս տեսնող «Մարտիկ» ու «Հայրենյաց պաշտպան» թերթերին, նաև այլ պարբերականների: Նրա հեղինակած տասնյակ ակնարկների ու դիմանկարների շարքը մի յուրօրինակ դյուցազնապատում է, որի հերոսներն Արցախյան գոյամարտում կյանքը

իրենց մահով ետ գնած քաջորդիներն են, անհայտ կորած ազատամարտիկները, հաղթանակն իրենց բազկի ուժով կռած և պատվով ու փառքով տուն դարձած բյուրավոր մարտիկները: Ուշագրավ են նրա հողվածները Մեծ Հայրենականին մասնակցած համազրուղացիների մասին, ովքեր ֆաշիզմի դեմ պայքարում աչքի ընկան իրենց հերոսությամբ ու արիությամբ, իսկ հետպատերազմյան տարիներին նրանց սիրագործությունների վայրը աշխատանքային ճակատը դարձավ: Նրա հայրենի գյուղը՝ Մեծ Թաղերը, 540 զինվոր է ուղարկել ռազմի դաշտ, որտեղից չեն վերադարձել 238-ը, իսկ Արցախյան պատերազմի մասնակից 300 երիտասարդներից 45-ը այդպես էլ չվայելեցին հաղթանակի բերկրանքը: Միքայել Բայանը հպարտությամբ է փաստում. «...Եթե երկրորդ աշխարհամարտում մենք մարշալ Խանփեդյանց ենք տվել ու գեներալ Ալեքսանդր Հուռունյան, ապա թուրքերի կողմից մեզ պարտադրված պատերազմում տվել ենք գեներալ-լեյտենանտ Արթուր Աղաբաբյան, գեղապետ Գարիկ ժամհարյան ու էլի բարձրաստիճան շատ զինվորականներ»: Որպես բարեխիղճ տարեգիր՝ նա սերունդներին է ավանդում իր ապրած բարդ ու դժվարին ժամանակաշրջանի ու արժանավոր ժամանակակիցների պատմությունը՝ հիշողությամբ դաշտում բացելով իր ակուն ու ծիրը: Գալիք սերունդները նաև նրա գործերում են փնտրելու իրենց անցյալը, որպեսզի առավել հաստատուն լինի երթը դեպի ապագա: Անշուշտ, այս տեսանկյունից է գնահատել մանկավարժ-լրագրողի վաստակը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ում հրամանով Միքայել Բայանը վերջերս պարգևատրվել է Խորհրդային Միության կրկնակի հերոս, մարշալ Բաղդասարյանի անվան մեդալով: Ընդհանրապես ենք անդուլ ու անխոնջ մտավորականին, մաղթում նրան առողջություն ու ստեղծագործական հաջողություններ:

Մելանյա ՄԻՆՈՅԱՆ

ՂԱՐԱԲԱՂՑԻՆ

ՆԱ ԱՊՐՈՒՄ Է ԻՐ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹՅԱՆ ՏՈՂԵՐՈՒՄ

Հրաչյա Բեգլարյանի ծննդյան 80-ամյակի առթիվ

ու շինարար, որովհետև դրախտանման այգի ուներ Ստեփանակերտում, իսկ ծննդավայրում՝ Կոլխոզաշեն գյուղում, վերականգնել և շեն էր պահում հայրական տունը:

Նա հասարակ մարդ չէր, ինչպես բանաստեղծության մեջ է ասվում, գիտնական էր առանց կոչումների. Արցախի պատմության ու բնաշխարհի հարստությունների վերաբերյալ Բեգլարյանի կատարած ուսումնասիրությունները գիտական աշխարհի համար բավականին մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Իսկ ահա նրա հյուրասեր լինելու մասին ուղղակի առասպելներ են պատմում: Ինչպես ասեն մի դարաբաղցի, ինքն էլ գիտեր գինը աղ ու հացի, կյանքում երբեք անաշխատ եկամուտով հաց չէր կերել, իսկ վերջին պատառն էլ կիսում էր ընկերոջ հետ:

Հրաչյա Բեգլարյանի՝ որպես դարաբաղցու կերպարի, ամենաբնորոշ գծեր կարելի է համարել նրա ըմբոստությունը: Նա չէր կարողանում հանդուրժել սուտն ու կեղծիքը, ամհաշտ էր անարդարության դեմ: Հատկապես Արցախյան շարժման ժամանակ դրսևորվեց նրա կրակոտ բնույթը, երբ հայրենասիրական կոչեր էր հնչեցնում հանրահավաքներում, իսկ հետագայում՝ զինված պայքարի փուլում, որսորդական հրացանն ուսին այցելում էր առաջնագիծ, ոգևորելու համար հարազատ գյուղի պաշտպաններին: Իզուր չէին նրան Արցախյան գոյսպայքարի մրկահավ կոչում՝ նկատի ունենալով հենց Բեգլարյանի փոթորկուն բնավորությունը:

Հիմա էլ, երբ ֆիզիկապես մեզ հետ չէ, ապրում են նրա տողն ու խոսքը, թողած ճշմարիտ պատգամները: Դա վերստին շեշտվեց բանաստեղծի 80-ամյակին նվիրված հոբելյանական երեկոյի ժամանակ, որը տեղի ունեցավ մայիսի 2-ին: Ստեփանակերտի մշակույթի պալատում կազմակերպված հանդիսավոր միջոցառումը համաժողովրդական սիրո ուրույն վկայություն էր: Հավաքվել էին բանաստեղծի մտերմական ու ընթերցողական շրջանակների, մտավորական խավի ներկայացուցիչներ: Միջոցառմանը ներկա էին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, խորհրդարանի ու կառավարության անդամներ:

Նախ ցուցադրվեց Հրաչյա Բեգլարյանի գրական-հասարակական գործունեության մասին պատմող տեսաֆիլմ, որի հեղինակը՝ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Արմեն Մովսիսյանը, նույնպես ներկայացել էր հուշ-երեկոյին և ելույթ ունեցավ՝ վերաիմաստավորելով բանաստեղծի արժանի վաստակը:

ԼՂՀ գրողների միության նախագահ, բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը, բարձր գնահատելով Հրաչյա Բեգլարյանի ստեղծած արվեստի գեղագիտական արժեքը, միաժամանակ նշեց, որ իբրև մարդ՝ նա անկրկնելի էր իր ներքին ազնվությամբ: Գլխավոր երակը, որով սնվում էր Բեգլարյանի պոեզիան, սկիզբ էր առնում հայրենասիրությունից, որով ինքն էլ տոգորված՝ օրինակ ծառայեց շատերի համար: ԳՄ նախագահը հետաքրքիր

որվագներ պատմեց Հրաչյա Բեգլարյանի մասին՝ ավելի ամբողջացնելով գրողի ինքնատիպ կերպարը:

Բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանը, ով նույնպես եղել է հոբելյարի մտերիմ ընկերը, իր ելույթում նշեց, որ Հրաչյա Բեգլարյանի ժառանգությունը գործառնական մշակակություն ունի: Նրա «Արցախ-նամե»-ների հատորները հենց այդ առաքելությանը են ներկայանում և պատմագիտական, գեղարվեստական ու մշակութաբանական տեսանկյունից կարևոր մշակակություն ունեն:

Ուշագրավ էր բանաստեղծի դատեր՝ Ռուզան Ղազարյանի ելույթը, որը համեմատ էր հոր մասին հուզաթաթավ խոսքերով և հուշի պատառիկներով: Պապի գրած բանաստեղծությունների ընթերցանությամբ հանդես եկան նաև նրա թոռնուհին ու ծոռնուհին:

«Ինչ-որ տարերային սկիզբ ունի Բեգլարյանի պոետական նկարագիրը, ենթագիտակցական այնքան ինքնաբերական է, որ կարծես օտարվում է բանաստեղծությունը, քանզի կա բացարձակ մի եզերք, որ ավելի իմաստավոր է, քան բանաստեղծությունը: Այդ եզերքը Արցախականն է՝ որպես գաղափար, որպես գեղագիտական իդեալ և որպես տիեզերական արարչություն»,- Հրաչյա Բեգլարյանի մասին գրել է ակադեմիկոս Սերգեյ Սարիմյանը: Ավելի դիպուկ, թերևս, չես ասի:

Կ. ՉԱԲԻԵԼՅԱՆ

ՄԵՉ շԵՏ ԵՆ ՄԻՇՏ ՄԵԹԵՐԸ ՄԵՐ

Հրաչյա Բեգլարյանի սուրբ հիշատակին

Դու ծառ ու ծաղկի մեծ երգիչ էիր, Մեր հին գրերի վերծանիչ էիր, Բայց կարևորը, դու մարդ էիր, մարդ, Քո մաքուր խղճով ու հոգով շիտակ: Դու մեծ հայ էիր, մեծ դարաբաղցի, Մարտնչող պոետ ու քաղաքացի, Դու քայլում էիր առաջին շարքում Ու մեր տղերքին հավատ ներշնչում: Դու՝ մեծ պայքարի լիդեր, ջատագով, Դու անահ մարտիկ՝ քո խոսքով, գործով: Ընկերության մեջ դու՝ անզուգական, Քո ողջ երթամբ՝ Այդ սովորական: Քո ողջ երթամբ՝ հայ ու հայկական, Դու՝ մեր Արցախի արժանի զավակ, Դու՝ լավ բանաստեղծ ու բանահավաք, Դու՝ այնքան բարի, դու՝ այնքան արդար, Դու՝ մեր սրտերում կապրես շատ երկար: Դու՝ մայր Արցախի ազնիվ տարեգիր, Բազում անվանի մարդկանց կենսագիր, Դու՝ միշտ երագող, խոհեմ գիտնական, Կոլխոզաշենցի համեստ շինական: Քո «Դարաբաղցին» աշխարհ է շրջել, Բյուրավոր մարդկանց սրտերը հուզել, Դու շողում ես քո անուշ երգերում, Քո հողոտ, շողոտ, քո լույս գրքերում: Դու դեռ շատ երգեր պիտի գրեիր, Արցախի փառքը երկինք հասցնեիր, Բայց, ավա՜ղ, մեզնից ընդմիջտ հեռացար, Վառ աստղի նման, շողացիր, անցար... Անցար դու խաղաղ, առանց հառաչի, Թողնելով խոսքը՝ քո վերջին, վերջին, Անցար՝ թողնելով բարի մի ամուսն, Որ հար պիտ հնչի Արցախ աշխարհում:

Միքայել ԲԱԼՅԱՆ Թոշակառու ուսուցիչ

Այբուբենի տոն

Չեն հաղթի երբեք մեզ բանակ ու զենք, Երբ մենք ոսկետառ այբուբեն ունենք, Չի գործել ենք մենք ոչ միայն սրով, Այլ խոսք ու գրով մեր հուզվախոսով:

Արդեն քանի տարի մայրաքաղաքի (և ոչ միայն) բոլոր կրթօջախներում մերոսյան այբուբենի ուսուցման ավարտը նշանավորվում է փոքրիկների մտապատկերում վառ տպավորվող ու նրանց յուրօրինակ հայրենասիրական լիցք հաղորդող շքեղ հանդիսությամբ: Այս տոնը լավ առիթ է ևս մեկ անգամ մեծարելու և երախտագիտության խոսք ասելու մեր այբուբենի իմաստուն ստեղծողին՝ հանճարեղ Մաշտոցին: «Հայոց այբուբենը գլուխգործոց է»,- հիացմունքով ասել է ֆրանսիացի լեզվաբան Անտուան Մեյեն: Մեսրոպյան սուրբ գրերն անմար լույսեր են, որոնք լուսավորում են սերունդների ճանապարհը և բացում գիտելիքի հրաշք աշխարհի ոսկի դռները: Ընդհանրապես տառերի մենք՝ հայերս, մնացինք կանգուն ու հայ մնացինք՝ զինվելով բռնությանն ընդդեմ: Տեղին է մեջբերել Գևորգ Էմինի խոսքը. «Հայոց գիրը ուժեղ դուրս եկավ հայ ժողովրդի ունեցած բոլոր զենքերից»: Իրոք, Մաշտոցյան այբուբենը աստվածային պարզ է, իսկ նրա յուրաքանչյուր տառ, յուրաքանչյուր հնչյուն՝ կարկաչուն ու զուլլալ երգ:

Այբուբենին նվիրված անմոռանալի տոնահանդես էր կազմակերպվել Ստեփանակերտի հ.6 հիմնական դպրոցում: Գարնանային մի ջինջ առավոտ ոսկետառ Այբբենարանին «մնաս բարով» ասելու էին եկել երկու առաջին դասարանների աշակերտները: Հավաքվել էին ուսուցիչներ, ծնողներ, հյուրեր: Բոլորն ուրախ էին և անչափ հուզված: Դա հիլիճի հիացական

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՍՈՒՐԲ ԳՐԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ծափերի ներքո բեն բարձրացան օրվա հերոսները՝ դասավորներ Ն. Մանգասարյանի և Հ. Սարգսյանի ուղեկցությամբ: Փոքրիկները ողջույնի ջերմ խոսքեր ասացին հարազատ կրթօջախին, սիրելի ուսուցիչներին, սուրբ հայրենիքին, բոլոր ներկաներին, ապա գեղեցիկ երգով փառաբանեցին հայ ազգը հավերժ հայ պահողին՝ Մ. Մաշտոցին: Հինգերորդ դարում մոռացվել էր մի պահ հանկարծ ծիածանվեց, և հրաշափայլ այդ պահին հայոց հողում ծնվեց Մ. Մաշտոցը, շնորհիվ ում տարիներ անց Աստծո կամոք թև առան ազգափրկիչ տառերը:

Փա՛ռք քեզ, մե՛ծն Մաշտոց, Փա՛ռք քեզ, ո՛վ հանճար, Մենք պիտի գովենք անունդ անմահ, Մենք պիտի երգենք տառերդ անմար, Մենք պիտի կերտենք նորանոր գանձեր, Որ միշտ հայ ազգը արձակի ծիլեր:

Առաջին դասարանիները հանդիսավոր երգվեցին և խոստացան մեծն Մաշտոցին՝ բարձր պահել ոգին Հայկյան և սահուն ու դյուրին արտասանեցին հնչյուններն անուն առ անուն: Ապա խորխտ կեցվածքով տառ-զինվորիկները վստահ խոսեցին՝ բացահայտելով իրենց խելքն ու ձիթը: Այսպես՝ Ա զինվորիկն Արա գեղեցիկն է, հպարտ և Արցախ աշխարհն է անպարտ, Բ-ն Բեկոր-Աշոտն է, բերդն անառիկ Դարաբաղի, Դ-ն Սասունցի Դավիթն է և դաշնակ Դրոն, Զ-ն զավակն է զորեղ երկրի, Խ-ն խելոք Խորենացին է, Գ-ն Հայկ Նահապետի քաջազուն թոռն է, Գ-ն ճանապարհն է՝ ցրված հայերին հայրենիք բերող, իսկ Զ-ն չարը խափանող քաջազունն է:

Ֆ-ն բազմել է իր պապերի ավանդական ֆայտոնին և շտապում է այբուբենի հանդիսավոր մեծ տոնին:

Աշակերտները միաբերան շնորհակալություն ասացին առաջին դասագրքին՝ ոսկեբերան Այբբենարանին ու հայտնվեցին կախարդական թվերի՝ մաթեմատիկայի աշխարհում,



որտեղ թվերն ապրում են հաշտ ու համերաշխ և իրենց հրաշքներով զարմացնում բոլորին: Աշակերտները սիրով ներկայացրին կախարդական քաղաքի բնակիչներին: Հետո նրանք ներկայացրին Հ. Թումանյանի «Ծիտը» հեքիաթը, որն ավարտվեց «հարսանքավորների» զվարթ երգ ու պարով:

Այբուբենի տոնն ավարտվեց հաճելի անակնկալով. երեխաների զարմացական հայացքների ներքո ներս բերեցին խորհրդավոր տորթ-այբուբենը: Անակնկալ ունեին նաև ծնողները, ովքեր երեխաներին նվիրեցին «Առաջին քայլեր» ֆոտոալբոմը և հեքիաթներ:

ի գրքեր:

Երախտագիտության խոսք ասվեց փորձառու դասավար Ն. Մանգասարյանի հասցեին, ով իր կյանքի զարուհները, մտքի գանձերը, հոգու պայծառ լույսն անմոռացորդ նվիրել է սերունդներին: Ընդհանրապես նաև նախադարձական խմբի ճեղքմանակաբեր ու բարեսիրտ դասավար Զ. Արեսյանին, ով տարիներ շարունակ ծով համբերությամբ և անձնվիրաբար ուսուցանում է դպրոցական կյանքի այբուբենը ապագա աշակերտներին: Պակաս գնահատականի չարժանացավ և երիտասարդ դասավար Հ. Սարգսյանի տքնաջան ու հետևողական աշխատանքը:

Տառաճանաչ դարձած դպրոցականների համար մայրենի լեզվին նվիրված այբուբենի ևս մեկ հայրենաշունչ տոն ավարտվեց: Հուսանք, որ այս երեխաները լիովին կարողացան իրենց ուսուցիչների և ծնողների հույսերը. հայրենի Արցախը շեն կպահեն, ամուր կպահեն բազում հայրողիների այրյան թանկ գնով ձեռք բերված ազատությունն ու անկախությունը, Մաշտոցի պես կպաշտեն հայրենիք, Ծիրագի պատգամով Մասիս կպահեն մեր լեզուն և հայերենը կհնչեցնեն որպես օրհներգ:

Ուիմա ՄԵԼՈՒՄՅԱՆ Սյրեթի. հ. 6 հիմն. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. մեթոդականախմբի ղեկավար

ՎԱՍՏԱԿ

ՄԵՐ ԵՐԵՎԵԼԻ ՄԱՆԿԱԿԱՐԺԸ

Ժորա Գրիգորյանի ծննդյան 80-ամյակի առթիվ



Ամենից շատ խոսում են նրա տված հետաքրքիր դասերի մասին: Ուսուցիչը դասավանդելիս մեծ ուշադրություն է դարձնում ոչ թե գիտելիքների տեսակը պարզաբանելու վրա, այլ այդ ժամին հաղորդվելիք գիտելիքները գործնական կյանքում օգտագործելու: Աշակերտները միայն դասի վերջում ուսուցչի օգնությամբ (կամ առանց օգնության) ընդհանրացնում են դասապարտքներում ստացած գիտելիքները: Այդպես ստացած գիտելիքները չեն մոռացվում, միշտ մնում են աշակերտների հիշողության մեջ: Այսպես, «Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա» դասընթացում լյարդի ուսումնասիրելիս նա չի թվարկում լյարդի ֆունկցիաները, այլ կենդանի փաստերով ցույց է տալիս, որ լյարդի հիվանդությամբ տառապող մարդկանց մոտ խանգարվում է մարսողությունը ստամոքսաղիքային ողջ համակարգում, սննդի հետ պատահականորեն օրգանիզմը ներթափանցած նյութերն անփոփոխ մտնում են արյան մեջ և նրա հետ շարժվելով, հասնում են բջիջներին ու բունավորում օրգանիզմը: Յարձակ գրքերում ևս բնութագրված են սակավարյունությամբ (արյունը ավելի քիչ բջիջներ է պարունակում): Լյարդը նաև իր մեջ պահում է ավելորդ կերած գլյուկոզից սինթեզված գլիկոգենը, որը համարվում է պատրաստված պահեստային սնունդ օրգանիզմի համար:

Այնուհետև ուսուցչի օգնությամբ աշակերտներն ուսումնասիրած փաստերի հենքի վրա եզրակացություններ են անում ստացած գիտելիքների վերաբերյալ: Կենսաբանության բոլոր դասերն էլ կարելի է այդ-

պես հետաքրքիր անցկացնել: Դասավանդման այդ մեթոդի, աշակերտների կայուն գիտելիքներ տալու այդ մեթոդական ձևի տարածման ուղղությամբ Ժ. Գրիգորյանը շատ աշխատանքներ է կատարել: Մեր դպրոցներում այժմ էլ շատ ուսուցիչներ դասավանդում պարզեցրած օգտագործում են ուշագրավ այդ մեթոդը: Ամենուսից էլ Ժ. Գրիգորյանի կազմակերպած բաց դասը Չարդուք շրջակայքում և միջնակարգ դպրոցում: Դասը ընդհանուր կենսաբանությունից էր 10-րդ դասարանում: Այդ ժամին բոլոր դասարաններն ազատ էին, որովհետև բոլոր ուսուցիչներն էլ ցանկանում էին լսել բաց դասը: Դասի թեման բարդ և դժվար լինելուց բացի նաև հետաքրքիր էր և ուշագրավ՝ «Հատկանիշների ժառանգման օրինակափոխությունները»:

Քննարկման ժամանակ բոլոր ուսուցիչներն իրենց գոհունակությունը հայտնեցին հետաքրքիր և արդյունավետ դաս լսելու համար:

Այս մեթոդի կարևորության մասին ընդարձակ հոդված է տպագրվել «Դպրոց»-ում («Գիտելիքները ամբարելու համար չեն, այլ՝ կիրառելու»): (Երևան, «Դպրոց», 15.05.1997թ.):

Ժ. Գրիգորյանը մենակ դասին չի հետաքրքիր, աշխույժ, խաղաղ մթնոլորտ ստեղծում: Նրա շուրջը հավաքված մարդիկ մեծ հետաքրքրությամբ են լսում նրա գրույցները հետաքրքրաշարժ երևույթների, բնության, առողջության պահպանման մասին: Նրա հետաքրքիր հոդվածները տպագրվում են մեր բոլոր թերթերում: Նրա գրածը բոլորն էլ կարդում են, կտրում-վերցնում՝ հետազայում կյանքում օգտագործելու նպատակով:

Ժորա Գրիգորյանի մանկավարժական գործունեությունը ուղղված է եղել դարի կարևորագույն գիտություններից մեկի՝ դպրոցներում կենսաբանության կիրառական ուղղության զարգացմանը, իսկ թոշակի անցնելուց հետո՝ այդ գիտելիքները հասարակության մեջ տարածելուն:

Ծնվել է 1934թ. մայիսի 10-ին, Ուլուբաթ գյուղում: Տարրական կրթությունը ստացել է հայրենի գյուղում: 5-6-րդ դասարանները վերջացրել է հարևան Ուկի դպրոցում: 1951թ. ուսումը շարունակել է Խնձրիստանի միջնակարգ դպրոցում: 1953թ. այն ավարտել, ընդունվել ու 1957-ին ավարտել է Բաքվի Վ. Ի. Լենինի անվան պետական մանկավարժական

ինստիտուտի կենսաբանության ֆակուլտետը:

1957-1960թթ. ուսուցիչ է աշխատել Լախիջևանի Ինքնավար Չարդաբաբայանի Գիտությունների շրջանի Լախիջևանի և Գեմուրի միջնակարգ դպրոցներում: 1960-1970թթ. քիմիա և կենսաբանություն է դասավանդել Խաչենի, Դշլաղի (այժմ՝ Ծաղկաշատ), Շուշիի և Արմավիրի անվան, Ստեփանակերտի հ. 5 և 9 միջնակարգ դպրոցներում: 1970-2000 թթ. աշխատել է ԼԴԻՍ ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտում՝ որպես կենսաբանության մեթոդական կաբինետի վարիչ: Նրա գործունեության շնորհիվ այդ տարիներին ԼԴԻՍ-ի դպրոցներում բարձրացել էր հետաքրքրությունը կենսաբանության հանդեպ: Այդ էր պատճառը, որ Ադրբեյջանի լուսավորության նախարարությունը որոշեց կենսաբանության առաջին առարկայական օլիմպիադան անցկացնել Գարաբաղում: Իսկ հաջորդ տարի Ադրբեյջանի համապետությունում օլիմպիադան անցկացվեց մարզային օլիմպիադայի համար պատրաստված հարցերով՝ կազմված Ժ. Գրիգորյանի կողմից:

Ուսուցիչների կատարելագործման ինստիտուտում աշխատելիս Ժ. Գրիգորյանի նորամտությունները եղավ ուսուցիչներին տեսականից գատ զործնական գիտելիքներով և մեթոդական հնարներով գինելը: Նրա մյուս նորամտությունները եղավ դպրոցներում կենսաբանության կաբինետների ստեղծումը: Նրա ջանքերով բոլոր դպրոցներում անցան դասավանդման կաբինետային համակարգին, որը մեծ դեր կատարեց մարզի դպրոցներում կենսաբանություն առարկայի դասավանդման որակի բարձրացման գործում: Կաբինետները դիտողական պարազանների մեծ մասը ստեղծվել է տեղական նյութերից:

Բարձր է ժորա Գրիգորյանի դերը Արցախի դպրոցներում աշակերտներին՝ գյուղատնտեսական աշխատանքները այդպես դասավանդելու գործում: Այդ նպատակով նա գրեց իր առաջին՝ «Ուսումնասիրողական հոդվածների ստեղծումը» գիրքը, որը յուրատեսակ ուղեցույց է կենսաբանության ուսուցիչների համար ուսումնասիրողական հոդվածային աշխատանքները պլանավորելու, բարձր թերթ ստանալու նպատակով փորձառարական աշխատանքներ կատարե-

լու ուղղությամբ: Դպրոցական հոդվածներում գիտական և փորձնական աշխատանքներ կատարելու գործում լավ արդյունքներ են ստացվել: Մինչև հիմա էլ շատերի հիշողության մեջ են աշակերտների ստացած բերքի ցուցահանդեսները, նրանց սերը գյուղատնտեսական աշխատանքների նկատմամբ:

Դրանից հետո կենսաբանը գրեց կյանքում ոչ պակաս օգտագործելի «Արցախի վայրի բույսերը կենցաղում» գիրքը: Դա էլ օժանդակ ձեռնարկ է կենսաբանության ուսուցիչների համար: Բացի այդ, գիրքն օգնում է, որպեսզի ավելի լավ օգտագործվեն վայրի բույսերը որպես սնունդ և բժշկության մեջ:

Թոշակի անցնելուց հետո էլ վաստակաշատ մանկավարժը չի թուլացրել իր ակտիվ գործունեությունը: Նա սկսել է քարոզել կենսաբանական կարևոր գիտելիքները, որպեսզի մեր հայրենակիցները կարողանան ճիշտ օգտվել բնությանից՝ կլիմայի գլոբալ փոփոխության (տաքացման) ժամանակաշրջանում: Նրա հոդվածները հաճույքով են ընթերցվում, քանի որ նա գրում է բնությունից ճիշտ օգտվելու, ճիշտ սնվելու, աշխատանքի և հանգստի ռեժիմը պահպանելու, վնասակար սովորությունները (ծխելու, խմելու, թմրանյութեր օգտագործելու) թողնելու, օրգանիզմի իմունդետետը բարձր պահելու և առողջ պահպանելու, այլ թեմաների մասին: Զենց այս կարևոր հարցերի մասին է նրա երրորդ՝ «Կենսաբանությունը առօրյա կյանքում» գիրքը:

Տախտրո դարի վերջերին կենսաբանության հանդեպ հետաքրքրությունը կտրուկ բարձրացավ, և առարկան ավելի խոր ուսումնասիրելու համար ստեղծվեց կենսաբանության խնդիրների և վարժությունների ժողովածու: Աշակերտներին, ուսուցիչներին, ուսանողներին օգնելու նպատակով պատրաստեց «Կենսաբանական խնդիրների լուծման մեթոդները» օժանդակ ձեռնարկը: Մինչև հիմա էլ այն համարվում է դպրոցում ամենաշատ օգտագործվող գրքերից մեկը:

Չաջորդ գիրքը նույնպես կարևոր նշանակություն ունի Արցախի համար: Գրելով հայրենի գյուղի բազմաչափ պատմությունը՝ նա ապացուցել է, որ գյուղի նախկին բնակիչները մեր քաղաքային սկզբում ապրում էին Խաչենի հովտում: (Զետագայուն

թուրքերի պատճառով չորս անգամ տեղից տեղ են տեղափոխվել: Վերջին տեղը սարի գագաթին Ուլուբաբն էր): Անչափ կարևոր հայտնագործություն էր, երբ Ժ. Գրիգորյանը ապացուցեց, որ նախկին ուլուբաբցիները մինչև Խաչենի հովտում բնակվելը, ապրում էին Կռանա Պեկին քարանձավում: Կենդանի այս սորլեն անհողորդը ցույց է տալիս, որ արցախցին որպես հայ ազգ, որպես մարդ ձևավորվել է այս հողի վրա, Արցախում:

Ամվանի մանկավարժի նախափորձերը գիրքն էլ արժեքավոր է, որը ստագրվեց ԼԴՅ կրթության և գիտության նախարարության աշակերությամբ, և այս կապակցությամբ հեղինակն իր շնորհակալությունն է հայտնում նախարար Ալավա Ասրյանին: Նրա այս՝ «Մեր կյանքի մասին» գիրքը պարունակում է առօրյա կյանքում կիրառվող 30-ից ավել հետաքրքիր հոդվածներ: Գրքի հիմնական գաղափարն այս է՝ շատանալ, ուժեղ սերունդ աճեցնել, որպեսզի կարողանանք ազատագրված հայրենիքը պահել, չթողնենք, որ թուրքը մերից ոտը դնի Արցախ աշխարհ: Պատրաստ է տպագրության նրա «Մենք և թուրքերը» գիրքը: Այն կարդալով՝ ընթերցողը պատկերացում է կազմում, թե թուրքերն ինչ խորհածանկ քայլեր են օգտագործում մեր հայրենիքը ներթափանցելու համար: Ինչու են նրանք սուտասան, մարդասպան, սեռգ ու խարդախ, ուրիշ ազգերի նկատմամբ անբարյացակամ, ինչու նրանք միշտ գողություն են անում: Գիրքը գրվել է Ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ:

Չավելենք, որ Ժ. Գրիգորյանի անունը մտցված է Ստեփանակերտ քաղաքի 100 լավագույն մանկավարժների ցանկը: ԼԴՅ կառավարությունը բարձր է գնահատել անվանի մանկավարժի ներդրումը: Նա պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով:

«Լուսարար»-ի ընթերցողների անունից շնորհակալություն ենք անվանի մանկավարժի 80-ամյա հոբելյանը, մաղթում, որ նա դեռ երկար արցախյան երկարակյենության գաղտնիքները բացահայտի մեր հասարակությանը:

Ս. ԽԱՉԱՐՅԱՆ

ՄՈՒՆՎԱԾ ԱՐՄԱՏԱԴՏՈՒՂ

Ես անչափ զարմացած եմ, որ մեզ մոտ բողոք մոռացված բույս է, մարդիկ իրենց տնամերձ հողամասերում, բանջարանոցներում բուստաններում համարյա թե բողոք չեն աճեցնում, սպասում են, թե ուրիշ տեղից երբ կբերեն: Մանավանդ որ բողոք շատ խնամք չի պահանջում, իր երկար արմատներով կարողանում է հողի ներքևի շերտերից ջուր և սննդանյութեր գտնել:

Ուշադրություն դարձնենք՝ բողոքի արմատապտուղները պարունակում են զգալի քանակությամբ հանքային աղեր (կալիում, կալցիում, մագնեզիում, երկաթ, ֆոսֆոր, ծծումբ), շաքար, սպիտակուց, բջջանյութ: Բողոքի մեջ առանձնապես գնահատվում է Շ վիտամինը: Բողոքի եթերային յուղերն արմատապտուղին տալիս են յուրահատուկ համ և բուրմունք:

Բողոքի կենսաբանական ակտիվ նյութերը գրգռում են մեր ախորժակը, օժանդակում, խթանում ստամոքսաղիքի արտազատմանը՝ դրանով էլ բարելավում մարսողությունը: Դրա համար էլ օգտակար է ճաշից առաջ ուտել բողոքի պատրաստած աղանդեր:

Բողոքի բուսական բջջանյութը (թաղանթանյութ) ուժեղացնում է աղիքների պերետալտիկան (կծկումային շարժումները), որի հետևանքով օրգանիզմում հեռանում են խոլեստերինի ավելցուկները: Սա շատ անհրաժեշտ է մեզ համար աթերոսկլերոզ հիվանդու-

թյունը կանխելու, աղիքները մաքրելու համար: Դժվար չէ հասկանալ, թե ինչու տարեց մարդիկ պետք է իրենց սննդի հետ ավելի շատ օգտագործեն բողոքը:

Կարևոր դեր են կատարում նաև բողոքի բաղադրության մեջ եղած ֆիտոնցիդները: Նրանք աղիքներում ոչնչացնում են հիվանդության բակտերիաները կամ խանգարում են նրանց աճին և մեզ պաշտպանում մի քանի վարակիչ հիվանդություններից:

Շատ կարևոր է, որ բողոքն օգտագործում ենք միայն թարմ վիճակում: Նրա մեջ գտնվող կենսաբանական ակտիվ նյութերը ջերմային մշակման դեպքում իրենց օգտակար հատկությունների մեծ մասը կկորցնեն այդ դեպքում: Բողոքը սովորաբար կտրտում են, բարակ կտորներ դարձնում կամ մանրացնում են խոշոր բերիչով, համեմուն բուսական յուղով կամ թթվասերով: Դառնությունը մեղմացնելու համար մանրացրած բողոքի ավելացնում են մանրացրած գազար:

Բողոքի դառնությունը հեռացնում են նաև ուրիշ եղանակով. մանրացրած բողոքին ավելացնում են աղ, լավ խառնում են, 15 րոպեից հետո սեղմելով առանձնացնում են հյութը, բողոքի յուղ կամ կաթնասեր ավելացնելուց հետո օգտագործում: Բողոքը կարելի է ուտել նաև բողոքային ավանդական ձևով. կտրտած բողոքի աղ են ցանում և ուտում:

Բողոքը հայտնի է նաև որպես դեղաբույս:

Չին ժամանակներից սկսած, եգիպտացիները բողոքով բուժում են մի շարք հիվանդություններ: Չինա էլ ժողովրդական բժշկության մեջ այն օգտագործում են հազը, հողացավը (ռևմատիզմ), մկանային ցավերը, ռադիկուլիտը բուժելու համար: Ցավոք տեղերին շփում են բողոքի հյութ: Բողոքի հյութ կարելի է ստանալ բերիչով մանրացրած բողոքի մասսան սեղմելով: Ստացած հյութին խառնում են շաքար կամ մեղր (կեն բաժակին՝ 1 հացի գդակ), և 4 ժամից հետո պատրաստ է օգտագործելու:

Պետք է հիշել, որ բողոքը սննդի մեջ օգտագործել բոլորին չի կարելի: Իրենց օրաբաժնից բողոքը լրիվ հանում են այն հիվանդները, ովքեր տառապում են լյարդի, երիկամների, ստամոքսաղիքային հիվանդություններով: Բողոքի եթերային յուղերը կարող են վերոհիշյալ հիվանդությունները սաստկացնել, սրել:

Բողոքը ստացվել է վայրի բողոքից, որը լայն տարածված աճում է մայր ցամաքի բոլոր շրջաններում, ամենուրեք: Մեզ մոտ՝ որպես մոխիրոտ, մեծ վնաս է տալիս գյուղատնտեսությանը: Չիշենք մեր վատ քաղահանած արտերը, որտեղ սպիտակ և դեղին ծաղիկներով վայրի բողոքը խեղդել է ցորենին, բարձրացել վերև և արտին դեղին գույն տվել:

Չնայած վայրի բողոքը վնասակար է, մուխտո է, բայց մարդը տեսնելով, որ այն արմատներում պարունակում է շատ օգտակար

նյութեր, նրանից ստացել է ամսական բողոք (ռեդիսկա), սպիտակ բողոք, սև բողոք, որոնք մեր սեղաններից շատ արժեքավոր սննդամթերքներ են...

Ամսական բողոքը միայն բույս է, արմատապտուղը ձևավորվում է շատ արագ՝ 25-45 օրում, վերջինս կշռում է մինչև 100 գրամ: Մեկ քառ. մետրից կարելի է ստանալ 5-10 կգ բերք:

Տարեկան բողոքը երկամյա բույս է, որոշ տարտեր ամառային օգտագործման համար են, որոշ տարտեր էլ ձմեռային վերջում, բերքը հավաքում ձմեռվա սկզբում: Մեկ քառ. մետրից կարելի է ստանալ 20-30 կգ բերք:

Այսպիսով, հասկանալի է, թե ինչու են ընթերցողների ուշադրությունը ուղղում դեպի արմատապտուղները, դեպի բողոք: Չմեռային ամիսներին պակասում են կանաչեղենը, պտուղները, հատապտուղները, իսկ արմատապտուղները կլոր տարին պահպանվում են թարմ վիճակում և նրանք բաղադրության մեջ պահպանվում են մեր օրգանիզմի կենսաբանության համար անհրաժեշտ բոլոր նյութերը: Շատ կարևոր է, որ բոլոր արմատապտուղներն էլ աճում են մեզ մոտ, և մենք պետք է աճեցնենք բողոք, գազար, ճակնդեղ և այլ բանջարեղեններ:

Ժորա Գրիգորյան
Կենսաբան

ԴԱՍՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԶՐՈՍԱՆՔ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գարնանային մի պայծառ օր մենք հրաշքով հայտնվեցինք Երաժշտության մոլորակում: Կախարդական ու հմայիչ էր երաժշտության հոգևոր աշխարհը, իսկ երաժշտական տնակի բնակիչներն ապրում էին դաշտային երկինք-գույն ծաղիկներով ու ծաղկեպսակներով, փուչիկներով առատ մի վայրում:

Ծաղկաբույր կար դահլիճում, կենսափիզիկ ու կենսոլորտ բողբոջային մի կյանք, գարուն ու տաք ամառ: Մեղեդային հնչյուններն իսկապես հրաշքներ են գործում. մարդու մեջ արթնանում է հոգին, փոխվում է հոգեվիճակը, տրամադրությունը: Եվ փոխվեց տրամադրությունը, փոխվեց՝ շնորհիվ օրվա բարձրաճաշակ միջոցառման, որ նախաձեռնել էր Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի երաժշտության երիտասարդ ուսուցչուհի Նարինե Թովմասյանը:

Միջոցառումը նպատակ ուներ ընդլայնել աշակերտների երաժշտական մտահորիզոնը, դաստիարակել հետաքրքրություն և սեր արվեստի, մասնավորապես, երգ-երաժշտության հանդեպ: Երեխաները ցույց տվեցին իրենց երաժշտական կարողությունները, կատարողական հմտություններն ու երգելու ունակությունները:

Ուսուցչուհին նուրբ ճաշակով կահավորել էր դահլիճը: Բենի կենտրոնից խորհրդավոր ժպտում էր երաժշտության բարի փերին՝ ոտից գլուխ ծածկված նոտաներով: Ասես մի աներևույթ ձեռք խայտա-բոլետ ծաղիկներ ու նոտաներ էր ցրել շուրջը: Բենի աջ ու ձախ կողմերին հանրահայտ կոմպոզիտորների դիմանկարներ էին (Կոմիտաս, Արամ Խաչատրյան, Առնո Բաբաջանյան, Գեղունի Զիթյան, Մոցարտ): Դահլիճի պատերին օրվա խորհուրդն ամփոփող ցուցապատառներն էին՝ «Երաժշտական դիմակահանդես», «Երաժշտական գիտելիքներ», «Երաժշտական տնակի բնակիչները», «Զբոսանք երաժշտության աշխարհում» խոսուն վերնագրերով:

Գաղտնիք չէ, որ երաժշտությունը բոլոր ժամանակներում եղել է մարդու կյանքի անբաժանելի մասը: Այն ուղեկցել է մարդկանց թե՛ տխրության և թե՛ ուրախության պահերին: Ասել է թե՛ առանց երգի վիշտն աշխարհը կավերեր: Այո՛, առանց երաժշտության անհնար է պատկերացնել մեր կյանքը: Տեղին է մեջբերել մեծն Թումանյանի իմաստուն խոսքը. «Երաժշտությունն արվեստների մեջ էն կա-



խարդ ուժն է, որ անմարմին արտահայտություններով կարողանում է անմիջականորեն և միանգամայն տիրել մարմնին ու հոգուն և տիրաբար տանել՝ ուր որ կամենա: Հանդիսատեսը համոզվեց, որ աշակերտները լավ ծանոթ են երաժշտության դրսևորման երեք ձևերին (երգեցողություն, նվագակցություն, պար) և քաջ գիտեն, որ մարդու հոգևոր դաստիարակության վրա առավել մեծ ազդեցություն ունի երգը, քանզի ինչպես ասում է Լ.Վ. Բեթովը. «Երգեցողության ուժն ավելի կախարդիչ է, որովհետև այն կենդանի է: Երգի մեջ կա ձայն: Ձայնը ինքը կյանք է: Ամեն ինչի հիմքում կյանքն է, իսկ կյանքի հիմքում ընկած է շնչառությունը: Իսկ ինչ է ձայնը, հնչյունը, եթե ոչ շնչառության արտաքին դրսևորում: Երաժշտությունը միշտ բովանդակալից է: Յուրաքանչյուր իսկական ստեղծագործության մեջ կա միտք: Երաժշտությունը

ժողովրդական պահանջմունք է: Երաժշտությունն առավել բարձր հայտնություն է, քան իմաստությունն ու փիլիսոփայությունը»:

Ուսուցչուհի Նարինե Թովմասյանն առաջարկեց երեխաներին «ուղևորվել» ճամփորդության դեպի երաժշտության աշխարհ: Առաջարկը սիրով ընդունվեց, և որպեսզի ճանապարհորդությունն ավելի հետաքրքիր լինի, երաժշտասեր երեխաներին կամավոր միացավ երաժշտության բարի փերին՝ իր երկու ընկերուհիներով՝ բարի հրեշտակներով: Բարի փերին հայտնվեց՝ միշտ իրենից անբաժան բանալին ձեռքին: Ծանապարհորդների առաջին կանգառը երաժշտական հովիտն էր, ուր բնակվում էին նոտաները: Պարզ է, որ առանց վերջինների՝ ճանապարհը ճանձրալի ու անհետաքրքիր կլիներ: Երեխաները երգվեցին, որ ճամփորդությունից անմիջապես հետո անպայման կրկին կվերադառնան հայրենի Արցախ, որովհետև հայրենիքը շատ թանկ է, հայրենիքը չքնաղ բնօրրանն է, մայրական ջերմ ու տաքուկ գիրկն է և մոր պես թանկ ու նվիրական անուն: Այդ էր վկայում երեխաների՝ 4. Օրբելյանի «Փառք

մեր ազգության» հայրենասիրական երգը, որն ավելի ոգևորեց ներկաներին: Ապա փերին առաջարկեց երեխաներին փակել աչքերը: Երբ նրանք բացեցին աչքերը, ի գարնանս իրենց, երաժշտության աշխարհում էին: Փերին շատ ուրախացավ, որ երեխաները տեղյակ էին, թե ինչպես է ծնվում երաժշտությունը, և ովքեր են ստեղծում ու հորինում երգը: Դրանք ոչ միայն կոմպոզիտորներն են, այլև՝ ժողովուրդը: Ավելին, նրանք դիմանկարների և հնչած մի քանի նոտաներից անխալ ճանաչեցին թե՛ երգը, թե՛ հեղինակին:

«Կաթալիկ» (Կոմիտաս) և «Верьте мне музыку» (Ա. Բաբաջանյան) գեղեցիկ երգերը ոգևորությամբ կատարելուց հետո երեխաները մոտեցան հաջորդ՝ երաժշտական գործիքների կանգառին: Նախ նրանց դիմավորեց ջութակը, որին բոլորը քաջ գիտեին (ջութակը ստեղծել են իտալական վարպետները, 16-րդ

դարում, այն փոքրիկ է, ունի 4 լար և հնչելու ձայն): Նրանք սիրով լսեցին փոքրիկ ջութակահար Դանիելին:

Ունեն 50 ճեմնակ ատամ, Ան ատամներ՝ 35, Ատամներս իրարով տամ, Դուք կլսեք երգ անուշիկ:

Երեխաներն իսկույն կռահեցին, որ խոսքը դաշնամուրի մասին է, ապա դաշնամուրին մոտեցավ փոքրիկ դաշնակահարուհի Էլիանան, ով իր կատարումով ուրախացրեց ընկերուհիներին:

Երրորդ հյուրն ակորդեոնն էր, և Հայկի ակորդեոնի զիլ հնչյուններն իրենց ելևէջումներով գրավեցին բոլորի ուշադրությունը:

- Տրիո՛ (ջութակ, դաշնամուր, ակորդեոն), ահա և մենք ունենք խումբ,- ուրախ բացականչեցին երեխաները և «Թող լինի միշտ արևը» երգով ու պարով հրաժեշտ տվեցին փոքրիկ երաժիշտներին:

Երեխաներն արդեն հայտնվել էին պարերի աշխարհում: Սուներով մարտական պարին հաջորդեց հայկական ավանդական խորխտ «Քոչարին»:

Քանի որ փոքրիկ դերասաններին հաջողվեց իրենց երգով, նվագով և պարով ուրախ ժամանակ, ժպտ ու բարձր տրամադրություն պարզել հանդիսատեսին, նրանց հաճելի անակնկալ մատուցվեց. դա համով ու գեղեցիկ ձևավորված երաժշտական տորթն էր: Ավելի քան համոզված են, որ ուսուցչուհի Ն. Թովմասյանը հասել էր իր նպատակին. երեխաները ձեռք էին բերել բեմում ազատ, անկաշկանդ զգալու կարողություն, բեմական խաղը պարզ է, անկեղծ ու անմիջական: Ուրախալի է, որ երեխաներն ունեն ռիթմի զգացողություն, երաժշտության բնույթին համապատասխան մարմնի ազատ և անկաշկանդ շարժումներ կատարելու կարողություն: Նրանք վստահություն էին ձեռք բերել սեփական ուժերի հանդեպ:

Շատ կարևոր է և այն փաստը, որ ուսուցչուհին կարողացել էր երաժշտության միջոցով բարձրացնել աշակերտների հայրենասիրական ոգին: Ցանկալի է, որ այս և նման միջոցառումները շարունակական լինեն:

Ռ. ՄԵԼՈՒՄՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ ԶՐՈՒՅՑ

Բախտի բերումով վերջերս հաճախ են լինում Ռուսաստանի հայաշատ Կրասնոդար քաղաքում: Եվ կասե՛ի՝ միշտ էլ, բոլոր այցերի ժամանակ հետաքրքրվում են տեղի հայկական համայնքի գործունեությամբ: Այս անգամ էլ ինձ հետաքրքրեց՝ արդյոք չի՞ թուլացել հեռավոր ավերումն ապրող հայության զարկերակը:

Աղջիկս՝ Երազիկ Հարությունյանը, հայկական համայնքի ակտիվ անդամներից է, բազմակողմանի լծված նրա բոլոր միջոցառումներին:

Մի օր նա ասաց, որ ինձ կտանի Սբ. Սահակ, Սբ. Մեսրոպ եկեղեցուն կազմակերպվելու հոգևոր համերգին: Դա ինձ համար մի անմոռանալի երեկո էր: Ուզում եմ մշել նաև, որ այդ հոյակապ շքեղաշուք եկեղեցին կառուցել է մեծ հայ Կարեն Ներսեսի Գրիգորյանը: Նրա հովանավարությամբ կառուցված այդ սրբավայրը տեղի հայերի համար դարձավ սրբավայր, հավաքատեղի, որտեղ միշտ մարդաշատ է օրվա բոլոր ժամերին: Տեղի հայերը հիացմունքով են խոսում բարերարի մասին և մշում, թե ինչքան մեծ գործեր է ամուսնացել, որ քաղաքի հայությունը միշտ հայ մնա:

Երեկոն հիասքանչ էր: Եկեղեցին

ունի երգչախումբ՝ գեղեցիկ ու երիտասարդ հայ տղաներից ու աղջիկներից կազմված: Դահլիճը լեցուն էր հայերով (եկել էին և ռուսներ): Հայրենիքից հեռու եկեղեցու կամարների տակ ծորում էր հայ երգը՝ «Չարթի, լաո», «Կռունկ», «Ծիծեռնակ», «Հորովել» և այլն:

Բոլորս լուռ լուռ էինք, և ես հասկացա, թե ինչ են արտահայտում իմ ազգակիցների արտասովոր աչքերը: Նրանցից ով հայրենիքի որ անկյունը հիշեց այդ պահին:

Ես չկարողացա պատնեշել ուրախությունս. ինչքան լավ է, որ օտար ավերում էլ կան մարդիկ, ովքեր չեն թողնում, որ տարագիր հայերը հեռանան իրենց արմատներից: Թերևս ես կասեի այդ մեծ գործի առաջամարտիկները տեղի հայրենամարտի մարդիկ են:

Դրանցից մեկն էլ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր-Դանիելն է (Վարդան Կուկույան):

Ես ցանկացա իմ տպավորությունը կիսել ու գրուցել նրա հետ: Նա ընդառաջեց իմ ցանկությանը: Ավելին, երբ իմացավ, որ Արցախից եմ, սիրով ու ջերմ ընդունեց ինձ: Իսկ հետո էլ իմանալով, որ համայնքում սեր ու հարգանք վայելող աղջկաս՝ Ե. Հարությունյանի մայրն են, ավելի

ջերմացավ. «Հոյակապ, հիասքանչ դուստր ունեք, հայ ու հայանվեր: Շնորհակալություն Ձեզ դրա համար»: Եվ մենք սկսեցինք զրուցել:

Նա արմատով Կիլիկիայից է և ուրախ է, որ իր նման երրորդ, չորրորդ ժառանգներով հայերը չեն հեռացել իրենց արմատներից: Չնայած իմ երկյուղածությանն ու նրան իմ հարցերով չճանաբեռնելու ցանկությանը, նա ծավալվեց և գրույցը խոր ու իմաստալից ուղիով տարավ:

Դրանից ես ուրախացա և բազմաթիվ հարցեր տալով՝ ստացա հոգեթով պատասխաններ:

Ես հարցրի, թե հայկական համայնքը Ռուսաստանում իրեն ինչպես է զգում: Նա ասաց, որ համայնքը և հայերը երկի թե ամենաարտոնյալներն են Ռուսաստանում, քանզի երկու ժողովուրդների բարեկամությունը զալիս է դարերի խորքից, և այսօր էլ հայերն իրենց գործունեությամբ ազատ են այս երկրում: Հաստատում է Ռուսաստանը այն երկրներն են, որոնք կապված են իրար քրիստոնեական հավատքի ամուր կապերով:

Զրույցի ընթացքում ես հանդգնեցի, թե ինչքան մեծ սեր ու պատրաստակամություն ունի նա հային հայ պահելու գործում:

Քիչ հետո նա ավելացրեց. «Ես համոզված եմ, որ Արարատն իր շրջապատով կպատկանի Հայաստանին վաղ թե ուշ, և մենք էլք կունենանք դեպի ծով: Ժամանակի ընթացքում Թուրքիան կխեղդվի մեր ժողովրդի թափած արյան հիշողությամբ»:

Իմ այն հարցին, թե լինելով բազմակողմանի զարգացած մարդ (նա պատմական գիտությունների թեկնածու է, դասախոսում էր Կրասնոդարի համալսարանում, պատմության բաժնի ղեկավար էր, տիրապետում է շատ լեզուների, գրքերի հեղինակ է), ի՞նչն էր նրան բերեց եկեղեցի: Արդյո՞ք մեծ հավատը Աստծո նկատմամբ, թե՛ ավելի հոգեպես ծառայելու իր ժողովրդին:

Նա պատասխանեց. «Եթե միայն հավատը լիներ պատճառ, ես կարող էի գնալ ռուսական եկեղեցի: Դա ինձ համար երկի թե ավելի պատվաբեր կլիներ, Բայց...»: Այստեղ նա մի պահ խորհեց ու երկի զարմացավ իմ այդքան հետաքրքրասիրությունից, ժպտաց ու շարունակեց. «Բայց ես այստեղ եմ ոչ թե փառքի համար, և հավատը զգեստ չէ, որ կամ համես կամ փոխես: Դա իմ մեջ է, իմ էությունը: Ես առավտից երեկո արդթում եմ իմ ժողովրդի համար՝ մի կողմ

դնելով իմ գիտելիքները, աշխատանքը: Եթե դու հայ ես, իսկական հայ, դա մեծ պատասխանատվություն է: Եվ կասե՛ի՝ եկեղեցին այն հանգրվանն է, որ թույլ է տալիս ու օգնում պահպանել ինքներս մեզ»:

Նա մեծ ոգևորությամբ է խոսում Արցախի ու արցախցու մասին. «Փառք ու պատիվ նրան, հերոսական ժողովուրդ է, արյան գնով պահեց հող հայրենին, թույլ չտվեց, որ կրկնվի անցյալ դարի ոճրագործությունը: Ես հեռվում աղոթում էի, որ Աստված ուժ ու հավատ տա մեր քաջարի մարտիկներին»:

Տեղի հայերը հիացմունքով են խոսում Տեր հոր մասին, հիանում նրա հայրենամարտի գործունեությամբ, մեծարում նրան: Հեռվից հեռու նա ակնդետ հետևում է իր ժողովրդի առաջընթացին, ուրախանում նրա հաջողություններով:

Մեր զրույցը նա եզրափակեց հետևյալ խոսքով. «Համոզված եմ, հայը իր խելքով ու իմաստությամբ ժամանակին աշխարհում կգրավի իր պատվավոր տեղը»:

Էմմա ԲԱԼԱՅԱՆ
Գ. Աշան

ՄԱՐԶԱՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՏՎՈՐՈՒՄԸ ԱՐՑԱՄԻ ԲԱՐԲԱՌԻ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Յուրաքանչյուր լեզվի մեջ ապրում է մի ժողովրդի պատմություն, ազգային հոգեբանություն: Ժողովրդի մտածողությունը ճանաչվում է հատկապես դարձվածքներով, որովհետև դրանք խոսքի մշակման ու վերահմաստավորման երկար ճանապարհ անցած կառույցներ են:

Հայի ազգային բնավորության ամենաբնութագրական գիծը հայրենասիրությունն է: Ղարաբաղցու համար հայրենասիրությունը սոսկ գաղափար չէ: Այն կենսակերպ է, հոգեբանություն ու եկություն, որը սկսվում է հայրենի հողի, քրի պաշտամունքից, ապրում խորը հավատով ու աստվածապաշտությամբ, արտահայտվում արդարության հանդեպ պատկառանքով, զենքի զնահատումով, թշնամու հանդեպ արդարացի ատելությամբ: Արցախյան դարձվածքներում արտահայտված է զարաբաղցու հոգին՝ հայրենի լեռների նման հպարտ, կոպիտ, բնաշխարհի նման հարուստ, զեղեցիկ ու մաքուր:

Հորը զարաբաղցու համար սրբություն է և ներշնչանքի անսպառ աղբյուր: «Հող» բառով հարուստ են մեր դարձվածքները: Այսպես օրինակ՝ հայրենիքի կարողը զարաբաղցին արտահայտում է «վրէղը ծիքը տալ» (բոլոր օրինակները վերցված են Ա. Սարգսյանի «Ղարաբաղադի բարբառը» բառարանից) դարձվածքով: Կամ՝ «վրէղու ծնունդ», նշանակում է՝ մարդ արարած, «վրէղը չըրչարել»,

կիսականանք՝ հողը լավ մշակել: Այս օրինակները կարելի է շարունակել. «Վրէղը նմանը ծնալ չի» (աննման է, արտասովոր է), «Վրէղը նալի յա» (անհրաժեշտ քանակությամբ սերմացու չի ցանված), «Վրէղը վրէթնիլ» (անօրինակակնություն տարածել) և այլն:

«Սար» բառը մեր պատկերացումով ուժի, հպարտության, զեղեցկության իմաստ ունի: Օրինակ՝ «սարեն ծաղեգ» (հիանալի, ճարպիկ), «սարու նըման» (հաղթանդամ) կամ՝ «սարու նըման դըլվումը վրէմը կենալ» (մեկին ուժեղ՝ անընկճելի պաշտպան լինել), «սարը կարել չըս չըվալումը կյեղիս», ինչը նշանակում է՝ մեծ բանը հնարավոր չէ թաքցնել և այլն:

Դեպի ճշմարիտ հաղթանակ տանող ճանապարհը հնարավոր է անցնել միայն խորը հավատով: Մեր քայլերում մենք միշտ կարևորել ենք Աստուծո օրհնությունը: Պատահական չէ, որ Ղարաբաղի բարբառը «աստուծ» (աստված) և «խաչ» բառերով ունի 100-ից ավելի դարձվածքներ, որտեղ երևում է զարաբաղցու հոգևոր հզորությունն ու աստվածապաշտությունը: Բերենք մի քանի օրինակներ. «Աստուծ հաց տըվօղեն հացը բօլ-բօլ ա անում» (Բարի, առատաձեռն մարդը միշտ շահում է), «աստուծ մաչին նըստած» (զեղեցիկ, հիասքանչ, առատ), «Աստուծ մըլե՛տ ա» (մի ելք կգտնվի), Աստուծ մի՛ն տըղեղա կըրտում ա, մի տըղեղա տամ» (Դժբախտությունն ու բախտավորությունը հաջորդում են իրար), «ըստուծեն փեշկը փըռնել» (հույսը չկորցնել), «ըստըծու դադաստան» (արդար դատաստան), «ըստըծու հըղե» (բարություն, արդարություն), «խաչավ-խըչըմանավ յօր օնել» (մեկին շատ հարգել), «խաչը առանց դեր ճուր ըղնել» (անօրեն բան կատարվել) և այլն:

Յավոք, մեր ժողովուրդը ապրելու իրավունքը միշտ ստիպված է եղել նվաճել զենքի ուժով: «Թօր, թօփ, թվանք, գյուլլա» բառերը մշտապես հայտնվել են գործուն բառապաշարի ոլորտում, ծնունդ տվել բազմաթիվ դարձվածքների: Դրանք հիմնականում կրում են ուժի, սպառնալիքի, կռվի, վտանգի իմաստներ: Օրինակ՝ «թօրը աչ էլ կըտըլ, ծխ էլ» (ուժեղ, ազդեցիկ լինել), «թօրեն սօր վախտը» (ուժերի, իշխանության ծաղկուն շրջան), «թօրան արուն կաթել» (վայրագ լինել), «թօր-թվանգ կապել» (զինվել, զենք վերցնել), «հարյուր թօփ տըրաքե» (ինչ էլ լինի, չնայած խանգարող հանգամանքների), «թօփեն տըմանալ (սպառնալիքները հանդուրժել), «թվանգյին լուլան բիդի տես տըմալ (իրավիճակը բարդանալ, վտանգավոր դառնալ), «թվանգ քաչիլ» (հրացանով սպառնալ) և այլն, իսկ «թօփու գյուլլա» դարձվածքը բնորոշում է թմբկի ու ամրակազմ երեխային:

Ղարաբաղցին խորապես ճանաչել ու ատել է թուրքին: «Թուրք» բառը մեր մտածո-

րության մեջ կապվում է բոլոր գորշ ու բացասական երևույթների հետ: Թուրքի հանդեպ մեր վերաբերմունքը երևում է հետևյալ դարձվածքներում. «թօրքեն նըիտ հընգըրօթուն ըրա, մըհակը ծըրքատ վեր մէլ տինիլ» (միշտ պետք է գգուշանալ թուրքից), «թօրքեն չըքեւանը թակիս վէչ, աչնա չի տըղեմալ» (թուրքի հետ չպետք է մեղմ վարվել), «թօրքու գառի» (տգեղ, այլանդակ), «թօրքու թըռըմասկ» (տգեղ երեխա), «թօրքու մըթիլ» (ճմրթված, կեղտոտ անկողին), «թօրքու ուստա» (անորակ աշխատող վարպետ), «թօրքու փըսա» (ուշ-ուշ հայտնվող բարեկամ) և այլն: «Թուրք» բառը հաճախ ասոցացվում է դուշման բառի հետ, ինչպես՝ «թօրքու տօն-դուշմանու տօն»:

Ղարաբաղցուն «պօրտը կըմվումնա վեր ընգուն» (Ղարաբաղցին հնուտ կռվող է). մի ժողովրդի ամբողջ կենսագրություն կա այս դարձվածքում: Արցախցին գիտակցեց, որ՝ «կըմվումը չամենչ չըն պիժեմուն», բայց և չնռաջավ, որ՝ «կըռըվ անէլը չի տըրըմըրթօթուն», «յէխնէլնա տըրըմըրթօթուն» (կարևորը արդյունքն է և իր տոնացույցում ամրագրեց Մայիսյան եռատոն:

Ռենա ՄՈՎՍԻՍՅԱՆ
Սյրեփ. «Գրիգոր Նարեկացի»
համալսարանի դասախոս

ՈՒՋՄԱԿԱՆԱՃՎԱԾ ԿՐՈՍԱՎԱՋՔԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Ստեփանակերտի հ. 2 հիմնական դպրոցին կից մարզադաշտում տեղի ունեցան Մայիսյան եռատոնին նվիրված՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների դպրոցականների միջև ռազմականացված կրոսավազքի հանրապետական մրցումներ: Մասնակցում էին ԼՂՀ բոլոր շրջանների և Ստեփանակերտ քաղաքի հավաքական թիմերը: Յուրաքանչյուր թիմում ընդգրկված էր հինգ տղա:

Մրցումների ծրագրով 17000 կրոսավազքի տարածության վրա նախատեսված էին հետևյալ փուլերը՝

- ձգումներ պտտածողի վրա,
- ավտոմատի ոչ լրիվ քանդում, հավաքում,
- պահեստատուփի լիցքավորում,
- հրաձգություն օդամղիչ հրացանից,
- նռնակի նետում նշանակետին,
- արգելագոտու հաղթահարում հակազագերով,
- 20 կգ-անոց փամփուշտների արկի տեղափոխում:

Թիմային հաշվարկով մրցանակային տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ.

- 1-ին տեղ - Մարտունու շրջանի հավաքական թիմ,
- 2-րդ տեղ - Ստեփանակերտ քաղաքի հավաքական թիմ,
- 3-րդ տեղ - Մարտակերտի շրջանի հավաքական թիմ:

Մրցանակային տեղեր գրաված թիմերը ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից պարգևատրվեցին դիպլոմներով, հուշանվերներով, իսկ թիմերի բոլոր անդամները՝ համապատասխանաբար, 10.000, 7000 ու 5000-ական դրամ գումարով:

Անհատական հաշվարկով լավագույն արդյունքները ցույց տվեցին՝

Շահեն Մուսայեյանը՝ Մարտունու հ. 2 հիմնական դպրոցի և Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցի աշակերտներ Միեր Ավագիմյանն ու Արտակ Պետրոսյանը, որոնք կրթության և գիտության նախարարության կողմից արժանացան պատվոգրերի, ձեռքի ժամացույցների ու դրամական պարգևների:

Դրամական խրախուսանքի արժանացան նաև մրցանակային տեղեր գրաված թիմերի մարզիչները:

Պարգևատրումները կատարեց ու հաղթողներին շնորհավորեց կրթության և գիտության նախարարության ՌՀ, ՖԴ և ՀԿԿԿ բաժնի վարիչ Վ. Գրիգորյանը:

Հաղթող թիմերը և լավագույն աշակերտները խրախուսվեցին նաև ԼՂՀ պաշտպանության նախարարության կողմից: Պարգևատրումները կատարեց և հաղթողներին շնորհավորեց ու հետագա հաջողություններ մաղթեց ԼՂՀ պաշտպանության նախարարության ՌՀԴ և ՀԿԿԿ բաժնի պետ, գնդապետ Բ. Մուրադյանը:

Սուրադ ՀԱՅՐԱՄԱՆՅԱՆ

ԲԱՍԿԵՏԲՈՒՆ ՏՈՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՌԱՏՈՆԻՆ

Ապրիլի 25-ից մայիսի 1-ը Ստեփանակերտի քաղաքապետարանի մանկապատանեկան մարզադպրոցի կողմից անցկացվել է բասկետբոլի բաց առաջնություն՝ նվիրված Մայիսյան եռատոնին: Մասնակցում էին պատանիների և աղջիկների տարբեր տարիքային խմբերի 18 թիմեր:

Մայիսի 1-ին Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ եզրափակիչ խաղը և արդյունքների ամփոփման ու պարգևատրման արարողությունը: Ներկայացան նախ

ցին «Արցախ-1» (մարզիչ՝ Սուսաննա Աստատյան), «Յուլիտեր» (մարզիչ՝ Էդուարդ Առուշանյան), «Տրիումֆ-2» (մարզիչ՝ Գարիկ Շահնազարյան), աղջիկների տարիքային երկու խմբերում՝ «Նիկա-1» (մարզիչ՝ Գեորգի Շահնազարյան), «Արցախ-1» (մարզիչ՝ Սուսաննա Աստատյան) թիմերը:

Թիմերը պարգևատրվեցին մարզադպրոցի պատվոգրով, իսկ մասնակիցներն ու մարզիչները՝ հուշանվերներով: Եռատոնի կապակցությամբ դրամական պարգևով և պատվոգրերով



մեկ թույլ լուծումը հարգեցին Հայրենական մեծ և Արցախյան պատերազմներում զոհված հայ քաջորդիների հիշատակը և ծաղիկներ խոնարհեցին դպրոցի զոհված ազատամարտիկների հուշատախտակին: Մարզիկներին շնորհավորելու էին եկել մարզադպրոցի սպորտային պարերի բաժանմունքի սաները (մարզիչ՝ Մարիմա Վարունց), ովքեր իրենց զեղեցիկ պարերով բարձրացրին բոլորի տրամադրությունը:

Պատանիների երեք (1998-1999թթ., 2000-2001թթ., 2002-2003թթ. ծնվածների) տարիքային խմբերում 1-ին տեղ գրավե-

պարգևատրվեցին նաև մարտ ամսին Ստեփանակերտում անցկացված՝ 2000-2001թթ. ծնված պատանիների բասկետբոլի առաջնությունում 1-3-րդ մրցանակաբաժին տեղեր գրաված «Յուլիտեր», «Տրիումֆ», «Նիկա» թիմերը:

Մարզադպրոցի տնօրեն Եմիլ Ղուլիանցի պատվով շնորհավորեց բոլորին՝ եռատոնի կապակցությամբ՝ ասելով, որ մարզիկները Արցախի հպարտությունն ու պատվին են և մաղթեց նորամուտը նվաճումներ:

ՆԵՂԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլոտ» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 12.05.2014թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: